Հակագենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում

Հետազոտող հեղինակներ՝

Մարիամ Խալաթյան

Արփի Մանուսյան

Նվարդ Մարգարյան

Խմբագիր համահեղինակ՝

Աննա Ժամակոչյան

Հակագենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում

Սոցիոսկոպ ՀԿ
2020

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Հայաստանում կանանց հիմնադրամ»–ին նման զգայուն թեմայի՝ հակագենդերային արշավների և դիսկուրսների ուսումնասիրությունը «Սոցիոսկոպի» հետազոտական թիմին վստահելու և աշխատանքի ընթացքում աջակցելու համար:

Հետազոտող հեղինակներ՝

Մարիամ Խալաթյան

Արփի Մանուսյան

Նվարդ Մարգարյան

Խմբագիր համահեղինակ՝

Աննա Ժամակոչյան

Սրբագրումը՝ Ազնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝ Նորա Գալֆայանի

Վերլուծական զեկույցը հիմնված է սոցիոլոգիական հետազոտության վրա, որն իրականացրել է «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ–ն «Հայաստանում կանանց հիմնադրամ»–ի ֆինանսական աջակցությամբ:

filia die frauenstiftung.

Auswärtiges Amt

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Բովանդակություն

Հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը՝ համառոտ **5**

ՄՈՒՏՔ. Հակագենդերային արշավների համընդհանուր հետնախորքը և տեղական միտումները **10**

ԲԱԺԻՆ 1. Գենդերային հիմքով հիմնախնդիրների և կանանց իրավունքների մերժումը **34**

ԲԱԺԻՆ 2. ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ հարձակումների զանգվածայնացումը **74**

ԱՄՓՈՓՈՒՄ **115**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **125**

Այս հետազոտության նպատակն է հավաքագրել և վերլուծել հետհեղափոխական Հայաստանում սեռականության և գենդերային հարցերի շուրջ առկա հակագենդերային (ներառյալ հոմոֆոբ) հռետորաբանությունը և դիսկուրսիվ միջոցները, որոնցով թիրախավորում են կանանց և ԼԳԲՏ հարցերով զբաղվող իրավապաշտպաններին ու ակտիվիստներին, առաջադիմական քաղաքացիական հասարակությանը՝ ձգտելով նեղացնելու վերջիններիս գործունեության տարածքը, փորձելով այս թեման դարձնել հետհեղափոխական Հայաստանի կառավարության դեմ մարտնչելու զենք և խաթարել ոլորտում հնարավոր բարեփոխումների առաջխաղացումը:

Սեռականության, մասնավորապես կանանց և ԼԳԲՏ հարցերը դիտարկելով իբրև զգայուն և իշխանական նպատակահարմարության տեսանկյունից շահարկվող հարցեր, միաժամանակ ներկայիս գաղափարական խմորումների արտահայտիչ ուղղություն (Անդրեասյան և այլք, 2019)՝ հետազոտությունը դրանք դիտարկում է միջազգային ժողովրդավարության (իրավապաշտպանության) ճգնաժամի և տեղական սոցիալ–քաղաքական համատեքստերի, հակագենդերային և դավադրապաշտական արշավների հետ փոխկապակցելով: Վերլուծական աշխատանքում հակագենդերային արշավներ ասելով՝ նկատառվել են հակահիրավապաշտպան և հետադիմական այն արշավները, որոնց հարձակումների կիզակետը գենդերային հավասարության հարցն է, ինչի հետ անքակտելիորեն կապված են հոմոֆոբ տրամադրությունների գեներացման նպատակը և ԼԳԲՏ մարդկանց լուսանցքում պահելու ձգտումը:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առանձնացրել ենք հետազոտական հետևյալ հարցերը.

1 | Ի՞նչ դիսկուրսիվ միջոցներ և գաղափարաբանական շրջանակներ են ընկած տեղական և միջազգային հակագենդերային արշավների հիմքում:

2 | Ի՞նչ քաղաքական շահեր և օրակարգեր ունեն տեղական հակագենդերային արշավների թիկունքում կանգնած անձինք, խմբավորումները և ուժերը:

3 | Ի՞նչ ուղերձներ և գաղափարներ են շրջանառվում սեռականության և գենդերի հարցերի շուրջ Հայաստանում կազմակերպված արշավների կողմից. դրանք ի՞նչ առանձնահատկություններ և ընդհանրություններ ունեն գլոբալ հակագենդերային արշավների համեմատ:

4 | Ինչպե՞ս են սեռականության և գենդերային հարցերի հանրային քննարկումները հակագենդերային արշավներում ներգրավվածների կողմից կապվում 2018 թ. հեղափոխության և նոր կառավարող ուժի հետ:

5 | Հետհեղափոխական Հայաստանի կառավարող ուժն ինչպե՞ս է արձագանքում հակագենդերային արշավներին և իր հերթին ի՞նչ ուղերձներ ու գաղափարներ է ձևակերպում սեռականության և գենդերի վերաբերյալ:

6 | Ինչպե՞ս են ազդում հակագենդերային արշավները Հայաստանի առաջադիմական, իրավապաշտպանական քաղաքացիական հանրության և Հայաստանում բարեփոխումների ընթացքի վրա:

Հետազոտական հարցերը դիտարկելով որպես ուղենիշ՝ հավաքագրել և երկրորդային վերլուծության ենք ենթարկել թեմայի շուրջ արդեն իսկ արված տեղական և միջազգային բազմաթիվ հետազոտություններ և վերլուծություններ: Այնուհետև իրականացրել ենք հետհեղափոխական Հայաստանում սեռականության և գենդերի հարցերի շահարկումների, գենդերային հարցերով զբաղվող կին իրավապաշտպանների և ակտիվիստների նկատմամբ դիսկուրսիվ և իրական թիրախավորման դեպքերի քարտեզագրում՝ առանձնացնելով մոտ երեսունը: Քարտեզագրումն իրականացվել է առցանց մեդիայի և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով՝ առանձնացնելով հետհեղափոխական շրջանում հանրային և քաղաքական առավել լայն արձագանք ստացած դեպքերը:

Այդուհանդերձ, այս վերլուծական աշխատանքում կանդրադառնանք դիսկուրսիվ առումով առավել խիտ և տիպական դեպքերից տասին, որոնք նկարագրված են *Աղյուսակ 1*–ում:

Աղյուսակ 1. Ուսումնասիրված դեպքերը

Տարեթիվ	Դեպք	Նկարագիր	Հղում
2018 թ. օգոստոս	Հարձակում ԼԳԲՏ ակտիվիստների վրա Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում	2018 թ. օգոստոսի 3–ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳԲՏ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության են ենթարկվել նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20 բնակիչների կողմից: Բնակիչները տուժողներից պահանջել են հեռանալ գյուղից, հարվածել են նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով՝ պայմանավորված վերջիններիս իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ: Միջադեպին հետևել են կազմակերպված աջակցություն, բռնությունը խրախուսող միջոցառումներ:	https://bit.ly/2Wl66zx
2018 թ. հոկտեմբեր	ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի չեղարկումը Երևանում	«Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ–ն, որը հանձն էր առել կազմակերպել Հայաստանում «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը 2018 թ. նոյեմբերի 15–18–ը, հայտարարություն է տարածում ֆորումի անցկացման չեղարկման մասին: Չեղարկման հիմքում ընկած էին համացանցում անընդհատ հնչեցվող սպառնալիքները, կազմակերպված հետապնդումները և ֆորումի վրա հավանական հարձակումների ռիսկերը, ինչպես նաև ոստիկանության՝ պաշտպանելու լիարժեք պատրաստակամության բացակայությունը:	https://bit.ly/3fDCKUm https://bit.ly/3clHITW
2018 թ. նոյեմբեր	«Նոյի հպարտություն» սադրանքը. Երևանում ԼԳԲՏ շքերթի մասին տեսահոլովակների հրապարակում	2018 թ. նոյեմբերին Երևանի տարբեր շինությունների պատերին հայտնվում են գունավոր պաստառներ, որոնց վրա գրված է. «Նույնասեռականները Փաշինյանի կողմից են»: Պաստառի վրա նշված է նաև Noah pride նախաձեռնության անունը: Noah pride–ի թիկունքում կանգնած խումբը փորձում է իրեն ներկայացնել որպես ԼԳԲՏ խնդիրներով զբաղվող հեղինակավոր միջազգային կազմակերպություն: Նոյեմբերի 19–ին այս նախաձեռնությունը տարածում է մամուլի հաղորդագրություն՝ լուսանկարներով և տեսանյութով, որ նոյեմբերի 16–17–ին իրենք ակցիա են իրականացրել Երևանում՝ «Համարձակ քայլիր, Նիկո՛լ» և «Բարև՛, Երևա՛ն» կարգախոսներով:	https://bit.ly/2YI7sWq
2019 թ. մարտ	ԱԺ–ՔՀԿ համագործակցության հարթակում իրավապաշտպան Լարա Ահարոնեանի ելույթը	2019 թ. մարտի 8–ին «Քաղաքացիական հասարակություն — Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառման ժամանակ իրավապաշտպան, Կանանց ռեսուրսային կենտրոնի համահիմնադիր Լարա Ահարոնեանը խոսեց Հայաստանում կանանց և աղջիկների հանդեպ բռնության, օրենսդրական դաշտի թերությունների և կանանց տարբերությունների մասին՝ լեսբի, բիսեքսուալ և տրանս, մայրանալ չցանկացող, սահմանամերձ բնակավայրերում ապրող, աղքատ, եզդի, հաշմանդամություն ունեցող կանանց մասին:	https://bit.ly/2yISIfu https://bit.ly/35KL2W2
2019 թ. ապրիլ	Տրանսգենդեր կին, իրավապաշտպան Լիլիթ Մարտիրոսյանի ելույթը ԱԺ ամբիոնից	2019 թ. ապրիլի 5–ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի նախաձեռնությամբ և ՄԱԿ–ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպել էր խորհրդարանական լսումներ՝ «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ–ի համընդհանուր պարբերական դիտարկում»: Լսումների ժամանակ ելույթ ունեցավ տրանսգենդեր կին, «Իրավունքի կողմ» ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը՝ խոսելով տրանսգենդեր համայնքի անունից ու փորձառությունից, բարձրաձայնելով համայնքի խնդիրները:	https://bit.ly/35Fhxoy https://bit.ly/35KKVtA
2019 թ. մայիս	«Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսի խափանումը	2019 թ. մայիսի 4–ին «Բուկինիստ» սրճարանում «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ–ն կազմակերպել էր «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսը, որ Լինդա Վալվուրդ Ջիրարդի նույնանուն գրքի թարգմանությունն է: Գիրքն իրազեկում է երեխայի մարմնի վտանգավոր հպումների մասին՝ նպատակ ունենալով կանխարգելելու երեխաների նկատմամբ սեռական բռնությունը: Նախատեսված է 3–6 տարեկան երեխաների ու նրանց ծնողների համար:	https://bit.ly/2WLd3sE https://bit.ly/2SRjgCb
2019 թ. հուլիս	Արշավ լրագրող Լյուսի Քոչարյանի և նրա նախաձեռնած «Բռնության ձայնը» շարքի դեմ	2019 թ. հուլիսին Հանրային ռադիոյի լրագրող Լյուսի Քոչարյանը «Հետք» հետաքննական լրագրության կայքի հրապարակած «Մազերն են մեղավոր» վերնագրով՝ չեխ աղջկա հանդեպ կիրառված սեռական ոտնձգությունների մասին հոդվածն իր ֆեյսբուքյան էջում հանրայնացնելուց հետո ստանում է բազմաթիվ նմանօրինակ նամակներ տարբեր կին օգտատերերից: «Բռնության ձայնը» էջով նա սկսում է անանուն հանրայնացնել սեռական ոտնձգությունների և բռնության ենթարկված բազմաթիվ կանանց իրական պատմությունները՝ այդպիսով լսելի դարձնելով հասարակությանը:	https://bit.ly/2SSLlZQ
2019 թ. նոյեմբեր	«ՀուՀանք ու Հանգ» ներկայացման վրա հարձակում	2019 թ. նոյեմբերի 2–ին Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանամերձ տարածքում տեղի ունեցավ «Ժամանակակից պարագրության լաբ»–ի նախաձեռնած պերֆորմանսը: Այն 1920–ականների հայ ֆուտուրիստ հեղինակների վերընթերցում էր՝ համադրելով ժամանակակից պարը, ձայնային արվեստը, հանրային տարածքում մարմնի ներկայությունը: Ներկայացումը, ինչպես մասնակիցներն են մեկնաբանում, նաև մշակութային հեղափոխության ամրագրման փորձ էր:	https://bit.ly/2STVg19 https://bit.ly/3fAC1DB
2018–2020 թթ.	«Բաց հասարակության հիմնադրամներ — Հայաստան»–ի գործունեության թիրախավորում	2018 թ. հեղափոխությունից հետո ակտիվացավ «Բաց հասարակության հիմնադրամներ — Հայաստան»–ի գործունեության դեմ արշավը: Ժամանակի ընթացքում այն ավելի համակարգային դարձավ, երբ ձևավորվեց ՎԵՏՕ հասարակական–քաղաքական շարժումը: ԲՀՀ–Հայաստանը և նրա հետ առնչվող կազմակերպություններն ու անհատները մեղադրվեցին «ազգը վաճառելու», «հակապետական» գործունեության, «այլասերման», «ԼԳԲՏ քարոզի» մեջ՝ շարունակաբար հայտնվելով ատելության խոսքի ու բռնության քարոզի կիզակետում:	https://bit.ly/2Aj2o0R https://bit.ly/2Z1FzsT
2019–2020 թթ.	Պայքար Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ	Հայաստանի կողմից դեռևս 2017 թ. դեկտեմբերի 28–ին հավանություն ստացած և 2018 թ. հունվարի 18–ին Ստրասբուրգում ստորագրված Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման հարցը հետհեղափոխական Հայաստանում դարձել է աջ պոպուլիստական, հետադիմական, կրոնական և հոմոֆոբ խմբերի կողմից կազմակերպված ամենահնչեղ և շարունակական հակագենդերային արշավի կիզակետը, որի շրջանակում թիրախավորվում են թե քաղաքացիական հասարակության, թե կառավարող ուժի առաջադիմական գործիչները:	https://bit.ly/2zqtwuI

Նշենք, որ ինչպես հետազոտական թիմի, այնպես էլ հետազոտությունը նախաձեռնող կողմի (Հայաստանում կանանց հիմնադրամ) համար սեռականության և գենդերային հավասարության հարցերը օրակարգային են և քաղաքական՝ բառի խորքային իմաստով, այսինքն՝ դրանք ըմբռնվում են որպես Հայաստանի ժողովրդավարական զարգացման և բոլոր մարդկանց արժանապատվության ու հավասարության արդարացի պայքարի էական մաս: Թե՛ հետազոտական թիմի անդամները, թե՛ Հայաստանում կանանց հիմնադրամի անդամները իրենց այս պայքարում տարբեր հաճախականությամբ և ուժգնությամբ բախվում են թիրախավորումների հակագենդերային արշավի հոմոֆոբ և հայրապաշտ խմբավորումների կողմից: Ուստի հարցի ուսումնասիրությունն ինքնին ինչ–որ իմաստով մեր համախոհ գործընկերների և մեր գործունեությանն անդրադառնալու փորձ է:

Աշխատանքը բաղկացած է մուտքից, երկու բաժիններից և ամփոփումից:

Մուտք. Հակագենդերային արշավների համընդհանուր ընդհանրական հետնախորքը և տեղական միտումները վերնագրի ներքո ներկայացված է աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջաններում ծավալվող այն համընդհանուր հակագենդերային գործընթացների քաղաքական հետնախորքը, որի մաս է կազմում նաև հայաստանյան հակագենդերային արշավը: Այս մասում ներկայացված է նաև մեր առանձնացրած տեղական դեպքերից մեկի՝ ԲՀՀ–Հայաստանի դեմ իրականացվող արշավը (տես *Աղյուսակ 1*)՝ որպես առաջադիմական քաղաքական փոփոխությունների դեմ աջ պոպուլիստների պայքարի համակողմանի օրինակ, որում դրսևորվում են Հայաստանի հակագենդերային արշավների հռետորաբանության ընդհանուր գծերը և ներքաղաքական ու աշխարհաքաղաքական նպատակները, որոնց հետագիծը կրկնվում, համալրվում և շարունակվում է մեր ուսումնասիրած մյուս բոլոր դեպքերում:

Բաժին 1. Գենդերային հիմքով հիմնախնդիրների և կանանց իրավունքների մերժումը հատվածում հավաքագրված են հակագենդերային արշավների բոլոր այն դեպքերի ուսումնասիրությունները, որոնք առավելապես առնչվում են գենդերային հավասարության պայքարին, կանանց հիմնախնդիրներին և կին իրավապաշտպանների հանդեպ հարձակումներին:

Բաժին 2. ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ բռնության զանգվածայնացումը մասում առանձնացրել ենք ԼԳԲՏ մարդկանց և նրանց իրավունքների պաշտպանների հանդեպ հարձակումները և ոտնձգությունները՝ հաշվի առնելով ԼԳԲՏ մարդկանց թիրախավորման որոշ առանձնահատկություններ:

Ընդհանուր առմամբ երկու բաժիններում նկարագրված խնդիրները, որոշ տարբերություններով հանդերձ, կապակցված են. քննարկված յուրաքանչյուր դեպքի առնչությամբ ներկայացվում են նաև կառավարող ուժի կամ պետական հաստատությունները ներկայացնող գործիչների առավել ուշագրավ արձագանքները, եթե այդպիսիք եղել են:

Աշխատանքը եզրափակում է *Ամփոփումը*, որում համառոտ ի մի են բերվել հետհեղափոխական Հայաստանում աշխուժորեն ծավալվող հակաժողովրդավարական, հակագենդերային արշավների առաջացրած հիմնախնդիրները:

ՄՈՒՏՔ

Հակագենդերային արշավների համընդհանուր հետևախորքը և տեղական միտումները

Վերջին տարիներին մի շարք արևմտյան և տեղական հետազոտություններ արձանագրում են և վերլուծում հակահիրավապաշտպանական, այդ թվում՝ հակագենդերային արշավների սրընթաց աճը և կնատյաց ու հոմոֆոբ հռետորաբանության քաղաքական ընդարձակումը աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում՝ Լատինական և Հյուսիսային Ամերիկաներում, Աֆրիկայում, Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Այս արշավների տեղական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և համեմատական քննությունը ցույց են տալիս ինչպես դրանց յուրահատկությունները, այնպես էլ հետնախորքում ընկած գաղափարական ընդհանրությունները, ժամանակագրական համընկնումները, հակագենդերային օրակարգ ձևակերպողների քաղաքական կապերը և նրանց ընդհանրական շահերը:

Այսպես՝ ամենատարբեր երկրներում՝ ԱՄՆ–ից մինչև Ռուսաստան, Արևմտյան Եվրոպայի սրտից մինչև դրա կենտրոնական սահման Հունգարիա, հակագենդերային շարժման նախաձեռնողները մեծ առումով պնդում են նույն դրույթը, թե գենդերային հավասարությունը «գաղափարաբանություն» է, որը մտածվել է «ավանդական ընտանիքի» ինստիտուտի խարխլման և «նույնասեռականության քարոզչության» համար (Kováts et al, 2015): Այս պնդումով արդարացվում է առաջադիմական քաղաքացիական հասարակության գործիչների և ակտիվիստների, նրանց իրավապաշտպան գործունեության, ֆեմինիստական խմբերի, ԼԳԲՏ մարդկանց և նրանց իրավունքների, կանանց հավասարության և իրավունքների (մասնավորապես՝ սեռական և վերարտադրողական), ընտանեկան բռնության և խտրականության դեմ պայքարի օրենսդրական կարգավորումների, գենդերային կրթության թիրախավորումն ու մերժումը: Հակագենդերային արշավների այս դրսևորումները, սա-

կայն, ներկայացնում են ավելի խոր քաղաքական հակամարտության և հիմնախնդրի դաշտը և նախանշանը (Kováts et al, 2015, Mouffe, 2018):

Հարցն ընդհանուր առմամբ ազատական ժողովրդավարության ճգնաժամն է և այդ ճգնաժամից բխող աջ պոպուլիստական հռետորաբանության զարթոնքը ԱՄՆ–ում, Եվրոպայում և այլուր, որ համախմբում է հակաժողովրդավար պահպանողականներին (հակագենդերային և հակամիգրացիոն նպատակների շուրջ) և հարցադրում մարդու իրավունքների և հավասարության սկզբունքները, առաջ մղում մշակութային և ազգային «բացառիկության» քաղաքականության օրակարգերը (Kováts et al, 2015)՝ միաժամանակ առաջադրելով տեղական քաղաքական դաշտը գրավելու հարցեր: Հակագենդերային արշավները մեկ հովանու տակ միավորում են կենտրոնից աջ և ծայրահեղ աջ կուսակցությունները, կրոնականներին (տարբեր երկրներում կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները հակագենդերային արշավների ամենաակտիվ նախաձեռնողներն են), պահպանողական նախաձեռնությունները և կազմակերպությունները (Kováts et al, 2015)՝ ընդգրկելով նաև բազմազան փոքր ու մեծ քաղաքական շահեր ու օրակարգեր ունեցող անհատների և խմբավորումներ՝ կախված երկրի սոցիալ–քաղաքական համատեքստից: Եթե խնդիրը դիտարկենք ավելի լայն տեսանկյունից, անհրաժեշտ է, որ առաջադիմական քաղաքական կուսակցությունները և քաղաքացիական հասարակության համայնքներն ինքնանդրադարձ պահանջող հետևյալ հարցադրումն անեն. ո՞րն է քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգի խնդիրը, որի հետևանքով հակագենդերային հռետորաբանությունն ու գաղափարները աջակցություն են ստանում ոչ միայն ծայրահեղ աջականների, այլև հանրության այն շերտերի կողմից, որոնք ընտրություններին ավանդաբար աջակցել են կենտրոնին (Kováts et al, 2015): Հայաստանի համար այս հարցի գործնական նշանակությունը քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգի այն խորքային խնդիրների ուսումնասիրությունն ու ըմբռնումն է, որոնք նպաստավոր պայմաններ են ապահովում աջ պոպուլիստական խմբերի անարգել ամրապնդման և հանրային ընդարձակման համար:

Տարբեր հետազոտություններ փաստում են, որ 2008 թվականից ի վեր Արևմտյան և Արևելյան Եվրոպայում տեղի են ունենում

հակագենդերային հատվածական արշավներ, որոնք առավել շարունակական և հիմնավոր հուն են մտել 2013 թվականից՝ ճիշտ նույն շրջանում, ինչ հայաստանյան քաղաքական օրակարգ է մտել հակագենդերային գործընթացը:

2013 թ. օգոստոսին ՀՀ ոստիկանությունը հրապարակել էր «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որտեղ առաջարկվում էր ավելացնել երկու հոդված՝ պատասխանատվություն նախատեսելով *«ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչության»* համար: Ըստ ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության ներկայացրած հիմնավորումների՝ նմանատիպ փոփոխությունների հիմքում ընկած էր *«հայ ավանդական ընտանիքի մոդելի պահպանման խնդիրը, քանի որ հենց ավանդական բարոյական արժեքների վրա հիմնված ընտանիքն է մեր ազգապահպանության հենասյունը»*[1]: Նախագծի հրապարակումից մի քանի օր անց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հետ կանչեց օրինագիծը՝ հիմնավորելով, որ այն թերի է, և որ այդ խնդիրը դեռևս ոստիկանության առաջնահերթություններից չէ[2]: Այս դրվագը տարածաշրջանում տեղի ունեցող ընդհանուր աշխարհաքաղաքական գործընթացների ներքաղաքական դրսևորումն էր:

Նույն 2013–ին Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի միջև գործող Մաքսային միության ընդլայնման և հակաեվրոպական քարոզչության հետնախորքում ծնողական կոմիտեներ ստեղծվեցին Ուկրաինայում, Ռուսաստանում, Մոլդովայում, ինչպես նաև Հայաստանում: Սրանք այն հետխորհրդային երկրներն էին, որոնք 2013–ին պետք է ընտրություն կատարեին Մաքսային միության անդամակցության կամ Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրման միջև[3]: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, այս բոլոր երկրների ծնողական կոմիտեները կամ

1. A1plus. (2013, օգոստոս 7). Տուգանք՝ «ոչ ավանդական սեռական» քարոզչության համար. Վերցվել է՝ https://a1plus.am/hy/article/75136:

2. Հովհաննիսյան, Ի. (2013, օգոստոս 8). Ոստիկանությունը հետ է ուղարկել ոչ ավանդական սեռական հարաբերություններին վերաբերող նախագիծը. Ազատություն. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/25070379.html:

3. Բաբայան, Ն. (2013, դեկտեմբեր 25). Հակաեվրոպական քարոզչությո՞ւն, թե՞ «գենդերի» դեմ պայքար. Առավոտ. Վերցվել է՝ https://www.aravot.am/2013/12/25/418278/:

դաշինքները[4] ուղղակիորեն փոխկապակցված էին: Տարօրինակ զուգադիպությամբ 2013–ին ձևավորված Համահայկական ծնողական կոմիտեի[5] ասուլիսներն ու հայտարարությունները հաջորդում էին Ռուսաստանում գործող նույնանման կազմակերպության միջոցառումներին[6]: Այսպես՝ 2013–ից Հայաստանում արդեն տեսանելի դարձան կազմակերպված հակաիրավապաշտպան տարբեր միավորումներ ու նախաձեռնություններ, որոնք պարբերաբար քաղաքական և հանրային օրակարգ են սկսում բերել հակագենդերային դիսկուրսը և *«ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզն արգելելու»* օրինագծի գաղափարը՝ փաստացի հասարակության ներսում մարդու իրավունքների պաշտպանության, գենդերային իրավահավասարության և ինքնության հարցերը վերածելով ՌԴ աշխարհաքաղաքական ազդեցության պահպանման և/կամ ուժգնացման հարթակի[7]:

Օրինակ՝ հայաստանյան ծնողական կոմիտեն հռչակեց *«գենդերային հարձակման առջև»* համախմբվելու անհրաժեշտությունը՝

4. Այս շրջանում հակագենդերային «պայքարի» տեսադաշտում էին նաև «Ոչ գենդերային նախաձեռնությանը» և «Մեկ ազգ» ազգայնական–պահպանողական խմբերը:

5. Համահայկական ծնողական կոմիտեն փոխկապվածություն ուներ առավել վաղ՝ 2012–ին Հայաստանում բացված «Պուտին» ակումբների ցանցի հետ, որն իր նպատակն էր հռչակում Վլադիմիր Պուտինի գաղափարների տարածումը և իրականացնում էր Եվրասիական միության ստեղծման (նոր ռուսական կայսրության վերականգնման) պուտինյան նախագծի քարոզչությանը: «Պուտին» ակումբների հետ ծնողական կոմիտեի կապի մասին տես Ջիլոզյան, Ա. (2017). *Գենդերային քաղաքականությունը Հայաստանում. օրենսդրական, հակագենդերային քարոզչության և համայնք ձևավորելու ռազմավարությունների ուսումնասիրություն.* Երևան. Կանանց աջակցության կենտրոն ՀԿ:

6. Բաբայան, Ն. (2013, դեկտեմբեր 25). Հակաեվրոպական քարոզչությո՞ւն, թե՞ «գենդերի» դեմ պայքար. *Առավոտ.* Վերցվել է՝ https://www.aravot.am/2013/12/25/418278/:

7. Այն, որ ՌԴ նախագահ Պուտինի վարչակարգը գենդերային հարցերը և ԼԳԲՏ իրավունքները 2013–ից սկսած դարձնում է ՌԴ աշխարհաքաղաքական ազդեցության գործիքներից մեկը, պարզ է դառնում նաև նրա հանրային ելույթներից: Օրինակ՝ 2013 թ. հունիսին Ֆինլանդիայի նախագահ Սաուլի Նինիստոնի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ նույնասեռականության քարոզի մասին լրագրողի հարցին Պուտինը պատասխանում է, որ «Եվրոպական մի շարք երկրներ այն կարծիքին են, որ երեխաներին պետք չէ պաշտպանել նմանատիպ տեղեկատվությունից, թող չպաշտպանեն, մենք եվրոպացիներին չենք ասում, թե ինչ անեն: Իսկ մենք որոշել ենք, ՌԴ Պետական դուման որոշել է, որ պետք է սահմանափակենք, հետևաբար խնդրում ենք մեր ներքին գործերի մեջ չխառնվել»: Տես RT. (2016, июль 1). *Пресс–конференция Владимира Путина и президента Финляндии по итогам встречи.* По ссылке – https://bit.ly/3c8egR0:

«հանուն ընտանիքի և ավանդական արժեքների պահպանման»[8], և սկսեց արշավ գենդերային հավասարության մասին օրենքի դեմ[9՝] սկիզբ դնելով թե՛ «գենդեր» հասկացության այլևայլ պատեհապաշտական շահարկումներին, թե՛ գենդերային հարցերով զբաղվող առաջադիմական քաղաքացիական հասարակության թիրախավորման և առանձին անհատների հանդեպ հետապնդումներին, թե՛, ի վերջո, օրենքի ոչ լիարժեք և խնդրահարույց ձևակերպումներով ընդունմանը: Ինչպես այս կոմիտեն, այնպես էլ հետագայում կրկին մերձկրեմլյան կառույցների (հիմնականում ստվերային) աջակցությամբ բացված համանման կազմակերպությունների կամ նախաձեռնությունների անդամները թիրախավորում էին սեռականության և գենդերի հարցերով զբաղվող իրավապաշտպաններին, ակտիվիստներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ–ներին), խմբով ներկայանում և խաթարում նրանց միջոցառումները, դրանց ժամանակ բաժանում ռուսական կայքերից արտատպված և անգամ չթարգմանված քարոզչական թռուցիկներ (որտեղ գովերգվում են, օրինակ, ռուսական ավանդական ընտանեկան արժեքները[10]), պատրաստում իրավապաշտպաններին հեղինակազրկող տեսահոլովակներ, որոնց ձեռագիրը կրկին համընկնում էր այլ հետխորհրդային երկրներում գործող կոմիտեների և խորհրդային Պետական անվտանգության կոմիտեի (ԿԳԲ) ձեռագրի հետ: Ինչպես արդեն այսօր կարող ենք արձանագրել, այս խմբերին տարբեր նենգափոխում-

8. Համահայկական ծնողական կոմիտե. *Մանիֆեստ*. Վերցվել է՝ http://hanun.am/?page_id=107:

9. Գենդերային քաղաքականության հայեցակարգը Հայաստանի կառավարության կողմից ընդունվել է 2010–ին, ձևավորվել է Ընդդեմ գենդերային բռնության միջգերատեսչական հանձնաժողովը, իսկ 2011–ին ընդունվել է Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը և 2011–2015 թվականների ռազմավարական ծրագիրը: Ինչպես տեսնում ենք տարբեր վերլուծություններից և հետազոտություններից, այդ տարիներին ոչ հայեցակարգը, ոչ էլ ռազմավարական ծրագրերը քաղաքական և հանրային լայն ուշադրության, առավել ևս՝ քննադատության առարկա չեն դարձել: Տես Աբրահամյան, Գ. (2015, օգոստոս 19). Պայքար գենդերի դե՞մ, թե՞ հակաեվրոպական քարոզ. *Առավոտ*. Վերցվել է՝ https://bit.ly/2YCMSH8: Ինչպես նաև՝ Հարությունյան, Ա. (2016). Հայաստանում գենդերային խոսույթը բացահայտելիս. հիստերիայից դեպի կառուցողական երկխոսություն. Գ. Շահնազարյան (խմբ.). *Գենդերային խտրականություն. մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն* (26–48). Երևան. «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ:

10. Հախվերդյան, Ն. (2017, հոկտեմբեր 13). Ատելության հռետորիկայի գրոհը. *Media.am*. Վերցվել է՝ https://bit.ly/3bpg5b8:

ների միջոցով հաջողվեց «գենդեր» հասկացությունը և գենդերային հավասարության մասին օրենքը դարձնել հանրային բևեռացման, առաջադիմական քաղաքացիական հասարակության թիրախավորման, հակաեվրոպական քարոզչության օրակարգ՝ այդ կերպ ձևավորելով մեդիա աղմուկ և իբր մշակութային հենարան նախապատրաստելով Հայաստանի՝ Եվրոասոցացման համաձայնագրին միանալու փոխարեն Մաքսային միությանն անդամակցելու քաղաքական որոշման համար՝ այն հռչակելով իբրև թե «ավանդական հայկական ընտանիքի փրկության» միակ հնարավոր «քաղաքական» ուղի: Այսպիսի՝ թվացյալ ներհայաստանյան, իսկ իրականում նաև աշխարհաքաղաքական դաշտում Ռուսաստանի միջամտությունը հետևանքներ ունեցավ Հայաստանի կյանքի բոլոր կողմերի, այդ թվում՝ հայաստանյան ողջ քաղաքացիական հասարակության վրա: Հետզհետե ավելացան Ռուսաստանից եկող ֆինանսական հոսքերը՝ նպատակ ունենալով ձևավորելու պուտինյան կառավարության օրակարգային քաղաքականություններին նվիրյալ, միաժամանակ ժամանակի իշխանություններին գործընկեր[11] (նրանց կողմից վերահսկելի), խորհրդային ուշ շրջանին բնորոշ նորստալինյան–հայրապաշտական (պատերնալիստական) առասպելների ու սոցիալական կառուցվածքների պահպանման ջատագով՝ Ռուսաստանից կազմավորված նախաձեռնություններ և հասարակության կազմակերպություններ (ՌՀԿ–ներ կամ RONGO–ներ): Եթե մինչ այս հանրային դաշտում ակտիվ քաղաքացիական ՀԿ–ների գործունեության նպատակը առավելապես ժողովրդավարության զարգացումն էր և իրավապաշտպանությունը, ապա ՌՀԿ–ները միտված էին հանրության լայն շերտերում պահպանողական գաղափարաբանության և արժեքների անվան տակ հակաժողովրդավար, հակաիրավապաշտպան, հայրապաշտական և խորքում ստալինյան բարոյականություն ամրապնդել՝ դրանով իսկ լեգիտի-

11. Օրինակ՝ «Պուտին» ակումբների ցանցի (համատեղությամբ՝ բազմաթիվ այլ ՀԿ–ների և առցանց տեղեկատվական էջերի) ղեկավար Անդրանիկ Նիկողոսյանը ՀՀԿ պատգամավոր Հերմինե Նաղդալյանի օգնական էր նշանակվել՝ ՌԴ–ում Կրեմլի քարոզչի համբավ վայելող Դմիտրի Կիսելյովի հայաստանյան այցը կազմակերպելուց հետո: Նա կապեր էր հաստատել հայաստանյան իշխող վերնախավի բազմաթիվ գործիչների հետ, ստացել ՀՀ պետական շքանշաններ և անվանական նվերներ: 2015–ին Նիկողոսյանի աղմկահարույց հայտարարությանը՝ հանրաքվեի միջոցով Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու անհրաժեշտության մասին, չաջակցեցին նույնիսկ նրա հետ մտերմացած գործիչները:

մացնելու Հայաստանի հանդեպ Ռուսաստանի վերահսկող հովանավորչական քաղաքականության վերարտադրությունը և Ռուսաստանից Հայաստանի կախյալության շարունակականությունը:

ՌՀԿ–ներին և պուտինյան վարչակարգին համակիր կուսակցությունների հարուցած այս խնդիրներից շատերը ոչ միայն ներկայիս իրադրության մաս են կազմում, այլև ակտիվ բարգավաճում են, որոնց հետ 2018–ի Թավշյա հեղափոխությունից հետո ձևավորված և ՀՀ ինքնիշխանությունն ու ժողովրդավարական զարգացումը կարևորող կառավարությունը ստիպված է գործ ունենալ (Անդրեասյան և այլք, 2018):

Հայաստանում գործող ՌՀԿ–ների, պուտինամետ ուժերի և աշխարհի տարբեր երկրներում աջ պոպուլիստ քաղաքական ուժերի օրակարգերի առաջմղման համար առանձին ուղղություն է դարձել ԱՄՆ միլիարդատեր Ջորջ Սորոսին և նրա հիմնադրած Բաց հասարակության հիմնադրամների միջազգային ցանցի տեղական գրասենյակների թիրախավորումը: Սա թույլ է տալիս հեշտությամբ «արտաքին թշնամու» որոշակի կերպար ձևավորել, դրան կապակցված «ներքին թշնամիներ» գտնել և դրանց դեմ քաղաքական ասելիքի թեմա ձևակերպել՝ երկրում եղած կամ հորինովի խնդիրները դրանց «հակապետական» գործունեության վրա բարդելով: ԱՄՆ–ում և եվրոպական երկրներում ինչպես անձամբ Սորոսին, այնպես էլ ԲՀՀ–ին առավելապես թիրախավորում են հակամիգրացիոն քաղաքականությունների ջատագովության համատեքստում: Իսկ Ռուսաստանում Սորոսի դեմ արշավը մեծապես հակագենդերային (այդ թվում՝ հոմոֆոբ) շեշտ ունի՝ նպատակ ունենալով հակադրվելու եվրոպական (արևմտյան) իրավաքաղաքական և մշակութային դաշտին և այս հակադրության վրա հենվելով՝ պահպանելու ՌԴ հակաժողովրդավարական համակարգն ու հետխորհրդային երկրների վրա դրա ծանրակշիռ աշխարհաքաղաքական ազդեցությունը:

ԲՀՀ–ի հանդեպ ամենից ագրեսիվ քաղաքականությունները ժողովրդական զանգվածային աջակցություն են ստացել հատկապես դրա ծննդավայր Հունգարիայում: Եվրոպայում առաջացած՝ փախստականների ճգնաժամի համատեքստում դեռևս 2015–ից Հունգարիայի աջական, ավտոկրատ վարչապետ Վիկտոր Օրբանը մեղադրում էր Ջորջ Սորոսին *«փախստականների ճգնաժամի համար պատասխանատու»* և *«եվրոպական ավանդական կենսակերպի*

համար սպառնալիք» լինելու մեջ[12]: Օրբանի կռիվը Սորոսի դեմ վերջին 3 տարիներին էլ մեծ հետևանքներ ունեցավ. Սորոսի հիմնադրած Կենտրոնական եվրոպական համալսարանը (Central European University) 2017 թվականից դարձավ աջ պոպուլիզմի մարտնչման թիրախ՝ երևան բերելով այս երկրում ակադեմիական ազատության թվացյալ հաստատվածության փխրունությունը: Հունգարական աջական կառավարությունը վարչապետ Վիկտոր Օրբանի գլխավորությամբ նախ առաջարկեց փոփոխություններ մտցնել պետության Բարձրագույն կրթության մասին ազգային օրենքում՝ սահմանափակելով Կենտրոնական եվրոպական համալսարանի, ինչպես նաև այլ միջազգային համալսարանների գործունեությունը երկրում: Հունգարական պառլամենտի կողմից օրենքի ընդունումը երկրի ներսում մի շարք բողոքի ցույցերի պատճառ դարձավ: Չուշացավ նաև Եվրոպական պառլամենտի կոշտ քննադատությունը, համաձայն որի՝ օրենքում փոփոխությունները հակասում էին միջազգային շուկայի, ծառայությունների մատուցման, ակադեմիայի հիմնարար ազատություններին: Մի շարք դիմադրություններից ու դատական հայցերից հետո Կենտրոնական եվրոպական համալսարանը 2018 թվականի մայիսից սկսեց Վիեննա տեղափոխվելու ուղղությամբ աշխատանքները: Այս ամբողջ ընթացքում հարձակումների էին ենթարկվում նաև հունգարական համալսարաններում գենդերային ուսումնասիրությունների կրթական ծրագրերը: Հատկանշական է հակահիրավապաշտպան գործիչների երեսպաշտությունը, որ տեսնում ենք նաև Օրբանի օրինակում. նա ինքը 1989–ին Սորոսի հիմնադրած Բաց հասարակության հիմնադրամներից կրթաթոշակ էր ստացել Օքսֆորդի Փեմբրոք քոլեջում քաղաքագիտություն ուսանելու համար:

Սակայն դա Օրբանին չխանգարեց շարունակել ճնշումները և 2018–ի նախընտրական պայքարում Սորոսին դարձնել իր հիմնա-

12. Օրինակ՝ «Պուտին» ակումբների ցանցի (համատեղությամբ՝ բազմաթիվ այլ ՀԿ–ների և առցանց տեղեկատվական էջերի) ղեկավար Անդրանիկ Նիկողոսյանը ՀՀԿ պատգամավոր Հերմինե Նաղդալյանի օգնական էր նշանակվել՝ ՌԴ–ում Կրեմլի քարոզչի համբավ վայելող Դմիտրի Կիսելյովի հայաստանյան այցը կազմակերպելուց հետո: Նա կապեր էր հաստատել հայաստանյան իշխող վերնախավի բազմաթիվ գործիչների հետ, ստացել ՀՀ պետական շքանշաններ և անվանական նվերներ: 2015–ին Նիկողոսյանի աղմկահարույց հայտարարությունը՝ հանրաքվեի միջոցով Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու անհրաժեշտության մասին, չաջակցեցին նույնիսկ նրա հետ մտերմացած գործիչները:

կան քաղաքական թիրախը, նրան մեղադրել հունգարական պետականությունը վտանգելու մեջ և ի վերջո արգելել հունգարական ԲՀՀ կառույցի աշխատանքը՝ հատկապես միգրանտներին տրամադրվող աջակցությունը: 2018–ին հունգարական պառլամենտը, համաձայն նախընտրական խոստումի, հաստատեց կառավարության կողմից «Ստոպ Սորոս» (Stop Soros) անվանված օրենսդրական նախագիծը, որով թիրախավորվում էին քաղաքացիական հասարակության կառույցները, օրինականացվում էր Օրբանի հակամիգրացիոն ագրեսիվ քաղաքականությունը[13]:

Ռուսաստանում ԲՀՀ–ի դեմ աշխատանքը շատ ավելի կտրուկ ընթացք է ունեցել. ԲՀՀ գրասենյակները 2015–ին ՌԴ դատախազության կողմից ճանաչվեցին անցանկալի և պարզապես փակվեցին արտասահմանյան ֆինանսավորում ստացող այլ հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ[14]: Այստեղ Սորոսին և ԲՀՀ գրասենյակին մեղադրում են դեռևս սկսած 2003–2004 թթ.՝ Ռուսաստանում ընդդիմադիր խմբերի (ՅՈՒԿՈՍ–ի ղեկավար Միխայիլ Խադարկովսկու) հետ համագործակցության և Կրեմլի դիտանկյունից մերձավոր արտասահմանում, այսինքն՝ հետխորհրդային երկրներում գունավոր հեղափոխություններ կազմակերպելու մեջ (Վրաստան, Ուկրաինա)[15]: Սորոսին և ԲՀՀ–ն ընտրելով նշանառու թիրախ՝ նրանց համար հեշտանում է «բացատրությունը», թե ինչու են տեղի ունեցած հեղափոխությունները հաջողել: Հետխորհրդային երկրներում առկա խնդիրներն ընդունելու և դրանց լուծման համար քաղաքացիական պայքարը նկատելու փոխարեն դրանք հերքվում են, և առաջ է քաշվում ԲՀՀ–ի ակտիվ գործունեությամբ «արտաքին միջամտության» պուտինյան (բնույթով նորստալինյան) դրույթը: Սրանով արգելակվում են և՛ ներռուսաստանյան ժողովրդավարա-

13. Ukraine Today. (2015, November 5). Soros vs Orban: Hungary's most influential figures argue over refugee crisis. Retrieved from https://www.youtube.com/watch?v=P5NsSgBT9eQ.

14. Ըստ այս օրենքի՝ քրեականացվում էր միգրանտներին իրավաբանական և որոշ այլ տիպի օգնություն տրամադրելը, և 25% հավելյալ հարկ էր ներմուծվում այս նույն օրենքով անօրինական ճանաչված միգրանտներին աջակցող կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար: Տես Open Society Justice Initiative. Protecting democracy, freedom of expression, and freedom of association in Hungary. Retrieved from https://bit.ly/3fspTo7.

15. Егоров, И. (2015, ноябрь 30). Генпрокуратура признала Фонд Сороса нежелательным в стране. Российская газета. По ссылке – https://rg.ru/2015/11/30/fond–site–anons.html.

կան զարգացումները, և՛ հետխորհրդային երկրների՝ իբրև ինքնիշխան գործընկերների (ոչ թե կախյալ ենթակաների) հետ հարաբերությունների զարգացումը:

Հայաստանի հակագենդերային արշավների գործելաոճը կրկնում է ճիշտ նույն սխեման, որով շարժվում են Սորոսին թիրախավորող՝ իրենց ամերիկյան[16], հունգարական[17] և ռուսական[18] գործընկեր հակաիրավապաշտպան, աջ պոպուլիստ ուժերն ու գործիչները: Այսպես՝ նրանք հանրայնորեն կրկնում էին ԲՀՀ–ի կողմից *«պետական հեղաշրջումներ»* կազմակերպելու դրույթը դեռևս 2017–ին՝ հայաստանյան հեղափոխությունից առաջ՝ հետխորհրդային երկրներում քաղաքացիական դիմադրությունները և ներքաղաքական փոխակերպումները ուղղակիորեն կապելով արտաքին ուժերի հետ: Նրանք նշանառել էին ԲՀՀ–Հայաստանի գրասենյակը, սակայն ըստ էության մեղադրում էին բոլոր առաջադիմական քաղաքացիական խմբերին և իրավապաշտպանական ՀԿ–ներին: Վերջիններս մեղադրվում էին ԱՄՆ–ի նախագահ *«Դոնալդ Թրամփի հայեցակարգին»* ծառայելու, *«հակառուսական քարոզչության»* ու *«այլասերման»* դավադիր ծրագիրը սպասարկելու մեջ[19]: Հարկ է ընդգծել զավեշտի ու տարօրինակության այն մասշտաբը, երբ «ամերիկամետության» ու «սորոսականության անտեսանելի ձեռքի» մասին դավադրական տեսություններ հյուսող աջ պոպուլիստ, պուտինամետ այս խմբերը իրենց զինանոցում կիրառում են իրենց իսկ հռչակած հակառակորդ՝ նախագահ Թրամփի պոպուլիստական հռետորաբանության մեջ առկա ընդհանուր դրույթները: Վերջինս իր նախընտրական քարոզչության և նախագահության ողջ ընթացքում խոսել է Ջորջ Սորոսի կողմից Դեմոկրատական կուսակցության ֆինանսավորման մասին և մեղադրել դեմոկրատներին՝ իբրև «հակաամերիկյան» քաղաքականություններ

16. Coaston, J. (2018, June 11). George Soros is not a Nazi, explained. VOX. Retrieved from https://www.vox.com/2018/6/11/17405784/george–soros–not–a–nazi–trump.

17. BBC News. (2018, October 18). Who is George Soros?. Retrieved from https://www.youtube.com/watch?v=nXHfPBHeOJU.

18. Сабов, А. (2004, июнь 1). Не бархатный сезон. Российская газета. По ссылке – https://rg.ru/2004/06/01/soros.html.

19. Հովհաննիսյան, Ա. (2017, հոկտեմբեր 3). Սորոսի հիմնադրամը՝ որպես այլասերումների և պետական հեղաշրջումների հովանավոր. Irates.am. Վերցվել է՝ http://www.irates.am/hy/1507004499:

մշակող «համաշխարհային էլիտայի»: Հատկապես հայաստանյան աջ պոպուլիստները, անհիմն գերընդհանրացումներ կատարելով, համաշխարհային և տեղական քաղաքական գործընթացները հանգեցնում են պարզունակ աշխարհաքաղաքական մտայնությունների, գծագրում մի սխեմատիկ մարտադաշտ, որտեղ իրենք իրենց կարևոր գործի մարտիկներ են ներկայացնում:

Հետհեղափոխական իրավիճակում հակագենդերային արշավների անդամները նոր՝ արդեն լիարժեք ընդդիմադիր դիրքից հանդես գալու առավել ագրեսիվ դերակատարման հնարավորություն ստացան: Սեռականության և գենդերի հարցերը և դրանցով զբաղվող առաջադիմական քաղաքացիական հասարակությանը վերստին շահարկումների, նենգափոխումների և դավադրական տեսությունների թիրախում դնելով՝ դրանց գլխավոր քաղաքական նպատակն է դարձել քաղաքացիական և իրավապաշտպանական գործունեության հետ կապակցվող երիտասարդ քաղաքական գործիչների և ժողովրդական հեղափոխության հեղինակազրկումը, ինչպես նաև Հայաստանի հասարակության բևեռացումը նման զգայուն՝ սեռականության թեմայի շուրջ[20]:

Ինչպես գրում է փորձագետ Արմեն Գրիգորյանը. *«Ճակատագրի հեգնանքով Ս. Սարգսյանի առաջնորդած Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ռ. Քոչարյանի համախոհները և մերձավորները Թավշյա հեղափոխության արդյունքում իշխանությունը կորցնելուց հետո արդեն բացահայտորեն դարձան հակաարևմտյան տրամադրությունների, հակագլոբալիզմի, սեքսիզմի և ազգային–պոպուլիստական հռետորաբանության հարակից այլ բաղադրիչների ջատագովներ: Տրամադրությունների նման փոփոխությունը, որը հանգեցրեց «մշակութային պատերազմ» հրահրողներին տրամադրված հսկայական ֆինանսական և մեդիա աջակցությանը (հայկական ՁԼՄ–ների հավանաբար շուրջ 80 %–ը դեռ նրանց վերահսկողության տակ է), ինչն ակնհայտորեն պայմանավորված է բնակչությանն «ուղեղների լվացման» ենթարկելու և ի վերջո իշխանությունը վերանվաճելու մղումով: Սակայն հարկ է նշել, որ ՀՀԿ–ի իշխանության տարիներին էլ նրա և նրա արբանյակների արևմտյան արժեքներին և միջազգային պարտա-*

20. Zhamakochyan, A. (2019, May 17). Queer rights are being weaponised by Armenia's counter–revolutionaries. Retrieved from https://bit.ly/3bbvgEM.

վորություններին նվիրվածությունը եղել է զուտ ձևական ու երեսպաշտական»[21]:

Հակագենդերային արշավներ ձեռնարկող կնատյաց և հոմոֆոբ հոետորաբանությամբ վերոնշյալ խմբերը Հայաստանում մեծ մասամբ համախմբված են նախկին իշխանական էլիտաների (Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի) օրակարգերի և նրանց հետ փոխկապակցված լրատվամիջոցների ու աջակից կրոնական (Հայ առաքելական եկեղեցու գործիչներ), օլիգարխիկ միջավայրերի շուրջը: Քոչարյանն իր հերթին պուտինամետ քաղաքականությունների նշանավորումն է Հայաստանում[22]: Սեռականության և գենդերի հարցերի, առաջադիմական քաղաքացիական հասարակության թիրախավորումը հակագենդերային արշավականներն իրականացնում են «արևմտյան դավադրական ուժերի» դեմ հռչակված գործունեության, սակայն իրականում հետհեղափոխական Հայաստանում կառավարող ուժի դեմ մարտնչելու և ռուսաստանամետ քաղաքական մշակույթի պահպանության նպատակներով:

21. Գրիգորյան, Ա. (2020, մարտ 11). Որոշ քարոզչական մեթոդների և դավադրության տեսությունների ծագումն ու գործածումը. Լրագիր. Վերցվել է՝ https://bit.ly/2LaCcr7:

22. Ռոբերտ Քոչարյանը և իր թիմակիցները ամեն կերպ ձգտում են հանրությանը ներկայացնել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ նրա անձնական մտերմիկ կապերի մասին: Գործնականում Քոչարյանը հայտնի է իր նախագահության ժամանակ ՌԴ–ին Հայաստանի ռազմավարական նշանակության բազմաթիվ տնտեսական ճյուղերի և օբյեկտների վաճառքով և ռուսական խոշոր բիզնեսում իր մասնաբաժնով (ՀՀ նախագահության ավարտից 1 տարի անց՝ 2009–ին, նա դարձավ հեռահաղորդակցության ոլորտի ռուսաստանյան խոշորագույն «ԱՖԿ Սիստեմա» ընկերության անկախ տնօրենների խորհրդի անդամ (տես Itel.am. (2009, հունիս 29). Ռոբերտ Քոչարյանն ընտրվել է ԱՖԿ «Սիստեմա»–ի անկախ տնօրեն. Վերցվել է՝ https://itel.am/am/news/2749), իսկ 2010–ին նաև դրա բաժնետեր (տես News.am. (2010, հուլիս 16). Ռոբերտ Քոչարյանը դարձել է ԱՖԿ «Սիստեմայի» բաժնետեր. Վերցվել է՝ https://news.am/arm/news/25145.html): «ԱՖԿ Սիստեման» ուղղակիորեն չի ներկայացվել Հայաստանում, սակայն փոխկապակցված ընկերությունների միջոցով նրան են պատկանել Հայաստանի երկրորդ բջջային օպերատոր «Վիվասել–ՄՏՍ» ապրանքանիշով մեզ հայտնի «Դ–Տելեկոմի» և «Կոռնետ–ԱՄ» ինտերնետ պրովայդերի հիմնական բաժնետոմսերը, «Մարս» գործարանը և 3 գիտահետազոտական ինստիտուտ): ՀՀ նախագահության ընթացքում իր ձեռք բերած այս տնտեսական խոր կապերը ռուսաստանյան վերնախավի շատ գործիչների հետ նաև անձնական փոխադարձ շահերի վկայությունն են: 2020–ի փետրվարին հայտարարվեց, որ Քոչարյանի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը, բացի իր այդ գործառույթից, կաշխատի նաև միջազգային RT ռուսական պետական հեռուստաալիքի հետ՝ ներգրավվելով վերլուծական կոնտենտի աշխատանքներին (տես Armeniasputnik.am. (2020, փետրվար 7). Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի ղեկավարը կաշխատի RT–ում. Վերցվել է՝ https://bit.ly/2SIqnfW):

Հայաստանի տեղական պոպուլիստներն, այսպիսով, իրենց ներքաղաքական ներկայացվածության նպատակով գործի են դնում տարբեր երկրներում փորձարկված հակաժողովրդավար, հակագենդերային քաղաքականության անհիմն ու պարզունակ քաղտեխնոլոգիական գործիքակազմ: Հայաստանյան իրավապաշտպանների, հատկապես գենդերային հավասարության ջատագովների մասին խոսում են ոչ այնքան նրանց անուն–ազգանունները նշելով, որքան համընդհանուր հակաիրավապաշտպան արշավներում լայնորեն կիրառվող *«սորոսական»* պիտակի տեղական տարբերակներով, ինչպիսիք են *«սորոսի վաստակ»–ը կամ «սորոսի հայաստանյան ներկայացուցիչ»–ը,* սա համեմվում է նաև *«ջիուդամասոնական»–ի* հակասեմիթական բառապաշարով: Այդ կերպ իրավապաշտպանների աշխատանքը ձգտում են ներկայացնելու իբրև նյութական շահագրգռությամբ և արտաքին (ենթադրյալ թշնամի) ուժերի ազդեցությամբ դրդված, հետևաբար *«ապազգային»* գործունեություն, փորձում են դիվականացնել և դրանով իսկ սահմանափակել կամ նեղացնել բոլոր ժողովրդավարամետ կառույցների ու նախաձեռնությունների գործունեությունը՝ գրավելով նրանց հանրային տարածքը:

ԲՀՀ–ն Հայաստանում գործունեություն է ծավալում 1997–ից և մյուս բոլոր ժողովրդավարամետ և իրավապաշտպանությամբ մտահոգ դոնոր կազմակերպությունների պես օժանդակություն է տրամադրում քաղաքացիական հասարակության մի շարք անհատների, նախաձեռնությունների և կազմակերպությունների, որոնք ունեն Հայաստանի ժողովրդավարացմանը և մարդկանց իրավունքների պաշտպանությանը նպաստելու նպատակներ և ծրագրային առաջարկներ: Ավելի քան երկու տասնամյակ Հայաստանի ժողովրդավարացման ջատագով շատ խմբեր և անհատներ, գործունեություն ծավալելով առավելապես քաղաքացիական դաշտում, առնչվել են ԲՀՀ–Հայաստանի գրասենյակի հետ՝ համագործակցության հաջողված կամ անհաջող, մեծ կամ փոքր ծավալի փորձ ունեցել: Դրամաշնորհային ծրագրերով աշխատող իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները բնական է, որ համագործակցում են տեղական և միջազգային տարբեր հիմնադրամների, այդ թվում՝ ԲՀՀ–Հայաստանի հետ: Սակայն պարզունակացմամբ և թշնամի կերտելու մտադրությամբ Հայաստանի հակաիրավապաշտպան քաղտեխնոլոգները դրամաշնորհներ

տրամադրող բոլոր հիմնադրամներից առանձնացրել են հենց ամերիկացի Ջորջ Սորոսի ֆինանսական միջոցներով հիմնադրված միջազգային հիմնադրամից դրամաշնորհ ստանալու փաստը՝ հետևելով իրենց հունգարական և ռուսաստանյան հակաժողովրդավար ուժերի ձեռագրին:

Իսկ արդեն Հայաստանի 2018 թ. հեղափոխությունից հետո ԲՀՀ–Հայաստանի դեմ արշավն ավելի մեծ թափ ու աշխուժություն ձեռք բերեց: Այժմ հակագենդերային խմբերը ԲՀՀ–Հայաստանին մեղադրում են *«Սորոսի գործելաոճում»*, ըստ որի՝ կազմակերպությունն իբր աջակցել է հեղափոխությանը՝ հետագայում իշխանության մեջ սեփական ներկայացուցիչների (*«ագենտների»*) ներկայացվածության համար: Այսպես *«սորոսական»* պիտակի արժանացան բոլոր այն երիտասարդ քաղաքական գործիչները, որոնք նախկինում (քաղաքական դաշտի զավթման պայմաններում) քաղաքացիական ակտիվության կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններում աշխատանքի փորձ կամ, առավել ևս, երբևիցե որևէ առնչություն էին ունեցել ԲՀՀ–Հայաստանի հետ: Բոլոր այն պաշտոնյաները, որոնք ունեցել են այսպիսի ընդդիմադիր քաղաքացիական պայքարի կենսագրություն, այսօր հակագենդերային շարժումների կողմից ներկայացվում են որպես *«Սորոսի գրպանի գործիչներ»*: Դավադրապաշտական մտածողության ծիրում ԲՀՀ գործունեությունը *«հակապետական»* է, ինչը ենթադրում է, որ *«սորոսի գրպանի պատգամավորներն ու նախարարները»*՝ *«սորոսի վարձկանները», «քանդելու»* են Հայաստանի Հանրապետությունը: *«Սորոսը այսօրվա հայաստանյան իշխանության փայատեր է»* ձևակերպմամբ նրանք փորձում են իմաստազրկել 2018–ի հեղափոխությունը և դրա ժողովրդականությունը: Կարճաժամկետ իմաստով՝ աջ պոպուլիստները այդ կերպ ձգտում են կասկածներ սերմանելու հեղափոխական շրջանի նոր կառավարության հանդեպ (հանրության և երկրի շահերին ծառայելու նրանց մտադրությունների նկատմամբ), իսկ երկարաժամկետ իմաստով՝ խարխլում են սեփական ուժերով հայրենի երկրի ապագան կերտելու հասարակության վստահությունը և կրկին վերակենդանացնում «հայրական թիկունքի» կամ «մեծ եղբոր» (մշակութային ավանդույթի ուժով՝ Ռուսաստանի) հովանավորության կարիքի զգացումը:

Այսպիսով՝ ԲՀՀ–Հայաստանի դեմ արշավի համալիր գործողությունների ընթացքում սպառնալիքի, ատելության խոսքի, բռնու-

թյան կոչերի և արժեզրկման ու նվաստացման ներքո են հայտնվում մի քանի տեսակի թիրախներ՝ 1) ինքը՝ դավադրապաշտների սիրելի Ջորջ Սորոսը և հայաստանյան գրասենյակի աշխատակազմից հատկապես տնօրեն Լարիսա Մինասյանը, 2) գենդերային հավասարության, կանանց և ԼԳԲՏ մարդկանց իրավունքների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող մարդկանց իրավունքների, երեխաների իրավունքների պաշտպանությամբ հայտնի գործիչները, 3) հիմնադրամի հետ կապի մեջ մեղադրվող հետհեղափոխական կառավարության և ԱԺ–ի մաս կազմող երիտասարդ քաղաքական գործիչները և ընդհանուր առմամբ ողջ կառավարությունը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ, և որպես հետևանք՝ նրանց առաջնորդած հեղափոխության գաղափարն ինքնին:

Հանրային քննարկման առարկա է դառնում արշավի կողմից առաջ քաշված կեղծ մի օրակարգ՝ *«օտարերկրյա գործակալական ցանցերի վտանգի, այլասերման տարածման, մանկապղծության, ԼԳԲՏ քարոզի, ապազգային ու հակապետական գործունեության, պետության կարևոր հիմնասյուների՝ ընտանիքի, բանակի, իրավապահ մարմինների, եկեղեցու, կրթական համակարգի խարխլման»* մանիպուլացնող առասպելի մասին: Հիմնախնդիրների և հանրային օրակարգերի նենգափոխման սխեման ներառում է առաջ բերված խնդրի անվտանգայնացումը, այսինքն՝ կեղծ օրակարգի ձևակերպման համար փորձ է կատարվում խաղարկել մշակութային վախերն ու զգայուն կետերը, օգտվել մինչ օրս փակ թեմաների շուրջ հասարակության ոչ լիարժեք իրազեկվածությունից և հույս դնել Հայաստանում իրավապաշտպանական մշակույթի թուլության և հնարավոր ռազմատենչության վրա: Օգտագործելով ղարաբաղյան հակամարտության չհաղթահարված դրությունը և շահարկելով անվտանգության շուրջ Հայաստանի հասարակության մտահոգությունները՝ այս խմբերը շահարկում են Ջորջ Սորոսի կարծեցյալ «ընկերական» հարաբերությունները Իլհամ Ալիևի հետ: Այս հանգամանքը «թույլ է» տալիս հակագենդերային խմբերին «ենթադրել», որ ԲՀՀ–Հայաստանը առաջ է տանում Ադրբեջանի շահերը, համոզիչ հնչելու համար՝ ԲՀՀ–Հայաստանի գործընկեր տարբեր քաղաքացիական ՀԿ–ների «ադրբեջանամետ» գործունեությունը՝ մեղադրելով, թե *«նկարվում են Ադրբեջանի դրոշի հետ, Ապրիլյան պատերազմում զոհված զինվորներին մերժում են որպես հերոսներ ներկայացնելուց»*: Հայաստանի հասարակության

համար անվտանգության ցավոտ հարցերն ավելի սրելու նպատակով Վրաստանում և Ուկրաինայում տեղի ունեցած պատերազմները և արյունահեղությունները տեղի ԲՀՀ գրասենյակների գործունեության հետևանք են ներկայացվում այն դեպքում, երբ երկու դեպքում էլ կոնֆլիկտի կողմը եղել է ՌԴ–ն՝ պատժելով այս երկրներին իրենց ինքնիշխան որոշումների համար:

ԲՀՀ–Հայաստանի (և առհասարակ արտաքին ֆինանսական աղբյուրներ ունեցող քաղաքացիական ՀԿ–ների) գործունեությունը որպես անվտանգության խնդիր ներկայացնելու հարցում իր ներդրումն ունեցավ նաև հեղափոխական ուժի ընդդիմադիրների շարքում հայտնված Ազգային անվտանգության ծառայության նախկին պետ Արթուր Վանեցյանը: Պաշտոնաթողությունից հետո նա, արդեն վարչապետ Նիկոլ Փաշինյանի և նոր կառավարության քաղաքական ընդդիմախոսի կարգավիճակում, 2019 թ. նոյեմբերին «168 ժամ»–ին տված հարցազրույցի ընթացքում հաղորդավարի հարցին, թե՝ *«Սորոսի գրասենյակը վտանգներ պարունակո՞ւմ է»*, որպես կարճ պատասխան՝ ասում է. *«Այո»*[23]: Վանեցյանը հասցրել էր հանրաճանաչություն և հանրային վստահություն ձեռք բերել 2018–ի հեղափոխությունից հետո՝ Փաշինյանի կողմից ԱԱԾ պետ նշանակվելուց հետո: Հետևաբար անորոշ վտանգի մասին գաղտնիությամբ շղարշված նրա խոսքերը, ենթադրվում էր, ծանրակշիռ հնչելու հավանականություն կարող են պարունակել: Ինչպես հաճախ առաջադիմական խմբերի գործունեության դեմ մարտնչողների դեպքում, կրկին ակնհայտ է Վանեցյանի այն երեսպաշտությունը, որով նա մեղադրում է հասարակական կազմակերպություններին (այդ թվում՝ ԲՀՀ–Հայաստանին) օտարերկրյա ֆինանսական աղբյուրներ ունենալու մեջ: Եվ սա այն դեպքում, երբ քաղաքական գործունեություն ծավալելու իր նպատակների մասին հայտարարելուց հետո նրա ստեղծած «Հայրենիք» հիմնադրամը նախատեսում է ֆինանսավորվել օտարերկրյա քաղաքացիների՝ «դրսի» մեծահարուստ հայերի կողմից. *«Ինչքան էլ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ՀԿ–ները ասեն, որ իրենց գործունեությունն ուղղված է բացառապես Հայաստանի շահին, դա այդպես չէ, որովհետև ամեն դեպքում ֆինանսավո-*

23. 168.am. (2019, նոյեմբեր 21). *Ժամանակը կգա, և ես կխոսեմ. ԱԱԾ և ՀՖՖ նախկին ղեկավար Արթուր Վանեցյան.* Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=RSB5BI3h838:

ողը դրսից է, և ամեն պահի նրանք սկսելու են սպասարկել օտարի *շահերը, առաջ են բերելու օտար երկրների օրակարգերը: Իսկ ես կարևորում եմ մեր ազգային օրակարգը, և այդ ուղղությամբ մենք փորձելու ենք տանել ակտիվ աշխատանքներ, որպեսզի ձևավորենք մեր ազգային օրակարգը քաղհասարակության միջոցով: Դրսում ապրող մեր հայրենակիցները շատ հայրենասեր մարդիկ են և ցանկացած առիթի, ցանկացած հնարավորության դեպքում աջակցում են Հայաստանին և Արցախին»*[24]: Երեսպաշտության մեկ այլ օրինակ է իրավապաշտպաններին, ՀԿ–ներին և ԲՀՀ–Հայաստանին դրամաշնորհներ տալով կամ վերցնելով օտարի շահերի սպասարկման մեջ մեղադրող նախկին կառավարող ՀՀԿ ներկայացուցիչների կեցվածքը, որոնք պետական հաստատությունների հետ համագործակցության տարբեր ծրագրերի միջոցով տարբեր տարիների օգտվել են ոչ միայն ԲՀՀ–Հայաստանի, այլև բազմաթիվ այլ ամերիկյան և եվրոպական դոնոր կազմակերպությունների տրամադրած դրամաշնորհներից[25]:

ԲՀՀ–Հայաստանի դեմ կազմակերպված գործողությունները դեռևս 2019 թ. մայիսից ավելի համակարգային և հանրային բնույթ էին ստացել, երբ նախկին իշխանական համակարգից հայտնի քաղտեխնոլոգ, PR մասնագետ Նարեկ Մալյանը[26] ստեղծեց ՎԵՏՕ[27] բրենդով հակաժողովրդավարական, հակագենդերային արշավը: Ըստ ՎԵՏՕ–ի ֆեյսբուքյան էջի՝ նրանց նպատակն է *«Ջորջ Սորոսի*

24. 168.am. (2020, փետրվար 5). Փաշինյանի կողմից կոնկրետ հանձնարարականներ եղել են ընդհանուր բոլորի նկատմամբ. Արթուր Վանեցյան. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=N5XNpVjo6BI:

25. Սիվիլնեթ. (2019, մարտ 18). Սորոսի քննադատ հայկ Բաբուխանյանը Սորոսի դրամաշնորհ է ստացել. Վերցվել է՝ https://bit.ly/3b3kd0z:

26. Նարեկ Մալյանը 2011–2017 թթ. եղել է ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի խորհրդականը, որի հանդեպ հեղափոխությունից շատ չանցած քրեական գործ է հարուցվել և մեղադրանք առաջադրվել իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության հիմքով: Հեղափոխության ընթացքում Մալյանը ժողովրդական շարժումը վարկաբեկողներից էր, իսկ արդեն հետհեղափոխական ժամանակներում նա հակակառավարական մեդիա նախագծերի և հակագենդերային արշավների ակտիվ անդամ է, թաթախված է իրավապաշտպանների, ակտվիստների և նոր կառավարության անդամ քաղաքական գործիչների դեմ մի քանի տարբեր դատական գործերում: Հեղինակել է «Սոդոմի PR–ը» (2014), «Ձրոյական կետ» (2017) և «Սրտերի թագուհին» (2019) գրքերը:

27. ՎԵՏՕ — վերջնագիր երկիրը տվող օտարներին: Նպատակը Ջորջ Սորոսի և նրա հետ փոխկապակցված բոլոր կազմակերպությունների ու հիմնադրամների արգելափակումն է ՀՀ տարածքում:

և նրա հետ փոխկապակցված բոլոր կազմակերպությունների ու հիմնադրամների արգելափակումը ՀՀ տարածքում»: ՎԵՏՕ հապավման բացված մեկնաբանությունն ինքնին բացահայտում է արշավի մտահղացումը՝ «վերջնագիր երկիրը տվող օտարներին», որը մշակված է *«արտաքին միջամտության» մասին պուտինյան առասպելի կանոններով*: Այս խմբակը ԲՀՀ–Հայաստան գրասենյակի ու դրա աշխատակիցների դեմ կազմակերպում էր տարբեր ֆլեշմոբեր, մոտոերթեր Հայաստանի տարածքով, շարունակաբար շրջափակում էր գրասենյակի մուտքը, մուտքի առաջ շոուներ կազմակերպում և զվարճանում, պատերին աշխատակիցներին պիտակավորող տարբեր գրություններ ամրացնում և այլն: Այս գործողություններին միանում էին հակաիրավապաշտպան և հակակառավարական գործունեությամբ հայտնի այլ գործիչներ ու խմբեր, այդ թվում՝ ոստիկանական համակարգի նախկին վատահամբավ մի պաշտոնյա և լրատվամիջոցի խմբագիր: ՎԵՏՕ–ի աջակիցների թվում էր հայտնվել անգամ մի բելգիահայ աջ ծայրահեղական նեոնացիստ[28]: ԲՀՀ–Հայաստանի դեմ ՎԵՏՕ–ի գործողությունները սպասարկում էր հակագենդերային և հակակառավարական նպատակային հռետորաբանությունը, որը շրջանառվում էր լրատվամիջոցներով և ֆեյսբուքյան էջերով: Զուգահեռ իրականացվող ֆեյսբուքյան արշավի մարգարիտն էր դարձել քաղտեխնոլոգ Մալյանի թիրախների պատը (նրա բառերով՝ *«Սորոսի լացի պատը»*): ՎԵՏՕ–ի գրասենյակի պատին նա քարտեզագրել էր ակտիվիստների, իրավապաշտպանների, քաղաքական և հանրային գործիչների լուսանկարներ, որոնք, ըստ նրա առասպելի, կազմում են *«Սորոսի գործակալական ցանցը ՀՀ–ում»* (*«պիղծ մարդկանց ցուցակը, որ փող են ստացել Սորոսից հայրենիքի վաճառքի համար»*)[29]:

Շարունակելով Ջորջ Սորոսի և Իլհամ Ալիևի՝ լավագույն ընկերներ լինելու պատմությունը՝ նրանք այդ ուղերձը հասցնում են նաև տեսողական միջոցներով՝ իրենց հավաքներում օգտագործելով Սորոսի և Ալիևի հանդիպման մի լուսանկար՝ «best friends» (թարգմ.՝ *լավագույն ընկերներ*) անգլերեն գրառումով: Լուսա-

28. Fip.am. (2019, հունիս 14). Ովքե՞ր են «հակասորոսականները». Վերցվել է՝ https://fip.am/7220:

29. Այս պատի վրա հայտված լուսանկարների շարքում են մեր բազմաթիվ գործընկերների և մեր հետազոտական կազմակերպության 3 անդամների նկարներ:

նկարում պատկերված հանդիպումը տեղի էր ունեցել 2015–ին Դավոսում (Ադրբեջանում ԲՀՀ գրասենյակի փակումից մեկ տարի անց), որի ընթացքում, ըստ ԲՀՀ հայտարարության, Սորոսը Ալիևին կոչ էր արել թուլացնելու քաղաքացիական հասարակությանը շնչահեղձ անելու և օրինական բարեգործական կազմակերպություններին հետապնդելու իր մոտեցումները[30]: Ալիևի վարչակազմը այն հակաժողովրդավար կառավարություններից մեկն է, որը տևականորեն արգելակում է ժողովրդավարական զարգացումներն իր երկրում, ինչի առիթով պարբերաբար քննադատությունների է արժանանում, այդ թվում՝ Սորոսի կողմից[31]: Ալիևի վարչակարգն իր հերթին Սորոսին և նրա հետևորդներին մեղադրում է *«Ալիևի, նրա ընտանիքի և Ադրբեջանի դեմ արշավներ հովանավորելու և այս նույն նպատակով գործող հայկական լոբբիի հետ կապերի մեջ»*[32]: Ահա նույն պարզ ու «օրիգինալ» մեխանիզմի (որով Ալիևի վարչակարգը Սորոսին ու ԲՀՀ–ին մեղադրում է հակաադրբեջանականության և հայամետության մեջ) հայելային կիրառությամբ Հայաստանի հակագենդերային արշավները տեղական ԲՀՀ–ին և իրավապաշտպաններին են մեղադրում «հակահայկականության և ադրբեջանամետության» մեջ:

30. OSF. (2015, January 22). Statement from Open Society on the Crackdown on Rights in Azerbaijan. Retrieved from https://osf.to/2SwKX2L.

31. Մեդիամաքս. (2017, սեպտեմբեր 7). Ադրբեջանի թշնամի Ջորջ Սորոսը. Վերցվել է՝ https://mediamax.am/am/news/parzabanum/24975/:

32. Այսպիսի մեղադրանք հնչեց, օրինակ, 2017 թ. սեպտեմբերի սկզբին «Կազմակերպված հանցագործության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի» (ԿՀԿԼՆ) հրապարակած «Ադրբեջանական լվացքատուն» զեկույցին ի արձագանք (OCCRP. (2017, September 4). The Azerbaijani Laundromat. Retrieved from https://www.occrp.org/en/azerbaijanilaundromat/): Զեկույցը բացահայտում էր 2012–2014 թթ. ընթացքում շուրջ 2,9 միլիարդ դոլար ադրբեջանական կեղտոտ փողերի օրինականացման սխեման և այդ գումարների մի զգալի մասի հաշվին եվրոպացի չինովնիկների, լրագրողների, քաղաքական գործիչների կաշառելու փաստերը, որի շնորհիվ լուսաբանվում էին Ադրբեջանի ներքաղաքական խնդիրները, քաղբանտարկյալների և ընտրախախտումների վկայությունները: ԿՀԿԼՆ–ի գործունեությանը, ըստ նրանց կայքի, աջակցում են 17 միջազգային դոնորներ, որոնցից մեկն է ԲՀՀ–ն, ինչն էլ թիրախավորման առիթն է: Հանրայնացված «Ադրբեջանական լվացքատուն» զեկույցի հիման վրա ԲԻԲԻՍին և Գարդիանը նյութեր հրապարակեցին (The Guardian. (2017, September 5). Everything you need to know about the Azerbaijani Laundromat. Retrieved from https://bit.ly/3aJTO7K): Գարդիանի հոդվածի 3 համահեղինակներից մեկը՝ Դինա Նագապետյանցը, հայկական ազգանուն ունի, որի վրա էլ հենվում է Ալիևի վարչակարգի՝ «հայկականության աշխարհի զզվելի» հետք գտնելու պարզունակ փաստարկը: Տես (Azertag. (2017, September 5). Release of the Press Service of the President. Retrieved from https://azertag.az/en/xeber/1090727/):

Այսպիսի թիրախավորումների, ատելության կոչերի, սպառնալիքների ու մեղադրանքների բարձր խտացումն անգամ պետական համակարգերի, նախ և առաջ ոստիկանության պատշաճ արձագանքին չի արժանանում. նոր կառավարող ուժից միայն որոշ առանձին գործիչներ են անձնական դիրքորոշումներ հայտնել և աջակցող քայլեր իրականացրել՝ դատապարտելով ԲՀՀ–Հայաստանի դեմ հարձակումը:

ՎԵՏՕ–ի նախաձեռնությամբ սկսված ԲՀՀ–Հայաստանի գրասենյակի շրջափակումը թեև շարունակական բնույթ էր կրում, որի ընթացքում վիրավորանքներ էին հասցվում աշխատակիցների և այցելուների հասցեին, ստեղծվում էր ֆիզիկական հետապնդման ու հարձակման մթնոլորտ, խաթարվում էր գրասենյակի գործունեությունը, սակայն իրավապահ մարմինները համարժեք պաշտպանություն չէին իրականացնում, չէին ապահովում աշխատակիցների և այցելուների ապահով մուտքն ու ելքը: Ի պատասխան շարունակվող շրջափակումների՝ գործնականում արձագանքեցին հիմնականում գրասենյակի գործընկերները և քաղհասարակության գործիչները, որոնք համերաշխության հանդիպումներ էին կազմակերպում գրասենյակի մոտ՝ սեփական ներկայությամբ պաշտպանելու տարածքը և աշխատակիցներին[33]: ՀՀ ԱԺ «Իմ քայլը» կառավարող խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանը քչերից էր, որ մասնակցեց ԲՀՀ գրասենյակին աջակցող ակցիաներին՝ ընդգծելով ՎԵՏՕ–ի գործողություններում Հայաստանում քաղաքացիական հասարակության նկատմամբ ուղղակի ոտնձգության փաստը. *«Քաղհասարակությունը Հայաստանում տարիներ շարունակ ժողովրդավարության բացակայության ժամանակ եղել է այն դերակատարը, որն ասել է այն, ինչ շատերը չէին կարողանում ասել և լռում էին, մյուս կողմից սա նաև ոտնձգություն է մարդու իրավունքների օրակարգի նկատմամբ, որովհետև կրկին քաղհասարակությունը այն դերակատարն է եղել, որը տարիներ շարունակ պաշտպանել է մարդու իրավունքները Հայաստանում»*[34]:

ԲՀՀ–Հայաստանի գրասենյակի գործունեության *«վտանգի» և «սորոսականներին»* զսպելու մասին հակագենդերային արշավի

33. Զարգարյան, Ռ. (2019, սեպտեմբեր 30). Քաղհասարակության ներկայացուցիչները ակցիա էին կազմակերպել ԲՀՀ հայաստանյան գրասենյակի առաջ. Ազատություն. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/30191414.html:

34. Նույն տեղում:

հարցադրումներին իր պատասխանը ներկայացնելու առիթներ է ունեցել նաև վարչապետ Փաշինյանը: 2019 սեպտեմբերին Լոս Անջելեսում մամուլի ասուլիսի ժամանակ պատասխանելով Սորոսի հետ հեղափոխության առնչության մասին հարցին՝ նա հերքում է այդ դավադրապաշտական վարկածը, սակայն իր հերթին առաջ է քաշում երկրորդ վարկածի մասին մի դրույթ, որով ըստ էության հաստատում է մյուս բոլոր հեղափոխություններում Սորոսի մասնակցության հնարավորությունը. *«Հիմա երկու վարկած կա: Առաջին վարկածը՝ դավադրությունների տեսության հեղինակներն ասում են՝ ուրեմն ինչ–որ տեղ պլանավորվել ա, էնտեղ, որտեղ սովորաբար պլանավորվում ա (...): Իսկ էնտեղ, որտեղ ընդունված ա մտածել, որ պլանավորվում են էդ հեղափոխությունները և անում, նրանք պակաս.... կասկածանքների և տառապանքների մեջ չեն: Որովհետև ասում են. «Հիասկացանք, եթե էս հեղափոխությունը մենք չենք արել, իսկ մենք չենք արել, էդ ով ա համարձակվել առանց մեր թույլտվության որևէ տեղ անի հեղափոխություն»: Էնպես որ ես բոլոր կողմերին կոչ եմ անում հանդարտվել, որովհետև նրանք, ովքեր եղել են ՀՀ–ում (...), նրանք գիտեն ով ա արել հեղափոխությունը և ինչպես ա արել. էդ հեղափոխությունը տեղի ա ունեցել ուղիղ եթերում (...): Էս հեղափոխությունը արել ա հայ ժողովուրդը (...)»*[35]: Իսկ ավելի ուշ՝ 2020 թ. հունվարին, հակագենդերային արշավում առաջամարտիկ «Իրավունք» թերթի[36] լրագրողի՝ իշխանության վերին օղակներում սորոսականներից զգուշանալու կամ նրանց գերի լինելու մասին հարցին ի պատասխան՝ Փաշինյանը պատասխանում է. *«Բաց հասարակության սորոսական գրասենյակը Հայաստանում գործում է տասնյակ տարիներով, այդ թվում՝ այն իշխանության ժամանակ, որի կարկառուն ներ-*

35. News.am. (2019, սեպտեմբեր 22). Պարոն Սորոսը ցանկացել էր հանդիպել ինձ հետ. Նիկոլ Փաշինյան. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=ZYI97jjpAcA:

36. «Իրավունք» թերթը, չնայած իր անվանումին, հայտնի է ԼԳԲՏ մարդկանց և նրանց իրավապաշտպանների, կանանց հարցերով իրավապաշտպանների կամ ակտիվիստների հանդեպ ատելության խոսքի տարածմամբ և թշնամանքի հրահրմամբ, ինչի պատճառով 16 քաղաքացիների կողմից 2015–ին նրա դեմ (հերքման պահանջով) դատական հայց է ներկայացվել (տես Lgbtnews.am. (2015, փետրվար 18). Տեղի ունեցավ ընդդեմ «Իրավունքի» 16–ի գործով վերաքննիչ դատը. վճիռը կիրապարակվի մարտի 5–ին. Վերցվել է՝ https://bit.ly/3aRB3Pz):
ՀՀ դատարաններում գործը չի հանգուցալուծվել, այն ուղարկվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Pinkarmenia.org. (2016, հունվար 29). «Իրավունք» թերթը, ԼԳԲՏ ֆորումը, տրանսգենդերների ծեծը՝ HRW զեկույցում. Վերցվել է՝ https://www.pinkarmenia.org/news/hrw_report/#.Xqlp7mgzbDd:

կայացուցիչ է եղել ձեր թերթի հիմնադիր խմբագիրը, և եթե էդքան վատ բան էր, թող փակեին: (...) Ինչի՞ չեք փակել: Այսինքն՝ դուք հիմա խոստովանում եք, որ պետական դավաճաններ եք, որ թույլ եք տվել, որ 25 տարի Հայաստանում գոյություն ունենա քայքայիչ կազմակերպություն: (...) Ի՞նչ ա նշանակում «սորոսական». ես թույլ չեմ տա, որ Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքացու այդպիսի քամահրական և արհամարհական բան ասեն, որովհետև բոլոր նրանք, ովքեր դա ասում են, նրանք կոռումպացված հանրապետականներ են: (...) Եթե ձեր ասածը ճիշտ ա [«սորոսականների» մասին], ուրեմն դուք ձեր իշխանության ողջ ընթացքում գործել եք ընդդեմ ՀՀ–ի և ժողովրդի, և առաջին հերթին ձեզ ա պետք պատասխանատվության ենթարկել, առաջին հերթին՝ բարոյական: Դա նշանակում ա, որ դուք չունեք սրբություն ընդհանրապես: Ձեզ համար ամեն ինչ չափվում ա փողով: Դուք արել եք դա, որպեսզի էդ միջազգային կազմակերպությունները հանդուրժող լինեն ձեր թալանի նկատմամբ (...)»[37]*:*

Այսպիսի արձագանքներով թեև Փաշինյանը ինքն իրեն, իր քաղաքական թիմին և 2018 թ. հեղափոխությունը հստակ առանձնացնում է *«Սորոսի» պիտակ դարձած գաղափարից և հեռավորություն նշագծում, սակայն մյուս կողմից շարունակում է իր խոսակցությունը ձևակերպել հակաժողովրդավար ուժերի կողմից արդեն բանաձևված՝ Սորոսին դիվականացնող հռետորաբանության շրջանակում: Բացի այդ՝ սեփական քաղաքական դիրքորոշումը նախկին իշխանության վարքի հետ համեմատության մեջ կառուցելով՝ վարչապետը բաց է թողնում* ներկայի օրակարգային, հրատապ հարցերը, որոնք պահանջում են հստակ քաղաքական գնահատականներ և լուծումներ ՀԿ–ների և առաջադիմական քաղաքացիական հասարակության վրա կատարված հարձակումների առնչությամբ:

Ընդհանուր առմամբ հակաժողովրդավար արշավներին կարծես հաջողվում է առաջադիմական և իրավապաշտպանական գործունեության, այդ թվում՝ Սորոսի պիտակ դարձած ուրվականի մասին վարկաբեկման այնպիսի առասպել հյուսել, որի հետ որևէ չեզոք կամ դրական առնչության մեջ հայտնվել չեն համարձակ-

37. 168.am. (2020, հունվար 25). Ի՞նչ ա նշանակում սորոսական, ով էդպես ա ասում, պետական դավաճան է. Փաշինյան. Վերցվել է՝ https://bit.ly/2WdJZLc:

վում նոր կառավարության և ԱԺ անդամները: Խուսափելով մարդու իրավունքների տեսանկյունից հակահիրավապաշտպան խմբերի գործողություններին համարձակ գնահատական տալուց՝ պետական հաստատությունները և գործիչները, ըստ էության, աջակցում են վերջիններիս՝ թույլ տալով քաղաքացիական առաջադիմական խմբերի գործունեության դաշտի նեղացումը և դրա փոխարեն հանրային ակտիվության և քննարկումների դաշտում հակահիրավապաշտպանների գերակայումը:

Այսպես՝ Հայաստանում իրավապաշտպանների դեմ արշավներում հանգուցային կետ դարձած *«վտանգավորությունը»* և *«սորոսականությունը»*, դեռևս տևական ընթացք ունենալով և հակագենդերային խմբերից տարածվելով ավելի լայն շրջանակներում, ինչպես կտեսնենք այս աշխատանքի հաջորդ մասերում, իրականում անդրադառնում է իրավապաշտպանների ֆիզիկական անպաշտպանությանը, հանգեցնում է նրանց գործունեության սահմանափակումներին և ընդհանուր առաջադեմ քաղաքացիական դաշտի նեղացմանը, ինչպես նաև խոչընդոտում է երկրում անհրաժեշտ և սպասված բարեփոխումների ընթացքը:

ԲԱԺԻՆ 1

Գենդերային հիմքով հիմնախնդիրների և կանանց իրավունքների մերժումը

Կին իրավապաշտպանների թիրախավորումը 2019 թ. մարտի 8–ից առաջ և հետո

2018 թվականի դեկտեմբերի 9–ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախորդած հեռուստաբանավեճի ընթացքում արդեն նախկին վարչապետ և նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարած ՀՀԿ ցուցակը գլխավորող նախկին պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը հարց հղեց վարչապետի գործող պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին. *«Ձեր կուսակցության հիմնադրամում (որը ֆինանսավորմամբ է զբաղվում) ներգրավված են ԼԳԲՏ երկու կարկառուն ակտիվիստներ: ...Պարտավորություն ունե՞ք այդ ակտիվիստների նկատմամբ, թե՞ ոչ՝ ձեր օգտին փող հավաքելու համար: Եվ երկրորդ՝ ազգային արժեքները կարևո՞ր են, թե՞ ժողովրդավարական լիբերալիզմն ավելի կարևոր է, քան ազգային արժեքը»*[1]:

Ակնհայտ է, որ այս հարցով Սարգսյանը, հեղափոխությունից հետո մերժված կամ կառավարման իշխանությունը կորցրած իր կուսակցությունն ու քաղաքական թիմն իբրև «ազգային արժեքների» ջատագով ներկայացնելով, ձգտում էր բարձրացնելու դրա հեղինակությունը հանրության առաջ: Միաժամանակ «ԼԳԲՏ ակտիվիստներին» դիվականացնելով ու նրանց այդ կարգավիճակով Փաշինյանի ու նրա թիմի հետ կապակցելով՝ վերջիններիս հանրային վստահությունը նսեմացնելու ճիգ էր գործադրում: Անկախ Հայաստանի վերջին տարիների մի շարք քաղաքական անցքեր[2]

---

1. Ազատություն. (2018, դեկտեմբեր 5). *Վիգեն Սարգսյանը ԼԳԲՏ ակտիվիստ է. Նիկոլ Փաշինյան.* Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=vRn–2fT8n6M:

2. ՀՀԿ իշխանության տարիներին գենդերային հարցերը քանիցս քննարկվել են օրենսդրական մակարդակում՝ անցնելով շահարկումների և նենգափոխումների նույնանման ճանապարհ: Այսպես՝ 2011–ի դեկտեմբերին ՀՀ Կառավարության և «Օրինաց երկիր» կուսակցության պատգամավորներ Հեղինե Բիշարյանի և Հովհաննես Մարգարյանի կողմից հեղինակած «Գենդերային հավասարության

ակնհայտ են դարձնում, որ քաղաքական համբավի նսեմացման ջանքերը քաղտեխնոլոգիական մեծ երևակայություն չեն պահանջել, եթե հենվել են մի կողմից՝ իբր «ազգային արժեքների» և «անվտանգության» պահպանման դիսկուրսի շահարկման, մյուս կողմից՝ գենդերային իրավահավասարության դիսկուրսի նենգափոխման վրա: Այս համադրությունը տեսնում ենք թե՛ Սարգսյանի հնչեցրած հարցում, թե՛ հեռուստաբանավեճին նախորդած քարոզարշավում, թե՛ հեղափոխությունից երկու տարի անց տարբեր քաղաքական գործընթացների համատեքստերում: Քաղտեխնոլոգիական այս հնարքում Հայաստանն, իհարկե, բացառիկ չէ. գենդերային խուճապի զգացումի ձևավորման և դրանից քաղաքական կրեդիտների կորզման փորձը իր հաստատված տեղն է գտել աշխարհի շատ երկրների աջ պոպուլիստների քաղաքականության մեջ և երկրից երկիր տարբերվում է միայն, թերևս, այն գործադրող դերակատարների մեծ ու փոքր քաղաքական օրակարգերով:

Սարգսյանի խոսքի օրինակով տեսնում ենք, որ նախ և առաջ նախկին իշխանական (նաև ուժային) համակարգի ներկայացուց-

---

մասին» ՀՀ օրենքն ընդգրկվեց ԱԺ նստաշրջանի օրակարգ և ամբողջությամբ ընդունվեց 2013–ի մայիսին: 2013–ի հունիսին Հանրապետության նախագահը ստորագրեց օրենքը (նախագծի պատմությունը տես parlament.am. Վերցվել է՝ https://bit.ly/35U8BMo): Սակայն օրենքի ընդունումից հետո Հայաստանում հենց ժամանակի իշխանական համակարգի որոշ թևերի, հայ առաքելական եկեղեցու և ռուսամետ կուսակցությունների (այդ թվում՝ ներկայիս ԱԺ ընդդիմադիր ԲՀԿ) հովանավորությունն ու առնչակցությունն ունեցող հակագենդերային խմբավորումների աղմուկի ֆոնին՝ ՀՀ իշխանությունները «ստիպված եղան» հետքայլ անել, փոխարինել «գենդեր» եզրույթը, ինչի արդյունքում 2013 թ. օգոստոսին օրենքը վերանվանվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք (տես Panorama.am. (2013, օգոստոս 29). «Գենդեր» բառը փոխարինվեց «կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները և հավասար հնարավորությունները» բառերով. Վերցվել է՝ https://bit.ly/2WojL94): 2016–ից այս նույն խմբերը պայքարում էին «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքի նախագծի ընդունման դեմ (տես Իրազեկ քաղաքացիների միավորում. (2016, դեկտեմբեր 23). «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին հանրային դաշտում ապատեղեկատվություն տարածող խմբերի մասին զեկույց. Վերցվել է՝ https://bit.ly/2SQjXLW): 2017–ին օրենքն ընդունվեց փոփոխված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» անվանումով: Դեռևս 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների փաթեթը ներառել էր նաև ամուսնության վերաբերյալ դրույթի փոփոխություն՝ սահմանելով այն որպես բացառապես տղամարդու և կնոջ միջև միություն: Այս քայլով ՀՀԿ վերնախավը ցանկանում էր ազդել սահմանադրական փոփոխությունների հանդեպ հանրային լայն շերտերում առկա բացասական տրամադրությունների վրա՝ կրկին շահարկելով ԼԳԲՏ հարցը:

չական կերպարը չի խորշում հետադիմական–հակահիրավապաշտպան ուժերի քաղտեխնոլոգիական հնարքով ու տոնայնությամբ հարձակվել կին իրավապաշտպանների վրա, որոնք Հայաստանում երկար տարիներ խոցելի վիճակում հայտնված բազմաթիվ կանանց են աջակցել և պաշտպանել նրանց իրավունքները: Իր այս հարձակողական քայլով Սարգսյանը հարուցում է բազմաթիվ բացասական սոցիալական հետևանքներ, այդ թվում՝ հրահրում կին իրավապաշտպանների հանդեպ ատելության և բռնության տրամադրություններ հանրային այն շերտերում, որոնք հակված են հավատալու ազգայինի և ավանդականի քայքայման դավադրական տեսություններին: Ավելին, ինչպես կտեսնենք վերլուծության հաջորդ բաժիններում, նախկին իշխանական խմբերը, նրանց ծառայած անհատ քաղտեխնոլոգները միավորում են իրենց ֆինանսական, մեդիա և մարդկային ռեսուրսները հակահիրավապաշտպան հետադեմ խմբակների հետ՝ տապալելու Հայաստանում հնարավոր բարեփոխումները՝ իրավահավասար, հակախտրական, ոչ բռնի և պաշտպանված հանրություն ունենալու քաղաքացիական և քաղաքական նախաձեռնություններն ու նախագծերը:

Այսպիսով՝ քաղտեխնոլոգիական ջանքերն ուղղվում են առաջադիմական քաղաքացիական հասարակությանը, մասնավորապես խոսքում նկատի ունեցած կին իրավապաշտպաններին դիվականացնելուն, իսկ հետո արդեն կառավարող ուժին՝ իբրև նրանց «գործակից–հանցակից» ներկայացնելուն: Վերջիններիս համագործակցությամբ, իբր, իրականացվում է «հայկական ավանդական արժեքների և ինքնության քայքայման ծրագիրը»՝ ծառայելով արևմտյան «ժողովրդավարական լիբերալիզմի դավադիր ուժերին»:

Սարգսյանի հարցը կին իրավապաշտպաններ Լարա Ահարոնեանի և Մարո Մաթոսյանի մասին էր, որոնք սկսած 2013 թվականից[3] թիրախավորման, ատելության խոսքի, սպառնալիքի և բռնության կոչերի արշավների կիզակետում են եղել: Ընդ որում, որքան

3. 2013 թվականից կին իրավապաշտպաններին, ֆեմինիստների և կանանց կազմակերպությունները թիրախավորում էին «Համահայկական ծնողական կոմիտեն»՝ կազմակերպության նախագահ Արման Բոշյանի ղեկավարությամբ, կոմիտեի հետ փոխկապված հոգևորականները, «Հայ–ռուսական միավորում» կազմակերպության ղեկավար, հոմոֆոբ Ռոբերտ Ահարոնյանը (որ 2015 թվականին հայտնվեց վիրտուալ նոյնասեռ սեքս սկանդալում) և այլք: Այս ամենն, իհարկե, տեղի ուներ ժամանակի հանրապետական իշխանությունների հովանու ներքո:

էլ հեգնական է, արդեն հեղափոխությունից հետո հարձակման արշավները բոլորովին էլ չմեղմվեցին, ընդհակառակը՝ ահագնացան:

«ՔՀԿ–ԱԺ համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» շրջանակում 2019 թվականի մարտ 8–ի միջոցառմանը[4] ելույթ ունեցավ կին իրավապաշտպան, Կանանց ռեսուրսային կենտրոնի համահիմնադիր Լարա Ահարոնեանը: Կանանց իրավունքների միջազգային օրվա համատեքստում նա խոսեց Հայաստանում կանանց և աղջիկների հանդեպ բռնության, օրենսդրական դաշտի թերությունների և կանանց տարբերությունների մասին (այդ թվում՝ սեռական կողմնորոշման, ազգային պատկանելության, սոցիալական և այլ կարգավիճակների հիմքերով): Կանանց բազմազանությունը շեշտող նրա ելույթից հետո «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում հակագենդերային արշավի կազմակերպիչների և նրանց կողմից կառավարվող էջերը, ինչպես նաև նախկին իշխանական ներկայացուցիչների սեփականություն հանդիսացող և նրանց հետ փոխկապակցված առցանց լրատվամիջոցները ողողվեցին վերջինիս նկարներով, նրան սպանելու, բռնաբարելու, ընտանիքին վնասելու կոչերով:

Կրկին Ահարոնեանին թիրախավորող ուղերձների հիմքում դրվեց Սարգսյանի խոսքից արդեն ծանոթ սխեման. նսեմացվեց և պիտակավորվեց նրա իրավապաշտպանական գործունեությունը, և դա համալրվեց կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հոգաբարձուների խորհրդի անդամ լինելու հանգամանքով՝ այդպիսով նրա ողջ գործունեությունն ու ելույթը անմիջականորեն կապելով Փաշինյանի հետ, ինչը նշանակում էր, որ Ահարոնեանին դիվականացնող բնորոշումները ոչ միայն իր, այլև Փաշինյանի և նրա թիմի մասին են. «Նիկոլական կադրերը լեսբիների քարոզով են զբաղված»:

4. 2019 թվականի մարտի 8–ին՝ կանանց իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, ԱԺ և կանանց իրավունքներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է ՀՀ օրենսդիր իշխանության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև համագործակցության հարթակի ստեղծումը՝ կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրական հավասարությունն ապահովելու ուղղությամբ ջանքերը համատեղելու համար: Տես Parlament.am. (2019, մարտ 8). Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր. Վերցվել է՝ https://bit.ly/35N9iXv:

Ահա այս սխեմայով են մշակվում և առաջնաբեմ նետվում կին իրավապաշտպանների և հետհեղափոխական շրջանում կառավարող ուժի կողմից «ավանդական ընտանիքի քայքայման», մասնավորապես «երեխաների այլասերման, պղծման», «ԼԳԲՏ քարոզչության» և «ազգային արժեքները ծախելու» շուրջ առասպելները՝ թե՛ հեղինակազրկելով և խոցելի դարձնելով նման զգայուն՝ սեռականության թեմայով զբաղվող կին իրավապաշտպաններին, թե՛ խոչընդոտելով հետհեղափոխական Հայաստանում մարդու իրավունքների ոլորտում առաջադիմական օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու օրակարգը: Բարեփոխումները ներկայացվում են իբրև «... օրենքի նախագծեր, որոնք ուղղված են այլասերված ապրելակերպով անձանց լայն իրավունքների ամրագրմանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում»[5]:

Սեռականության և գենդերի հարցերը հմտորեն թիրախավորվում են ոչ միայն ազգայինի, ավանդականի, ընտանիքի և երեխաների «փրկության» անվան ներքո, այլև համեմվում են հայաստանյան հասարակությունում մեկ այլ զգայուն թեմայի՝ անվտանգության հարցի շարունակական շահարկմամբ: Այսպես՝ հակահիրավապաշտպան խմբերը մարտի 8–ի ելույթից հետո շարունակում էին Լարա Ահարոնեանի հասցեին հնչեցնել ատելության խոսքեր և սպառնալիքներ՝ դրանք համալրելով խաղաղության և ադրբեջանցիների հետ հաշտեցման հեռանկարի շուրջ նրա ավելի վաղ հնչեցրած դատողությունների վրա հարձակումներով և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հոգաբարձուների խորհրդի անդամ լինելու շեշտադրումներով: «Ապրի Ասյան, ճիշտ է ասում, ես էլ ունեմ շատ լավ ընկերներ ադրբեջանցի, որոնց շատ եմ սիրում և հույս ունեմ, որ մի օր խաղաղ կապրենք իրար հետ ու հանգիստ ու ազատ կշփվենք առանց ոչ մեկի ատելության քարոզի»[6] ֆեյսբուքյան գրառումը Լարա Ահարոնեանը կատարել էր ի համերաշխություն Ասյա Խաչատրյանի[7], որն իր հերթին այդ ժամանակ թի-

5. Հայկունի Վ. (2019, հոկտեմբեր 26). 2018–ի «գունավոր» հեղաշրջման հետքերով. *168.am*. Վերցվել է՝ https://168.am/2019/10/26/1194442.html/:

6. Ահարոնեան, L. [Lara Aharonian]. (2018, նոյեմբեր 6). https://www.facebook.com/hashtag/insolidaritywithasya?source=embed&epa=HASHTAG:

7. Ասյա Խաչատրյանը հայտնվել էր աջ պոպուլիստական խմբերի և միջավայրերի թիրախում, երբ բարձրաձայնել էր Արցախի ոստիկանության կողմից իր հանդեպ թույլ տրված ֆիզիկական և հոգեբանական բռնությունների մասին դեռևս 2018 թ.

ռախավորվել էր մի ադրբեջանցի ընկերոջ հետ իր լուսանկարները հրապարակելու պատճառով: Այսպիսով՝ մեկ այլ կին ակտիվիստի համերաշխություն հայտնելը, խաղաղության ցանկությունը և հավերժական թշնամանքի հաղթահարումը հակագենդերային արշավորդների կողմից գնահատվում են իբրև լրացուցիչ հանցանք՝ «բանակաշինության դեմ վարձու աշխատանք» և «ոտնձգություն ազգային անվտանգությանը»: Սրանք գաղափարներ են, որ նախորդող տասնամյակների ընթացքում նպատակայնորեն թրծվել են իշխող վարչակարգերի կողմից՝ հանրային և քաղաքական գիտակցության մեջ բացառելով խաղաղության և հաշտության մասին խոսակցության լեգիտիմությունը: Վերաշրջանառելով այս գաղափարները՝ հակագենդերային խմբերը հույս են տածում աշխատեցնելու նախկինում ձևավորված կռվանները և առանց մեծ բարդությունների հասարակությունից աջակցություն ստանալու: Անվտանգության շահարկումով փորձում են հեշտությամբ հեղինակազրկել և՛ գենդերային իրավահավասարությունը, և՛ խաղաղությունն իբրև արժեք առաջ մղող իրավապաշտպաններին ու ակտիվիստներին, ինչպես նաև (և հատկապես) նրանց հետ այս կամ այն դրվագով կապակցված նոր կառավարող ուժին՝ վերջիններիս տեղավորելով անընդհատ արդարանալու պաշտպանողական դիրքում և դրանով իսկ խոչընդոտելով թիրախավորված թեմաներով նրանց կողմից հստակ դիրքորոշումների ձևակերպումը և համարձակ բարեփոխիչ քաղաքականությունների գործադրումը:

Կին իրավապաշտպանների դեմ արշավում հանգուցային կետ է դարձել նաև ԲՀՀ–Հայաստանի ֆինանսական աջակցությամբ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու հանգամանքը, որը ներկայացվում է իբրև նյութական շահագրգռությամբ դրդված ծառայություն արտաքին (թշնամի) ուժերին:

Հակագենդերային արշավորդների կողմից Ահարոնեանին և Մաթոսյանին որպես հեշտ կամ հարմար թիրախ ընտրելու հարցում առկա է ևս մեկ շահարկման առիթ. դա նրանց սփյուռքահայ

փետրվարի սկզբին (տես Epress.am. (2018, մարտ 26). Ղարաբաղի ոստիկանները՝ Ասյա Խաչատրյանին. օրենք Հայաստանում կպահանջես. Վերցվել է՝ shorturl.at/vDIP3): Այնուհետև 2018 թ. նոյեմբերին նրա դեմ արշավը սաստկացավ ֆեյսբուքում հրապարակված մի նկարի առիթով, որտեղ Ասյան Թբիլիսիում լուսանկարվել էր իր մի ադրբեջանցի ընկերոջ հետ (տես Հայկական ժամանակ. (2018, նոյեմբեր 11). Ասյա Խաչատրյանի հետ լուսանկարված ադրբեջանցուն հայրենակիցները սպառնում են դատաստանով. Վերցվել է՝ https://www.armtimes.com/hy/article/148112):

ծագումն է: Այսպես՝ հակագենդերային խմբերը մեծապես շրջանառում են Ահարոնեանի և Մաթոսյանի «ուրիշությունը», որն օգտագործվում է՝ սոսնձելու տեղի քաղաքացիական հասարակության վրա արևմտյան «դավադրական ուժերի» ազդեցության մասին նրանց հորինած դրույթի տարբեր շերտերը: Այս գործողությամբ նրանք միաժամանակ նսեմացնում են մշակութային և սոցիալական այն ընդհանրությունները, մտահոգությունները, շահերն ու հետաքրքրությունները, որ կիսում են Ահարոնեանը և Մաթոսյանը հայաստանյան հասարակության հետ: Հատկապես Ահարոնեանի դեպքում անտեսվում, ավելին՝ ջնջվում է նրա հայրենադարձությունն ընտանիքի հետ, չորս երեխաների մայրությունը, Հայաստանում երկարամյա կյանքն ու հանրային նշանակության գործունեությունը. գործոններ, որ բոլոր այլ հանգամանքներում կընթերցվեին ազգայինի տեսանկյունից նպաստավոր երանգներով: Դրա փոխարեն հորինվում է «ուրիշության»՝ «Հայաստանի ջուրը չխմածներ»–ի, հետևաբար նաև արևմտյան «այլասերված» արժեքների կրող լինելու ուղերձը՝ որպես նրանց խոսքը ապալեգիտիմացնելու միջոց: Այս մոտեցումը մի կողմից՝ հավելյալ անգամ սրում է այլ մշակույթների մերժողական, անգամ այլատյաց սենտիմենտները, մյուս կողմից՝ փորձ է անում կանանց իրավունքները և իրավահավասարությունը հանրությանը ներկայացնելու որպես օտարածին արժեքներ և գաղափարներ, որոնց ջատագովությունը իբր հետապնդում է այլ՝ թաքնված՝ «ազգայինի» կազմաքանդման հեռահար նպատակներ: Ընդ որում, ինքնաներկայանալով իբրև «տեղական» և հակագենդերային պայքարում «անշահախնդիր» անհատներ և խմբեր՝ վերջիններս պարբերաբար իրենց ուղերձներում շրջանառում են այն գաղափարը, թե կին իրավապաշտպանները և ակտիվիստները կանանց իրավունքների համար իրենց պայքարում չունեն իրական ազնիվ մղումներ և արժեքային առանցք՝ հանգեցնելով իրավապաշտպան գործունեությունը նյութական շահագրգռվածությանը (արտասահմանյան դրամաշնորհներին): Կին իրավապաշտպաններին հաճախակի անվանում են «արտասահմանյան կենտրոնների սնուցյալներ»՝ ճիշտ նույն կերպ, ինչպես դա անում են հետխորհրդային (օրինակ՝ Ռուսաստանի) և նախկին սոցիալիստական բլոկի երկրների հակագենդերային խմբերը:

Հակագենդերային արշավորդների հույսը, ուստի, հայաստանյան հասարակությունում գոյություն ունեցող՝ մարդու սեռա-

կանության թեմայի փակությունն է, բազմազանությունը չհանդուրժելը և «հայկական» ինքնության կորստի առնչությամբ վախերն ու կիսաառասպելականացված, աշխարհում Հայաստանի տեղի ու աշխարհի հետ հարաբերման մասին [սահմանա]փակ պատկերացումները:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Կին իրավապաշտպաններին թիրախավորելու կարևոր շարժառիթներից մեկն ինքնին կառավարող ուժին սադրելն է և հորինված խնդրի շուրջ սահմանված օրակարգին կառավարող ուժի կողմից արձագանք պարտադրելը: Իրավապաշտպաններին թիրախավորող կոչերը ենթադրում են պատասխան, որին սպասում են թե՛ թիրախավորված առաջադիմական, իրավապաշտպան քաղաքացիական հասարակության խմբերը, թե՛ թիրախավորող նախկին իշխանականների և նրանց հետ փոխկապակցված աջ պոպուլիստական (ռևանշիստական, կրոնական, օլիգարխիկ, հոմոֆոբ) անհատները և խմբերը: Հետևաբար ամեն նման միջադեպից հետո այս խմբերի հայացքներն ուղղվում են դեպի Փաշինյանն ու նրա թիմի հատկապես առաջադիմական հատվածը: Եթե առաջիններն ակնկալում են իրավապաշտպանների թիրախավորման կոշտ քննադատություն, հանրային–քաղաքական աջակցություն և գործնականում իրավաօրենսդրական դաշտի և իրավակիրառ պրակտիկաների բարեփոխումներ, ապա երկրորդները, հետհեղափոխական Հայաստանի կառավարող ուժին դնելով «ազգայինի» և «իրավապաշտպանականի» կեղծ հակադրման դիսկուրսի մեջ, կառավարության հանդեպ հանրային վստահության նվազեցման և իրավապաշտպան օրակարգերի խափանման նորանոր թակարդներ են լարում, որտեղ էլ կառավարության ներկայացուցիչները հաճախակի ընկնում են:

Ի պատասխան, օրինակ, Վիգեն Սարգսյանի հեռուստաբանավեճի հարցին՝ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Այն մարդը, որին ձերոնք տարածում են, թե ակտիվիստ է, չորս երեխաների մայր է, հայկական ավանդական ընտանիքի մայր է: Ես ուզում եմ

ասել, որ ձեր իշխանության տարիներին Հայաստանի Հանրապետությունում սեռական այլ կողմնորոշում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաների ցուցակ է եղել: Դուք այդ իշխանության միջի մարդ եք, և ձեր կառավարության մի շարք հայտնի մարդիկ հայտնի են որպես ԼԳԲՏ համայնքի մարդիկ»[8]: Այնուհետև Փաշինյանը հայտարարեց, որ Սարգսյանն ինքը «ԼԳԲՏ ակտիվիստ է, քանի որ համարում է, որ ԼԳԲՏ մարդիկ ունեն նույն իրավունքները, ինչ մյուսները»: Փաշինյանի պատասխանն, իհարկե, հեռու էր քաղաքացիական հասարակության առաջադիմական հատվածի ակնկալիքներից: Մի մասի համար դա հասարակական լայն շերտերում վարկանիշ չկորցնելուն ուղղված պոպուլիստական–խուսափողական պատասխան էր, որ չհատեց ավանդականությունը գործիք դարձրած պահպանողականության սահմանը, մյուսների համար խնդիրն ավելի սուր էր: Վիգեն Սարգսյանին անվանելով «ԼԳԲՏ ակտիվիստ»՝ Փաշինյանը խորացրեց հասկացության բացասական՝ վիրավորական երանգավորումը և նպաստեց հանրության հոմոֆոբ տրամադրությունների լեգիտիմացմանը: Արդյունքում՝ կարճ ժամանակ անց ֆեյսբուքյան օգտատերերը սկսեցին շրջանառել «ԼԳԲՏ ակտիվիստ» գրառումով Վիգեն Սարգսյանի ծաղրական նկարները: Փաշինյանի թե՛ այս, թե՛ հետագա անդրադարձները սեռականության և ԼԳԲՏ հարցերին ի հայտ են բերում ոչ միայն դրանց պոպուլիստական–խուսափողական, մեծ մասամբ պահպանողական բնույթը, այլև այդ հարցերի հանդեպ զգայունության և խորքային գիտելիքի պակասը, մեծ հաշվով՝ հասարակության հետ դրանց մասին խոսելու ընդհանուր անմշակ քաղաքական լեզուն:

8. Ազատություն. (2018, դեկտեմբեր 5). *Վիգեն Սարգսյանը ԼԳԲՏ ակտիվիստ է. Նիկոլ Փաշինյան.* Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=vRn–2fT8n6M:

«Իմ մարմինն անձնական է». շնորհանդեսի խափանումը

Կին իրավապաշտպանների թիրախավորումը հռետորաբանական մակարդակից վերաճեց ֆիզիկական հարձակման 2019 թ. մայիսի 4–ին «Բուկինիստ» սրճարանում՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ–ի կողմից իրականացվող «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսին: Գիրքը կազմվել էր ամերիկացի հեղինակ Լինդա Վալվուրդ Ջիրարդի համանուն գործի (1984) թարգմանության և դրա տեղայնացման հիման վրա: Այն նախատեսված է 3–6 տարեկան երեխաների և նրանց ծնողների համար՝ նպատակ ունենալով ծնողների միջոցով երեխաներին տեղեկացնելու մարմնի անձեռնմխելիության մասին և հեռու պահելու նրանց հնարավոր սեռական ոտնձգություններից: Գրքի շնորհանդեսը չվրիպեց հակագենդերային արշավներ նախաձեռնողների տեսադաշտից նախ և առաջ այն պատճառով, որ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը» գործում է «Կանանց ռեսուրսային կենտրոնի» աջակցությամբ և հետևաբար կապված է Լարա Ահարոնեանի հետ («Լարա Ահարոնեանի գվարդիայի որոշ անդամներ...»): Նրանք ներխուժեցին միջոցառման տարածք, ձվերով հարվածեցին կազմակերպիչների ուղղությամբ՝ կանանց պիտակավորելով հայրիշխանական կարծրատիպերով և հեգնելով («դուխով տղամարդ կին», «կինն իրեն կնոջ նման պետք է պահի», «կինը տղամարդու հետ գոռալով չպետք է խոսի», «գետինը մտնեք, որ ծիծաղում եք տարիքով տղամարդու ասածի վրա», «կանչեք ձեր ամուսիններին, որ իրենց հետ խոսենք»):

Հակագենդերային արշավորդների կազմակերպած հարձակման սկանդալի հետևանքով չեղարկվեց Խնկո Ապոր անվան գրադարանում գրքի շուրջ երեխաների և ծնողների հետ օրեր անց նախատեսվող հանդիպում–քննարկումը: Խնկո Ապոր անվան գրադարանի տնօրենությունն, ըստ էության, ընկրկեց և խախտեց տարածք տրամադրելու պայմանավորվածությունը՝ խուսափելով «ոչ հաճելի հարաբերությունների ու խոսակցությունների» դաշտ մտնելուց՝ ընդունելով հանդերձ, որ բարձրացված աղմուկն «անիմաստ» է[9]: Այսպիսով՝ հակագենդերային խմբերը այս և մի շարք

9. Եղիազարյան, Լ. (2019, մայիս 6). Խնկո Ապոր անվան գրադարանում աղմկահարույց գրքի քննարկումը չի կայանա. *Իրավունք*. Վերցվել է՝ https://bit.ly/2Kd8Qbg:

այլ դեպքերում գործնականում հաջողեցին նեղացնել գենդերային և սեռականության զգայունակության շուրջ աշխատող իրավապաշտպանների առանց այն էլ սահմանափակ հանրային տարածքները՝ ավելի լուսանցքայնացնելով վերջիններիս գործունեությունը:

Լարա Ահարոնեանին և նրա գործընկերներին մեղադրեցին մանկապղծության մեջ, իսկ մեղադրանքը հանրության աչքում հիմնավոր դարձնելու համար հակագենդերային խմբերը դիմեցին այսպես կոչված մասնագետների օգնությանը՝ բժիշկներ, հոգեբաններ, որոնք մշտապես համագործակցել են հակագենդերային արշավների հետ՝ խախտելով մասնագիտական էթիկայի հնարավոր և անհնար սահմանները: Վերջիններս պնդում էին, որ «Իմ մարմինն անձնական է» գիրքը կդրդի բռնությունների, կշատացնի մանկապիղծների և մանկապղծության զոհերի թիվը: Այլ կերպ ասած՝ գիրքը բնութագրում էին իբրև «այլասերված մարդու կողմից ուրիշին այլասերում»[10] ու «երեխաներին սեռական վաղ հասունացման մեջ ներգրավում»[11]: Գրքի թարգմանված լինելը ևս շահարկվեց՝ այն իբրև «Արևմուտքի այլասերված բարքերի քարոզչություն» և «Սորոսից լափ ստացողների կողմից 3–6 տարեկան երեխաների պղծություն» ներկայացնելու նպատակով:

Երեխաների կողմից ծնողների օգնությամբ սեփական մարմնի ճանաչմանը միտված գիրքը ամբողջովին նվիրված է երեխայի մարմնի ինքնագիտակցությանը և սեռական ոտնձգությունները կանխելուն, սակայն դա չխանգարեց, որ այն որակվի իբրև «նույնասեռականության քարոզ», «ավանդական ընտանեկան և քրիստոնեական արժեքները» զանցող ձեռնարկ, որը կրկնում էր տարբեր երկրներում գործող ծնողական կոմիտեների կողմից ձևակերպվող հայտնի առասպելները: Չունենալով որևէ հիմնավոր գիտելիք ֆեմինիստական շարժման մասին՝ միաժամանակ հանրության շրջանում ֆեմինիզմը դիվականացնող կարծրատիպեր և վախեր զարգացնելու նպատակով «Իմ մարմինն անձնական է» գրքի վերնագիրը ներկայացվեց իբրև ֆեմինիստական շարժման

10. YerevanToday. (2019, մայիս 7). Երեխաների համար նախատեսված գրքում ամեն ինչ աղավաղված ձևով է ներկայացված. Նարինե Ներսիսյան. Վերցվել է՝ https://bit.ly/2xAuxza:

11. LiveNews. (2019, մայիս 10). «Իմ մարմինն անձնական է» գիրքը մանկապղծության քարոզչության և ուսուցման ձեռնարկ է. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=gJ_0_XKso_c:

արգասիք, որն իբր միտված է երեխաների և ծնողների միջև կոնֆլիկտներ ստեղծելուն, հետագայում երեխաների մեջ ԼԳԲՏ կողմնորոշում սերմանելուն, ժողովրդագրական ցուցանիշը նվազեցնելուն և ավելի լայն «ազգակործան» ծրագիր իրագործելուն:

Հակագենդերային ապատեղեկատվական արշավում կրկին անկյունաքարային դեր ունի ազգային և հանրային անվտանգության զգացումի հարցը, որը խաղարկվում էր՝ սեղմելով հայկական մշակույթի համար ցավոտ կետերին: Այսպես՝ սեռական ոտնձգություններից կրթության և իրազեկման միջոցով երեխաներին պաշտպանող գրքի կազմումը համեմատվում էր «21–րդ դարում փափուկ ուժով ցեղասպանության» և «սպիտակ սպանդի» հետ:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Գրքի շնորհանդեսի շուրջ աղմուկին արձագանքեց աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը իր պաշտոնավարման 100 օրն ամփոփող ասուլիսում՝ կարևորելով Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի գործունեությունն ու համագործակցությունը պետության հետ՝ սեռական բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարցերում: Բաթոյանը կարևորեց գրքի կրթական և տեղեկատվական բնույթը. «Ես խրախուսում եմ կրթությունը, ես խրախուսում եմ իրազեկվածությունը, ես խրախուսում եմ գիտելիքը, և դա կարող է լինել տարբեր միջոցներով»[12]: Բաթոյանը նաև գրքի առցանց տարբերակը տեղադրեց իր ֆեյսբուքյան էջում՝ հերքելով, որ գիրքը այլասերում է պարունակում՝ այդպիսով արձագանքելով միջոցառումը խափանողների կողմից շրջանառվող նենգափոխումներին և շահարկումներին: Բաթոյանի՝ իրավապաշտպանների գործունեությանն աջակցող արձագանքը, որը կարող էր դառնալ գրքի շուրջ այլևայլ ապատեղեկատվական հորինվածքների նվազեցման գործոն, դարձավ շահարկման առարկա: Նախարարի խոսքը

12. Բաղալյան, Ս. (2019, մայիս 6). «Իմ մարմինն անձնական է» գիրքը սկանդալի առիթ է դարձել. Ազատություն. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/29924856.html:

ոչ միայն չհանդարտեցրեց գրքի շուրջ ստեղծված աղմուկը, այլև ծառայեցվեց հենց իրեն՝ նախարարին՝ որպես նախկին իրավապաշտպանի[13] և ներկայիս կառավարության անդամի թիրախավորելու և հեղինակազրկելու հերթական առիթին. «Պղծությունները քարոզողներին այս իշխանության օրոք տրվել է կանաչ լույս պետական մարմինների և պաշտոնյաների անմիջական թույլտվությամբ և հովանավորչությամբ: Զարուհի Բաթոյանը ղեկավարել է ՀԿ, որը ֆինանսավորվել է USAID–ի և Սորոսի հիմնադրամների կողմից, և բնականաբար նա հիմա պաշտպանում է իր թիմակիցներին»[14]:

Գրքի շնորհանդեսի տապալմանն արձագանքեց նաև Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը: Չնայած շեշտելով երեխաների պաշտպանվածության հարցում երեխաների և նրանց ծնողների իրազեկվածության կարևորությունը՝ ՄԻՊ–ը ոչ թե հանդես եկավ իրավապաշտպաններին սատարող հայտարարությամբ, այլ չվարանեց անուղղակիորեն մեղադրել տուժած կողմին՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնին»՝ լարվածության առիթ ստեղծելու համար[15]:

Գրքի շուրջ ապատեղեկատվական աղմուկի օրերին իր ասուլիսներից մեկի ժամանակ թեմային անդրադարձավ նաև վարչապետ Փաշինյանը՝ ընդգծելով գրքի կրթական և կանխարգելիչ արժեքը՝ միաժամանակ համերաշխություն հայտնելով այլասերման մտահոգություններ ունեցողներին. «Ես հարգանքով եմ վերաբերվում այն մարդկանց և պատրաստ եմ լսելու այդ տեսակետները, որ սա այլասերվածություն է: Եթե այլասերվածություն է, ուրեմն պետք է արմատախիլ անենք: Բայց եկեք հասկանանք, թե սա ինչ է... Իսկ գուցե տարեցտարի մանկապղծության դեպքերը հենց այդ հասարակական կազմակեր-

13. Զարուհի Բաթոյանը դեռևս մինչև կուսակցական գործունեությունն ակտիվ հանրային գործունեություն է ծավալել որպես հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները բարձրաձայնող լրագրող և իրավունքների պաշտպան:

14. Livenews.am. (2019, մայիս 6). Ինչո՞ւ է Զարուհի Բաթոյանը գովազդում այլասերություն քարոզող գիրքը. հյուրը՝ Հայկ Այվազյան. Վերցվել է՝ https://livenews.am/press/2019/10669/06/17/51/:

15. Անանյան, Ռ. (2019, մայիս 6). «Իմ մարմինն անձնական է» գրքի ընդհատված շնորհանդեսի հետքերով. երեխաների սեռական դաստիարակությունը՝ արգելվա՞ծ թեմա. Factor.am. Վերցվել է՝ https://factor.am/147996.html:

պությունների գործունեության արդյունքո՞ւմ են նվազում: Երեխաներին պետք է սեռական գրագիտություն սովորեցնել: Դրա բացակայությունը ազդեցություն ունի հասուն կյանքի վրա, սոցիալական կյանքի վրա...»[16]:

Այսպիսի արձագանքը մի կողմից՝ սկզբունքային աջակցություն էր սեռական բռնության դեմ պայքարող իրավապաշտպաններին, մյուս կողմից՝ շրջանցում էր նրանց վրա ֆիզիկական և բարոյական հարձակման, գրադարանի կողմից նրանց տարածք տրամադրելուց հրաժարվելու և, ըստ էության, իրավապաշտպանների պաշտպանության և նրանց ազատ գործունեության երաշխիքների տրամադրման հարցերը:

#Բռնության_ձայնի դեմ արշավը

2019 թ. հունիսի 29–ին «Հետք» հետաքննական լրագրության կայքը հրապարակեց մի նյութ, որը պատմում էր Հայաստանում սեռական բռնության ենթարկված չեխ Էվայի պատմությունը[17]: 2019 թ. հուլիսի 1–ին իր ֆեյսբուքյան էջում Հանրային ռադիոյի լրագրող Լյուսի Քոչարյանը վերահրապարակեց այս հոդվածը: Էվայի՝ բռնության պատմությունը և դրան Լյուսի Քոչարյանի արձագանքը խթան դարձավ տարբեր աղջիկների և կանանց (մի քանի դեպքերում նաև տղամարդկանց) համար, որ իրենց բռնության փորձառությունների մասին անանուն նամակներ գրեն Քոչարյանին և խնդրեն հրապարակել դրանք, սակայն անանուն. այդպես խնդիրների բարձրաձայնման բերումով ծնվեց *#բռնության_ձայնը* արշավը[18]: Շատ կարճ ժամանակ անց *#բռնության_ձայնը* պիտա-

16. Iravaban.net. (2019, մայիս 8). Գիրքը կարդացել եմ այսօր առավոտյան. վարչապետը՝ «Իմ մարմինն անձնական է» գրքի մասին. Վերցվել է՝ https://iravaban.net/225472.html:

17. Հովհաննիսյան, Հ. (2019, հունիս 29). Մազերն են մեղավոր. Hetq.am. Վերցվել է՝ https://hetq.am/hy/article/105144:

18. 2020 թ. մարտ ամսին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի և առաջին տիկին Մելանյա Թրամփի կողմից Լյուսի Քոչարյանը իր այս նախաձեռնության և մինչ այդ ձեռնարկած այլ իրազեկման արշավների համար ստացավ «Խիզախ կին» միջազգային մրցանակը (մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հիմնախնդիրները

կով պատմությունները հակագենդերային հայտնի շրջանակները ներկայացրին որպես Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման համար պարարտ հողի նախապատրաստություն՝ այդպիսով ստեղծելով թե՛ Լյուսի Քոչարյանի, թե՛ Կոնվենցիայի շուրջ հյուսելով կեղծիքի, ապատեղեկատվության և շահարկումների մեծ կծիկ:

Լյուսի Քոչարյանին այս կծիկում վերագրվեց Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը խթանող «ագենտի» դերը («ստամբուլյան ճտերի գործածած տեխնոլոգիաներ»), նրա մասին հյուսվեց միաժամանակ թե՛ կառավարող ուժի և թե՛ «Բաց հասարակության հիմնադրամներ — Հայաստան»–ի ձեռքում «գործիք» լինելու մասին դրույթը:

Ավելին՝ հակագենդերային խմբերը շատ արագ կասկածի տակ դրեցին բռնության ենթարկված կանանց փորձառությունն ու բռնության պատմությունների իսկությունը (այդ թվում նաև Էվայի՝ սեռական բռնության ենթարկվելու դաժան փաստը՝ չնայած այն հանգամանքին, որ բռնարարը խոստովանել էր իր մեղքը, իսկ 2019 թ. մայիսին դատապարտվել 3 տարվա ազատազրկման՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի վճռով): Ըստ էության, հերքելով Հայաստանում աղջիկների և կանանց հանդեպ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական բռնությունների բազմաթիվ աղաղակող դեպքերը և անձնական դրամատիկ պատմությունները՝ կրկին կանանց հանդեպ բռնության բարձրաձայնումը կապեցին «սորոսական» դավադրության առասպելի հետ: Այս խմբերը ոչ թե միանշանակ բացառում էին (դա ակնհայտորեն խոցելի կդարձներ իրենց «օբյեկտիվ» դերը) ընտանեկան ու սեռական բռնության գոյությունը Հայաստանում, այլ փորձ էին անում նվազեցնելու դրա մասշտաբները, ինչը խոչընդոտում էր լրագրող Քոչարյանի *#բռնության_ձայնը* արշավը: Քոչարյանի լրագրողական և մարդկային արժանապատվությունը ոտնահարելու, նրա կողմից իրականացվող արշավի հանրային նշանակությունը նսեմացնելու նպատակով բարոյական հենասյուների պահպանման դիրքից հանդես եկող հակագենդերային խմբերը չխորշեցին Քոչարյանի հանդեպ իրականում հակաբարոյական բնույթի թիրախավոր-

---

բարձրաձայնելու և հոգեբանական, ֆիզիկական ու ընտանեկան բռնության ենթարկվածներին հարթակ տրամադրելու համար): Տես Ազատություն. (2020, մարտ 5). ԱՄՆ պետքարտուղարը և առաջին տիկինը «Խիզախ կին» մրցանակ հանձնեցին Լյուսի Քոչարյանին. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/30469825.html:

ման արշավից՝ քննարկման առարկա դարձնելով նրա անձնական կյանքը, մասնավորապես նրա և առողջական խնդիրներ ունեցող նրա երեխայի պատմությունը: Իսկ *#բռնության_ձայնը* սկսեցին բնութագրել իբրև պոռնոգրաֆիկ նյութերի տարածում: Շշրջանցվեց նաև Bravo.am կայքում սեռական կյանքին անդրադարձող տեղեկատվական սյունակ վարելու Քոչարյանի նախկին փորձը: Այսպիսով՝ Լյուսի Քոչարյանին թիրախավորելու քաղտեխնոլոգիական գործիքակազմում կրկնվում էին «հակապետական քարոզչության», դրանով իսկ «ազգային անվտանգությանը» սպառնացող գործունեություն իրականացնելու, եկեղեցու, բանակի, ընտանիքի «հիմքերը սասանելու» մեղադրանքները:

Այս դեպքի առանձնահատկությունն այն էր, որ հակագենդերային արշավներին հուզում էր, և պաշտպանության տակ էր առնվում մեկ այլ, եթե կարելի է այսպես կոչել, առասպել–ինստիտուտ՝ «հայ ավանդական–առնական տղամարդը»: Հակագենդերային արշավների ներկայացուցիչները, որոնք գլխավորապես տղամարդիկ են, խնդիր ունեին փրկելու իրենց կարծիքով վտանգված այս՝ «հայ տղամարդու ավանդական–առնական» կերպարը, որն, ըստ էության, խաթարվում էր բարձրաձայնված պատմությունների ներքո երևան եկած բռնարար տղամարդկանց կերպարներով: Այդպիսով նրանք ջանք չէին խնայում ապացուցելու, որ բռնության ենթարկված կանանց «ոչ հավաստի» պատմությունները հատուկ «ապամարդկայնացնում» են ու բռնարարի վերածում հայ տղամարդկանց՝ հանրային խնդրի բարձրաձայնումը հանգեցնելով ինքնության դեմ կամ համար պայքարի դաշտի:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Հակագենդերային արշավները ինչպես իրենց ծագման օրվանից, այսօր էլ պետական քաղաքական համակարգերում գործընկեր ուժեր, կուսակցություններ և անհատներ ունեն: Դրանք իրենց հանրային խոսքի հնարավորությամբ և ուժով գենդերային հիմքով խնդիրների հանդեպ կասկածներ են սերմանում, կանանց՝ բռնության անձնական փորձառության հանդեպ թերահավատություն տարածում, պաշտպանում անքննելի հայրիշխանու-

թյան անառիկության դիրքերը, դրանով հանրային խնդիրները լուծելուն ուղղված ջանքեր դնելու իրենց պարտավորությունն իրականացնելու փոխարեն խլացնում խնդիրը, լռեցնում ու ավելի խոցելի դարձնում այն տուժած կանանց, որոնք համարձակվել էին խոսել իրենց դառը փորձառության մասին: Այսպիսի քաղաքական անպատասխանտվության և կեղծավորության դրսևորումն էր ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Արման Աբովյանի՝ ոստիկանություն կատարած հարցումը՝ պարզելու *#բռնության_ձայն*–ի շրջանակում բացահայտված պատմությունների իսկությունը՝ հիմք ունենալով ոստիկանություն այդ դեպքերի առիթով հաղորդումների ներկայացման փաստը (հասկանալի է, որ բռնության զոհերից ոչ բոլորն են իրավապահներին դիմում): «...տիկին Քոչարյանն իր ֆեյսբուքյան էջում տեղադրում է իբր բռնության ենթարկված կանանց պատմությունները: Այդ սարսափազդու պատմությունները կարդալուց հետո ինձ մոտ տպավորություն էր ստեղծվել, որ Հայաստանն ուղղակի ողողված է վայրենի բռնարարներով, և, օրինակ, երևանյան փողոցներում կատաղած տղամարդիկ անդադար ծեծում և բռնաբարում են կանանց»,— գրել է Աբովյանը և հավելել, որ կասկածելի զուգադիպությամբ այդ պատմությունները ջրի երես դուրս եկան այն ժամանակ, երբ շատ ակտիվ սկսվեց Ստամբուլյան կոնվենցիայի գովազդը Հայաստանում: ...Ոչ մի իրական ապացույց այդ պատմություններից այդպես էլ չհրապարակվեց»,— Աբովյանն այս մասին հայտարարեց մարտի 5–ին՝ Լյուսի Քոչարյանին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի և առաջին տիկին Մելանյա Թրամփի կողմից (իր այս նախաձեռնության և մինչ այդ ձեռնարկած այլ իրազեկման արշավների համար) «Խիզախ կին» միջազգային մրցանակը շնորհելուց հետո սեռական և այլ բնույթի բռնության ձևերի դեմ պայքարը Հայաստանում կրկին տեղավորելով աշխարհաքաղաքական խաղերի նսեմացնող համատեքստում[19]:

19. 24news.am. (2020, մարտ 5). Աբովյանը դիմել է ոստիկանություն՝ «Բռնության ձայնը» նախաձեռնության իսկությունը ճշտելու. Վերցվել է՝ https://www.24news.am/news/84977: Ավելին՝ պատմությունների իսկությունը ստուգելու հարցով ոստիկանություն է դիմել նաև հակագենդերային շարժման ներկայացուցիչներից մեկը: Տես LiveNews. (2019, հուլիս 19). Ո՞վ է Լյուսի Քոչարյանը, ո՞ւմ պատվերն է կատարում. նախապատրաստում Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=ABhmBzqTdRg:

Թեև ԲՀԿ–ն ԱԺ–ում հակագենդերային արշավների հիմնական կուսակցական հենարանն է, նույն գործելաոճով գործիչներ կան նաև «Իմ քայլը» խմբակցությունում, որոնցից առավել վառ ներկայացուցիչ է Սոֆյա Հովսեփյանը: Վերջինս նույնպես *#բռնության_ձայն* արշավի հիմքում ազգային նկարագրի դեմ արշավ և գաղափարական օրակարգ է տեսնում. «Բավական է էպիզոդները ներկայացնեք որպես ազգային նկարագիր՝ հանուն ձեր գաղափարների տարածման: Չի ԱՆՑՆԵԼՈՒ»[20]:

«Իմ քայլը» խմբակցության մեկ այլ պատգամավոր՝ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Սարգիս Խանդանյանը, նույնպես հասարակության հատկանիշի շուրջ կառուցելով իր խոսքը, այդուհանդերձ խրախուսեց խնդրի բարձրաձայնումը և բռնության դատապարտումը. «Ես չէի ուզենա, որ սա [բռնությունը] որպես հասարակության հատկանիշ վերագրեինք, պետք է սահմանենք, որ կա այս խնդիրը, ու ինչպես ենք առնչվում և ինչ գործիքներ ենք կիրառում, որ նախ մարդիկ բարձրաձայնեն այդ մասին, չդատապարտվեն բարձրաձայնելու համար, բռնարարները դատապարտվեն, իսկ բռնության ենթարկված մարդիկ վստահ լինեն, որ իրենց հետ վատ բան չի պատահի խոսելուց կամ իրավապահ մարմիններին դիմելուց հետո: ...Ընտանիքի և բարոյականության ամրապնդումը խաթարվում է ոչ թե ընտանեկան կամ սեռական բռնության մասին խոսելիս, այլ հենց ընտանեկան և սեռական բռնություններն են խաթարում ընտանեկան և բարոյականության արժեքները»[21]:

Լյուսի Քոչարյանի նախաձեռնությունը կառավարող ուժի որոշ ներկայացուցիչների կողմից, որոնք բռնության խնդրի մեջ լուծումներ, ոչ թե (ազգային–ապազգային) ինքնության հարցեր են որոնում, առավել միանշանակ դրվատական և աջակցող արձագանք ստացավ: «Իհարկե, հիասթափեցնող են բռնության զոհերին մեղադրող և բռնարարներին արդարացնող

20. Առաքելյան, Ա. (2019, հուլիս 5). Նկարագրել, որ ամբողջ հանրապետությունը սեռական բռնության է ենթարկվում, անթույլատրելի է. Սոֆյա Հովսեփյանը՝ «Բռնության ձայնը» հեշթեգով գրառումների մասին. Tert.am. Վերցվել է՝ https://bit.ly/2VdUhdI:

21. Հանրային հեռուստաընկերություն. (2019, հուլիս 7). Հանրային քննարկում. սեռական բռնություն. Վերցվել է՝ https://bit.ly/2XHZjko:

ստոր մեկնաբանությունները, սակայն մենք բոլորս պետք է հասկանանք, որ պարտավոր ենք անցնելու ավելի հասուն, բռնության նկատմամբ զրոյական հանդուրժողականություն ունեցող հասարակություն ունենալու ճանապարհը», — այսպես էր *#բռնության_ձայնը* հրապարակումներին արձագանքել առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը[22] «Բռնության ձայնը»[23] արշավին: Մեկ այլ առիթով Թորոսյանը կարևորել է բռնության դեպքերը լսելի դարձնելու պրակտիկան. «Այս օրերին տարածված ֆլեշմոբն է ցույց տալիս, թե ինչքան սին է այդ պաշտոնական վիճակագրությունը, երբ կան հարյուրավոր դեպքեր, առնվազն այս օրերին դա տեսանք, ու մենք պետք է խոսենք այդ մասին, ոչ թե մեր գլուխը ջայլամի նման մտցնենք ավազի մեջ ու ասենք, որ մենք «ավանդապաշտ» երկիր ենք: Ես չեմ ուզում մեզ համեմատեմ ուրիշ երկրի հետ, բայց եթե որևէ երկրում կա որևէ պրոբլեմ, իսկ սեռական ու ոչ միայն սեռական բռնությունը պրոբլեմ է, ու կզարմանամ, եթե որևէ մեկը ինձ ասի, որ դա պրոբլեմ չէ, այդ դեպքում ես այդ մարդուն կասեմ, որ դիմի հոգեբույժի, իսկ այդ պրոբլեմին մենք պետք է դիմացով կանգնենք ու լուծենք՝ սկսած, ես ինքս արձագանքել եմ այդ ֆլեշմոբին ու ասել եմ, որ սկսած մանկապարտեզից ու դպրոցից երեխաներին կրթելով, վերջացրած կանխարգելման մեխանիզմներ ներդնելով դպրոցներում, բժշկական հաստատություններում, և ընդհանրապես հասարակությանն ավելի հանդուրժող դարձնենք մարդկանց նկատմամբ»[24]:

#Բռնության_ձայնը հրապարակումներին հանրայնորեն աջակցություն ցուցաբերեցին նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը և արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը:

Կառավարող ուժի բոլոր այս անդամները բռնության մշակույթի և լռությամբ դրա պահպանման մասին իրենց դիրքորոշման

22. Armeniasputnik. (2019, հուլիս 3). «Այլևս չի կարող շարունակվել». Արսեն Թորոսյանը սարսափել է բռնության մասին պատմություններից. Վերցվել է՝ https://bit.ly/2Vj0hCe:

23. Արշավի շրջանակներում հանրայնացված պատմությունները հասանելի են հետևյալ ֆեյսբուքյան էջում՝ https://bit.ly/2W2swFA:

24. 24news.am. (2019, հուլիս 4). Ծեծը չի կարող լինել բարոյախրատական. Վերցվել է՝ https://bit.ly/2VzVrRa:

արտահայտման առիթով հերթական հակագենդերային հարձակումների թիրախ դարձան այն նույն մեթոդական ցանկով, ինչ մինչ այս էր կիրառվում:

Ստամբուլյան կոնվենցիան դիվականացնող արշավը

Ինչպես մի շարք երկրներում (հիմնականում Եվրոպայի խորհրդի անդամ առավել աջ պոպուլիստական կառավարություններով պետություններում[25]), այնպես էլ հետհեղափոխական Հայաստանում հակագենդերային արշավների դրսևորման կիզակետն է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի» կամ այլ կերպ ասած՝ Ստամբուլյան կոնվենցիայի (ստորագրվել է 2011 թ. Ստամբուլում) վավերացումը:

Կոնվենցիայի նպատակները մի քանիսն են: Առաջին՝ այն նպատակ ունի պաշտպանելու կանանց և երեխաներին բոլոր տեսակի բռնություններից, ինչպես նաև կանխարգելելու և նվազագույնի հասցնելու ընտանեկան բռնությունը: Երկրորդ՝ Կոնվենցիան ուղղված է նպաստելու կանանց հանդեպ բոլոր տեսակի խտրականությունների հաղթահարմանը: Երրորդ՝ այն միտված է այնպիսի իրավաշրջանակի, քաղաքականությունների և մեխանիզմների ընդունմանը, որոնք կերաշխավորեն կանանց հանդեպ բռնության, ընտանեկան բռնության և խտրականությունների բացառումը[26]:

Հայաստանը հավանություն է տվել Կոնվենցիային դեռևս 2017 թ. դեկտեմբերի 28–ին և այն ստորագրել է 2018 թ. հունվարի 18–ին Ստրասբուրգում: Այդ ժամանակ Կոնվենցիան դեռևս չէր ստացել այն հանրային–քաղաքական հնչեղությունը, որ առկա է դրա վավերացման շուրջ այսօր: Կոնվենցիայի շուրջ աղմուկն առաջա-

25. O' Loughlin, B. (2018, March 8). Istanbul Convention: clearing away the fog of misconceptions. Retrieved from https://euobserver.com/opinion/141235.

26. Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence. (2011, May 11). Retrieved from https://www.coe.int/fr/web/conventions/full–list/–/conventions/rms/090000168008482e.

ցավ որոշակի հանգամանքներում, որոնց քննությունը թույլ է տալիս խոսել արշավի ուղղորդված և կազմակերպված բնույթի մասին այն նույն աջ պոպուլիստական (կրոնական, հոմոֆոբ, օլիգարխիկ) խմբերի կողմից, որոնք պարբերաբար հանդես են գալիս մարդու իրավունքների ոլորտում առաջադիմական բարեփոխումներն աշխարհաքաղաքական և ներքաղաքական նպատակներով շահարկող, կնատյացության և բռնության մշակույթը խոսքով հերքող, սակայն իրենց գործողություններով հաստատող արշավներով:

Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ պայքարող հայաստանյան հակագենդերային արշավները մեծապես օգտվում են գլոբալ հակագենդերային արշավներից: Դրանց պես տեղական արշավները իրենց առանցքային գաղափարաբանությունը բխեցնում են Կոնվենցիայի նպատակներն ընդդեմ ընտանեկան արժեքների և բարոյականության ձևակերպելուց, կրկնում են այլ երկրներում արդեն կիրառված լոզունգներ, դիսկուրսիվ միջոցներ ու բողոքի պրակտիկաներ:

Այսպես՝ Կոնվենցիայի վավերացման դեմ պայքարողները տեղում սկսեցին շրջանառել «երրորդ սեռի» ամրագրման և նույնասեռ ամուսնությունները օրինականացնելու մասին ստահոդ տեղեկատվությունը, որ նույնությամբ տարածվել էր, օրինակ, Կոնվենցիան ստորագրած[27], բայց վավերացումից հրաժարված Բուլղարիայում: Այս նենգափոխող հնարքի համար աջ պոպուլիստ ուժերը հղում են անում Կոնվենցիայի հոդված 3–ին, որը «գենդեր» եզրը սահմանում է իբրև սոցիալական դերերի, վարքագծերի, գործողությունների և բնութագրիչների ամբողջություն, որը հասարակությունները համարում են կնոջը և տղամարդուն համապատասխան: Կոնվենցիային ընդդիմացողները պնդում են, թե այս հոդվածը դուռ է բացում դեպի նույնասեռ ամուսնությունների օրինականացում և նույնասեռականության «քարոզչություն»:

Բուլղարիայի ԺԲԵՁ (GERB) աջ պոպուլիստ կուսակցությունը ղեկավարող վարչապետը (այլ աջական–պոպուլիստ կուսակցությունների հետ կոալիցիոն կառավարության ղեկավարն է) հրաժարվեց Կոնվենցիայի վավերացումից 2018 թ. փետրվարին: Նրա

27. Chart of signatures and ratifications of Treaty 210: Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence. Retrieved from https://www.coe.int/en/web/conventions/full–list/–/conventions/treaty/210/signatures.

կուսակցության 75 պատգամավոր պահանջեց, որ երկրի Սահմանադրական դատարանը քննի, թե արդյոք Կոնվենցիան հակասում է Բուլղարիայի Սահմանադրության՝ ամուսնությունն իբրև «տղամարդու և կնոջ միջև կամավոր միություն» սահմանող հոդվածին[28]: Նույն տարվա հուլիսին դատավորների մեծ մասի եզրակացությունն այն էր, որ Կոնվենցիան հակասահմանադրական է, չնայած որ այն որևէ կերպ չի սահմանում ընտանիքի կատեգորիան և չի անդրադառնում նույնասեռ ամուսնություններին:

Բուլղարիային հաջորդեց Սլովակիան: Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիկոն 2018 թ. փետրվարին հայտարարեց, որ հրաժարվում է Կոնվենցիան վավերացնելուց, քանի որ այն հակասում է ամուսնության՝ իբրև հետերոսեքսուալ միության սահմանմանը[29]: Խորվաթիայում ևս Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը կաթոլիկ պահպանողականների և մարդու իրավունքներով, ֆեմինիստական հարցերով զբաղվող առաջադիմական քաղաքացիական հասարակության միջև բախման առարկա դարձավ: Իշխանությունների խուսափողական քաղաքականության թողտվությամբ Կոնվենցիայի վավերացման դեմ ակտիվորեն պայքարում էին կաթոլիկ քահանաներ, պահպանողական ՀԿ–ներ («Հանուն ընտանիքի»[30]) ու նախաձեռնություններ («Ստամբուլյան կոնվենցիայի մասին ճշմարտությունը»)[31]:

2018 թ. նոյեմբերի 22–ին Եվրոպայի խորհուրդը հայտարարություն տարածեց՝ փորձելով հակադարձել Ստամբուլյան կոնվենցիայի շուրջ առկա թյուրըմբռնումներին՝ ընդգծելով. «Չնայած հստակորեն ամրագրված նպատակներին՝ բազմաթիվ կրոնական

28. Vassileva, R. (2018, August 2). Bulgaria's constitutional troubles with the Istanbul Convention. Retrieved from https://bit.ly/3bfCebT.

29. Gotev, G. (2018, February 23). After Bulgaria, Slovakia too fails to ratify the Istanbul Convention. Retrieved from https://bit.ly/35JZQV3. Սլովակիայի պառլամենտը ևս փոփոխել է երկրի Սահմանադրությունը 2014–ին՝ սահմանելու ամուսնությունն իբրև բացառապես տղամարդու և կնոջ միջև միություն:

30. 2013–ին կազմակերպությունը հաջողեց հանրաքվե անցկացնելու և խորվաթական սահմանադրությունում ամուսնությունն իբրև բացառապես տղամարդու և կնոջ միություն սահմանելու հարցում: Հայաստանում նույնանուն դաշինք է ձևավորվել 2014–ի դեկտեմբերի 12–ին, որը, ըստ դաշինքը նախաձեռնող Համահայկական ծնողական կոմիտեի, միավորում էր 100 ՀԿ և 7 կուսակցություն. հակագենդերային արշավորդների այս խմբին աջակցում էր նաև Հայ առաքելական եկեղեցին:

31. Alcalde, M., Saric, J. (2018, April 9). The Istanbul Convention in Croatia: Attending to the anxiety in the intersection of belief and policy–making. Retrieved from https://bit.ly/3bioc9p.

և ծայրահեղ պահպանողական խմբեր թյուր պատումներ են տարածում Ստամբուլյան կոնվենցիայի, հատկապես «գենդեր» հասկացության շուրջ»[32]:

Եթե Բուլղարիայում, Սլովակիայում Կոնվենցիայի վավերացման դեմ արշավում էին հենց աջ պոպուլիստ իշխանությունները (կրոնական խմբերի և աջ ՀԿ–ների աջակցությամբ), ապա Հայաստանը այն երկրներից է, որտեղ հակագենդերային արշավը հիմնականում վարում են ընդդիմության հարթակից, որտեղ ակտիվ առաջամարտիկներ են որոշ հոգևորականներ, ռուսամետ քաղաքականություններով[33] աչքի ընկած ««Կամք» նախաձեռնություն»

32. Council of Europe. (2018). Ending misconceptions about the Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence. Retrieved from vghhttps://search.coe.int/directorate_of_communications/Pages/result_details.aspx?ObjectId=09000016808f0fb1of–belief–and–policy–making/.

33. «Կամք» նախաձեռնության հիմնադիր Վահագն Չախալյանը ձերբակալվել է Վրաստանում 2008 թ. հուլիսի 21–ին՝ դատապարտվելով տասը տարվա ազատազրկման: Վրաստանի դատարանը Չախալյանին մեղավոր էր ճանաչել զենք–զինամթերքի ձեռքբերման և պահպանման, հանրային կարգը խախտող զանգվածային միջոցառումների կազմակերպման կամ ակտիվ մասնակցության և իշխանության ներկայացուցչի դեմ կատարված խուլիգանության հոդվածներով: Վրաստանի այդ ժամանակաշրջանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին Չախալյանին հանրայնորեն մեղադրում էր նաև արտասահմանյան գործակալ և լրտես լինելու մեջ: Երբ 2013–ին Չախալյանը համներմամբ ազատ արձակվեց, Սահակաշվիլին խստորեն քննադատեց Վրաստանի վարչապետին (Բիձինա Իվանիշվիլի) և Ազգային ժողովին՝ որակելով Չախալյանին որպես «Վրաստանի թշնամի», որը հատուկ ծառայություններ է մատուցում Ռուսաստանին և աշխատում է ռուսական ռազմական հետախուզական ծառայության համար: Նշենք նաև, որ Չախալյանի ազատ արձակման համար Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ–ն խնդրագիր էր ներկայացրել Իվանիշվիլիին: Այս համատեքստում նաև Սահակաշվիլին մեղադրում էր Վրաստանի վարչապետին Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ ունենալու և նրան ծառայություններ մատուցելու մեջ: Չախալյանը Ախալքալաքում հիմնադրված խմբավորումներից մեկի անդամ էր, որը մի շարք բողոքի ցույցեր էր կազմակերպել Վրաստանից ռուսական զորքերի դուրսբերման դեմ 2005–ին, ինչպես նաև պահանջում էր Ջավախքի շրջանի ավտոնոմիա: Տես https://bit.ly/3cnTpcO:
Հայկ Այվազյանն իր հերթին հակագենդերային տարբեր արշավների ակտիվ դերակատարներից է, փոխկապակցված է Համահայկական ծնողական կոմիտեի և Stop G7–ի հետ: Հայկ Այվազյանը ղեկավարում է նաև «Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնությունն ու կայքը, որը 2015–2018 թվականներին ակտիվորեն մասնակցում էր ԵԱՏՄ–ի և Ռուսաստանի այլ նախաձեռնությունների և քաղաքականությունների առաջմղմանը: Հայկ Այվազյանին պատկանող և ներկայումս ակտիվ հակագենդերային արշավներ մղող «Լույս» տեղեկատվական–վերլուծական կենտրոնը ֆինանսավորումներ է ստացել Գորչակովի անվան ռուսական ֆոնդից, որի հոգաբարձուների խորհրդի նախագահը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն է: Տես Epress.am, (2016, դեկտեմբեր 14). Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ–ից. Վերցվել է՝ https://bit.ly/2YM7uN1:

և ««Լույս» տեղեկատվական–վերլուծական կենտրոն» անունով խմբերը, կանանց և ԼԳԲՏ մարդկանց իրավապաշտպաններին թիրախավորող այլ անհատներ, կնատյաց և հոմոֆոբ փաստաբաններ՝ ի դեմս ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, նախկին իշխանության ներկայացուցիչներ, ինչպես նաև ԲՀԿ անդամներ[34]:

Այս խմբի շարքում, որքան էլ հեգնական է, սակայն փաստ է Արա Զոհրաբյանի՝ ՀՀ փաստաբանների պալատի ղեկավարի դերակատարումը: Նա, իրավաբան լինելով, պետք է որ գիտակ լիներ Կոնվենցիայի իրավական նպատակներին, սակայն դա նրան չխանգարեց միջազգային Change.org հարթակում կազմակերպելու Կոնվենցիայի դեմ ստորագրահավաք՝ պնդելով, թե Կոնվենցիան ոչ թե ծառայելու է բռնությունների կանխարգելմանը, այլ վտանգելու է ազգային ինքնությունը[35]: Ըստ էության, փաստաբանը կրկնում է Բուլղարիայի և Սլովակիայի հորինած, ինչպես նաև տեղական աջ պոպուլիստների կողմից շրջանառվող՝ Կոնվենցիան դիվականացնող և հակասահմանադրական գնահատող դրույթները: Չնայած Change.org–ի պատասխանատուները հեռացրին հակահիրավական ստորագրահավաքը, Կոնվենցիայի դեմ ապատեղեկատվական արշավը շարունակվեց նպատակային ստեղծված nostambul.am կայքով, որտեղ հստակորեն երևում են տարբեր երկրներում տարածում գտած մանիպուլյացիոն դրույթների՝ «երրորդ սեռի», նույնասեռ ամուսնությունների, նույնասեռ անձանց կողմից երեխաների որդեգրման հնարավորության վերարտադրությունները:

Կոնվենցիան հակասահմանադրական ճանաչելու բուլղարական փորձի կիրառումը Հայաստանում ևս տեսնում ենք: «Երրորդ սեռի» և ՀՀ Սահմանադրությանը հակասելու մասին մոլորեցնող պնդումը տարածեց նաև ԱԺ նախագահի տեղակալ, ԲՀԿ խմբակցության պատգամավոր Վահե Էնֆիաջյանը[36]: Հակագենդերային

34. Իրազեկ քաղաքացիների միավորում. (2019, օգոստոս 16). Ստամբուլյան կոնվենցիայի մասին կեղծիքներն ու ընտանեկան բռնությունը. Վերցվել է՝ https://uic.am/8508:

35. Panorama.am. (2019, օգոստոս 12). Արա Զոհրաբյան. Ստամբուլյան կոնվենցիան մերժելու հարցով ստորագրահավաք եմ նախաձեռնել. Վերցվել է՝ shorturl.at/nMPU4:

36. Panorama.am. (2019, օգոստոս 10). Էնֆիաջյան. Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմամբ ստիպված ենք լինելու ընդունել նաև երրորդ սեռի գոյությունը. Վերցվել է՝ shorturl.at/hpsJ1:

խմբերը տարածեցին նաև զավեշտալի մի ապատեղեկատվություն, թե աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում բացվելու է «երրորդ սեռի վարչություն»[37]: Նախարարությունը հանդես եկավ հերքմամբ, որն իր տարածման փոքր շրջանակով նվազ արդյունավետություն ունեցավ՝ «երրորդ սեռի» վարչության առաստպելը կոտրելու կամ առնվազն դրան վերջնական արձագանքելու տեսանկյունից:

«Կամք» նախաձեռնությունը աչքի ընկավ Երևանի կենտրոնում՝ Հյուսիսային պողոտայում և ԱԺ–ի դիմաց, ինչպես նաև Հայաստանի մարզային քաղաքներում Ստամբուլյան կոնվենցիայի դեմ ստորագրահավաքի կազմակերպմամբ և այս ընթացքում Սպիտակ քաղաքի մի խումբ տարեց քաղաքացիների նկատմամբ արձանագրված ֆիզիկական բռնություններով[38]: Բացի այդ՝ այն բավական ճկուն է արձագանքում հանրային–քաղաքական իրադարձություններին, օրինակ՝ Կոնվենցիայի շուրջ խոր մտահոգություններ սերմանելու արշավը հաջողությամբ համադրեց դատաիրավական բարեփոխումների խաթարման նպատակին: Այսպես՝ «Կամք» նախաձեռնությունը բացահայտ կեղծիք էր տարածում 2020 թ. ապրիլի 5–ին նախատեսված, բայց կորոնավիրուսային համաճարակի պատճառով հետաձգված սահմանադրական հանրաքվեի մասին: Հանրաքվեն, որ ուղղված էր Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխմանը, «Կամք» նախաձեռնության գլխավորությամբ հռչակվեց իբրև «Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման, ԼԳԲՏ քարոզչության, ազգային արժեքների և ավանդական հայկական ընտանիքի ոչնչացմանն» ուղղված նոր կառավարող ուժի քաղաքականություն: Հանրաքվեի ձախողման նպատակով այս խմբակը ձևավորեց «Բոյկոտ»–ի շտաբ, որը մի կողմից՝ ապատեղեկատվություն էր տարածում Կոնվենցիայի նպատակների մասին և անվստահություն տարածում կառավարող ուժի հանդեպ, մյուս կողմից՝ մոլորեցնում էր կառավարող ուժի

37. Mlsa.am. (2019, հուլիս 24). Հերքում. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում «երրորդ սեռի» վարչություն չի լինելու. Վերցվել է՝ http://www.mlsa.am/?p=22517:

38. Epress.am. (2020, հունվար 16). Հակա«ստամբուլյան» Չախալյանը տարեցների է ծեծել. քննիչը կոծկում է գործը. Վերցվել է՝ https://epress.am/2020/01/16/2216.html:

նկատմամբ վստահություն ունեցող քաղաքացիներին՝ կոչ անելով նրանց, որ քվեաթերթիկում ոչ թե ընտրություն կատարեն, այլ «գրեն համերաշխություն, իրենց ցանկությունը մեր երկրի, մեր պետականությանը, նույն պարոն վարչապետի հանդեպ»[39]:

Ստամբուլյան կոնվենցիայի դեմ արշավի ընթացքում հակագենդերային խմբերը չեն թաքցնում հեռանկարում այլ իրավական բարեփոխումների, ինչպես, օրինակ՝ սպասվող «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի դեմ գործելու իրենց նպատակադրությունը, ինչը նշանակում է, որ դիմադրությունն առաջադիմական իրավական բարեփոխումների հանդեպ պարբերաբար ուժգնանալու է, գործադրվելու են ավելի մեծ ճնշումներ առաջադիմական քաղաքացիական թևի և կառավարող ուժի բարեփոխական գործիչների հանդեպ:

Վերջիններիս շարքում արդեն իսկ պարբերական թիրախավորման տակ են հայտնվել աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը և արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը՝ արդեն ծանոթ մեթոդական ձեռնարկի համաձայն մեղադրվելով «սորոսականության» մեջ:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

2019 թ. ԱԺ աշնանային նստաշրջանի ժամանակ Ստամբուլյան կոնվենցիայի քննարկումը հետաձգվեց: Հետաձգման պատճառները տարբեր են՝ ֆորմալ ընթացակարգերից մինչև դրա շուրջ ստեղծված աղմուկը՝ իբրև մարտահրավեր, որից «Իմ քայլը» խմբակցությունն առավելապես փորձում է խուսանավել, հետաձգել՝ հեղափոխական տրամաբանությամբ խութերին առերեսվելու և բարեփոխական որոշումներին համարձակորեն գնալու փոխարեն: Ակնհայտ է, որ կառավարող «Իմ քայլը» խմբակցության ներսում արմատական իրավական բարեփոխումների հանդեպ կան դիմադրություններ, վախեր, ինչպես նաև իրապես հակահիրավապաշտպան, խտրականացնող և

39. Shantnews.am. (2020, մարտ 3). Ո՞րն է «Բոյկոտ» և «Կամք» նախաձեռնությունների դիրքորոշումը Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի վերաբերյալ. Վերցվել է՝ https://www.shantnews.am/news/view/621936.html:

հոմոֆոբ դիրքորոշումներ ունեցող պատգամավորներ: Եթե նրանցից ոմանք ընդդիմանում են Կոնվենցիայի վավերացմանը ելույթներով ու տեքստերով (օրինակ՝ Վիկտոր Ենգիբարյանը, Թագուհի Թովմասյանը), ապա ժողովրդից մանդատ ստանալու լեգիտիմության ուժը բանեցնելով և մեծամասնության շահերը ներկայացնելու պատրվակով «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը միանում է «Կամք» նախաձեռնության կազմակերպած ստորագրահավաքին՝ ընդդեմ Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման: Կառավարող ուժը դեռևս չի հաջողում միջազգային Կոնվենցիան ձևակերպել և հանրությանը ներկայացնել իբրև ներքին իրավական բարեփոխումներին իրապես նպաստող անհրաժեշտ փաստաթուղթ: Ավելին՝ հաճախ կառավարող ուժի տարբեր ներկայացուցիչներ փորձում են մարդու իրավունքների շուրջ պետության ունեցած պարտավորությունների չիրականացումը քողարկել «բարոյականության» շղարշի կամ սեփական ինքնիշխանության դրսևորման ներքո՝ սրանով իրականում տուրք տալով հակագենդերային ռուսամետ ուժերի բանաձևված օրակարգին:

Կառավարող ուժի կողմից համարձակորեն հանձնառություն վերցնելու անպատրաստակամությունը ընդլայնում է հակագենդերային արշավների շարունակաբար իրականացրած շահարկումների և մանիպուլյացիաների դաշտը, որոնց հաճախ հաջողվում է հանրության մեջ արմատավորել միջազգային և տեղական իրավունքի կեղծ «անհամատեղելիությունը» կամ Կոնվենցիայի մեջ ներկայացնել «դավադիր ուժերի» շահը: Չկարողանալով արդյունավետորեն՝ հանրամատչելի ու պարզ լեզվով հանրությանը ներկայացնել Կոնվենցիայի բովանդակությունը, այն արժեքներն ու սկզբունքները և հանրային օգուտները, որոնք սպասվում են Կոնվենցիայի վավերացման շնորհիվ՝ կառավարող ուժը փաստաթղթի վավերացման համար փաստարկները փնտրում է դրսում: Այսպես՝ վստահ լինելով, որ Ստամբուլյան կոնվենցիայով սահմանված դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը, այնուամենայնիվ, ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը որոշում է կայացնում ստանալ Վենետիկի հանձնաժողովի պաշտոնական կարծիքը Կոնվենցիայի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ: Ըստ նրա մեկնաբանման՝ հանձ-

նաժողովի կարծիքը «լրացուցիչ փաստարկ կլինի և կդառնա վստահություն ստեղծող հանգամանք» Կոնվենցիայի վավերացման գործում[40]: Հատկանշական է, որ 2019 թ. հոկտեմբերին արդեն «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական՝ Վենետիկի հանձնաժողովը տվել է համապատասխան եզրակացություն, որում արձանագրված էր Կոնվենցիայի և Հայաստանի Սահմանադրության համապատասխանության փաստը: ՀՀ արդարադատության նախարարության կողմից Կոնվենցիայի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանելիության հարցով Վենետիկի հանձնաժողովին դիմելը ավելի շուտ նշանակում է հրաժարվել հանրային քննարկումների նախաձեռնողականությունից: Մինչ օրս (այս վերլուծական աշխատանքի ավարտի դրությամբ) ՀՀ Կառավարությունը և ԱԺ «Իմ քայլը» խմբակցությունը համարժեք կամք, ջանք և եռանդ չեն ներդրել Կոնվենցիայի մասին հանրային իրազեկման, քաղաքական բանակցությունների և ի վերջո վավերացման տանող առաջընթաց քայլերի ուղղությամբ:

Կոնվենցիային և դրա ուղղությամբ կառավարության աշխատանքներին անդրադարձել է նաև ՄԻՊ–ը 2019 թ. իր տարեկան զեկույցում՝ ընդգծելով հանրության շրջանում ՀՀ արդարադատության նախարարության ոչ բավարար աշխատանքը Կոնվենցիայի շուրջ մտահոգությունները փարատելու ուղղությամբ: Այդուհանդերձ, երբ ՄԻՊ–ը բարձրաձայնում է Կոնվենցիայի շուրջ (ի դեպ՝ ՄԻՊ գրասենյակը խուսափում է «Ստամբուլյան կոնվենցիա» ձևակերպումն օգտագործելուց) հանրային տարբեր խմբերի դրական և բացասական արձագանքները, ըստ էության, ողջ խորությամբ չի վերլուծում բացասական դիրքորոշումներ ունեցող խմբերի քաղաքական շահերը և հակահրավական գործողությունները՝ խնդիրը դիտարկելով ընդամենը ընտանեկան բռնության շուրջ առկա կարծրատիպերի, թյուրընկալումների և Կոնվենցիայի դրույթների ոչ պատշաճ իրազեկվածության համատեքստում[41]:

40. Ազատություն. (2019, օգոստոս 26). Ստամբուլյան կոնվենցիան այս տարի խորհրդարանում չի քննարկվի. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/30129815.html:

41. ՀՀ ՄԻՊ. (2020). 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին. Երևան:

«ՀուՉանք ու Չանգ» պերֆորմանսի խափանումը և «զելյոնկայով» հարձակումը

2019 թ. նոյեմբերի 2–ին Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանամերձ տարածքում նշանակված էր ժամանակակից պարագրության լաբի նախաձեռնությամբ և մշակումով պերֆորմանս: Հեղինակների մտահղացմամբ այն 1920–ականների հայ ֆուտուրիստ հեղինակների (Գևորգ Աբով, Կարա Դարվիշ, Ազատ Վշտունի) վերընթերցում էր, որով փորձ էր արվում համադրելու ժամանակակից պարը, ձայնային արվեստը, հանրային տարածքում կնոջ մարմնի ներկայությունը՝ հարցականի տակ դնելով կնոջ պահվածքի, խոսելու և շարժվելու ձևի հանրային ընկալումը[42]: Պերֆորմանսը հակագենդերային շարժման ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում էր դեռևս մինչ ներկայացումը՝ ոչ միայն ներկայացման հռչակված նպատակների բերումով: 2019 թ. հոկտեմբերի 28–ից Ժամանակակից պարագրության լաբի ֆեյսբուքյան էջում հրապարակվել էր միջոցառման մասին, որտեղ նշված էր, որ նախագիծն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Բացի այդ՝ Ժամանակակից պարագրության լաբի հիմնադիր Հասմիկ Թանգյանը հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ իրազեկման արշավի շրջանակում հանրային տարածքում մեկ այլ պարուհու հետ կոնտակտային ժամանակակից պար էր ներկայացրել դեռևս 2016–ին (հանրային՝ տեսանելի սիրո անպաշտպանվածության և տանը սիրո բացակայության թեմայով)[43], որն արդեն իսկ այն ժամանակ առաջացրել էր հակագենդերային արշավի անդամների դժգոհությունը: Ներկայացման խափանումը սկսվեց նախորդ օրվա փորձից, որը դադարեցվեց հակագենդերային արշավներից հայտնի դարձած դեմքերի կողմից: Նրանք արվեստագետներին ուղղված նախազգուշացումներ, սպառնալիքներ և հայ կնոջ դերի, շարժումների և խոսքի ձևի, արտաքին տեսքի, սանրվածքի, մազերի գույնի մասին խրատներ տեղացին, նրանց մեղադրեցին «սատանիզմի, հակապետականության, հակահայկա-

42. News.am. (2019, նոյեմբեր 3). «Սա մշակութային հեղափոխության մի մասն է». Հասմիկ Խաչունցը՝ աղմկահարույց ներկայացման մասին. Վերցվել է՝ https://news.am/arm/news/542426.html:

43. Հետք. (2016, մայիս 18). «Ես քո վրա, դու իմ վրա». պարային ներկայացում. Վերցվել է https://hetq.am/hy/article/95968:

կանության, իրենց պատկերացրած հայ կնոջ կերպարից շեղվելու, ֆեմինիստականության» մեջ: Ինչպես պնդում էին, թե «չեն հանդուրժելու հրապարակի կենտրոնում, հանրային տարածքում նմանօրինակ միջոցառում»[44], այդպես էլ թույլ չտվեցին, որ փորձը կայանա անգամ ոստիկանություն հրավիրելուց հետո: Հաշվի առնելով արդեն տեղի ունեցած միջադեպը՝ ներկայացման հեղինակները ֆեյսբուքյան էջի միջոցով իրենց լսարանին ներկա լինելու և աջակցելու կոչ արեցին. «Ստիպված ոստիկանություն կանչեցինք և հարցին ինչ–որ կերպ լուծում գտանք... բայց... ինչ–որ կերպ... այսինքն՝ դեռևս սա շարունակվելու է, այսինքն՝ վաղը ևս սպասվում է նման միջադեպ (...) քանի դեռ կինը, որ անսովոր տեսք ունի, կոնկրետ անուն ունի, կինը, որ պարում ա հատակին՝ հանրային վայրում, անպայմանորեն ստրիպտիզ ա պարում, իսկ կինը, որ հիփ–հոփ ա կարդում, անպայմանորեն լիրբ ա, և առհասարակ, եթե կին ես ու անհասկանալի բան ես անում, ուրեմն ֆեմինիստ ես և, օլալա, երեխաներ ինչպես ես դաստիարակելու և այլն, և այլն... սա միայն նշանակում ա, որ այս ներկայացումը ավելի քան ակտուալ ա, ավելի քան տեղին ա, ավելի քան բարձրացնում ա այն հարցերը, որոնք մենք կարևորել ենք, և վաղը ներկայացումը տեղի ա ունենալու ամեն գնով»:

Հաջորդ օրվա կազմակերպված հարձակումը ավելի ագրեսիվ և բազմամարդ էր: Ոստիկանության ներկայությամբ և թողտվությամբ հարձակվող տղամարդիկ պոկեցին հոսանքալարերը, որով ընդհատվեց ներկայացման ձայնային ապահովումը, իսկ հակագենդերային արշավորդներից մեկը ֆիզիկական հարձակում գործեց՝ ներկայացման մասնակիցների վրա «զելյոնկա»[45] ցողելով:

«Զելյոնկան» քաղաքական հակառակորդներին գունահետքով պիտակավորելու և նվաստացնելու նպատակով հաճախ կիրառվող միջոց է Ուկրաինայում և Ռուսաստանում: Հատկապես Ռուսաստանում այն ընդդիմադիր քաղաքական գործիչներին, կին ակտիվիստներին և իրավապաշտպանական գործունեություն ծավալող հանրային գործիչներին անհանգստացնելու տարածված,

44. Contemporary Choreography Lab Armenia. Ֆեյսբուք. Վերցվել է՝ https://bit.ly/2VoVSxv:

45. Brilliant green (dye). (n.d.). In Wikipedia. Retrieved from https://en.wikipedia.org/wiki/Brilliant_green_(dye).

իսկ երբեմն էլ վտանգավոր հետևանքներով գործիք է: Այն տարբեր տարիների կիրառվել է մեծ և փոքր, կենտրոնական կամ տեղական իշխանական մարմինների ներգրավմամբ, այդ թվում՝ կազմակերպվելով կամ խրախուսվելով Կրեմլին մոտ (անվտանգության) ուժերի կողմից, սակայն աջական համախոհների ձեռամբ[46] (որոնք, որպես կանոն, անպատիժ կամ չնչին պատիժների են արժանացել): Այսպես, օրինակ՝ Պուտինի արմատական քննադատ «Pussy Riot» պանկ–ռոք արվեստային խմբի ակտիվիստ կանանց նկատմամբ երկու անգամ «զելյոնկայով» հարձակում էր կազմակերպվել 2014–ի մարտ ամսին՝ բանտերում կանանց աշխատանքային իրավունքներին առնչվող հարցով նրանց այցը ՌԴ շրջաններ խափանելու նպատակով[47]: Հարձակումների արդյունքում կին ակտիվիստներից մեկը ուղեղի ցնցում էր ստացել, իսկ մյուսը՝ «զելյոնկայի» հետևանքով աչքերի քիմիական այրվածք[48]: 2016–ի ապրիլին ռուս գրող և Խորհրդային Միության քննադատությամբ հայտնի Լյուդմիլա Ուլիցկայան էր «զելյոնկայի» հարձակման ենթարկվել «Մեմորիալ» իրավապաշտպան և բռնաճնշումների փաստահավաք ՀԿ–ի միջոցառման մուտքի մոտ. հարձակվողները ծայրահեղ աջ պոպուլիստական խմբի անդամներ էին: Դրանից մեկ ամիս առաջ Խոշտանգումների դեմ կոմիտեի ղեկավար Իգոր Կալյապինի վրա Գրոզնիում կատարված հարձակման ժամանակ էր «զելյոնկա» կիրառվել[49]: 2017–ի փետրվարին անհայտ անձինք «զելյոնկա» էին ցողել ՌԴ նախկին վարչապետ, այժմ ընդդիմադիր քաղաքական գործիչ Միխայիլ Կասյանովի դեմքին (սպանված ընդդիմադիր գործիչ Բորիս Նեմցովի հիշատակի միջոցառման օրը)[50]: Իսկ շաբաթներ անց՝ մարտ ամսին, ընդդիմադիր գործիչ և նախագահի թեկնածու Ալեքսեյ Նավալնիի վրա «զելյոնկայի» հարձակում տեղի ունե-

46. OCmedia. (2019, November 5). Far–right protesters disrupt modernist dance performance in Yerevan. Retrieved from https://bit.ly/2ywiMtD.

47. Александрович, И. (2014, март 4). Pussy Riot облили зеленкой. По ссылке – https://www.youtube.com/watch?v=9tBH5i–Rg2c.

48. РБК. (2014, Март 14). Активисток Pussy Riot вновь облили зеленкой. По ссылке – https://bit.ly/2y5Mvdh.

49. Зотова, Н. (2016, март 17). Игорь Каляпин рассказал о подробностях нападения. Новая газета. По ссылке – https://bit.ly/2KCQqRt.

50. N.S. (2017, May 10). Why are Russian opposition leaders' faces turning green?. The Economist. Retrieved from https://econ.st/359Dxrr.

ցավ նրա նախընտրական արշավի ժամանակ: Նրա վրա երկրորդ հարձակումը եղավ մայիս ամսին, որն արդեն առողջական ծանր հետևանք էր առաջացրել՝ հավանաբար այլ քիմիական նյութի խառնուրդ պարունակելով. ընդդիմադիր գործիչը տեսողությունը չկորցնելու նպատակով ստիպված եղավ վիրահատվել Իսպանիայում[51]: Նույն տարի Ստավրոպոլում «զելյոնկայով» հարձակվել էին նաև ՌԴ–ում հայտնի անկախ բլոգեր Իլյա Վառլամովի վրա. հարձակմանը մասնակցել էր տեղական դումայի պատգամավոր[52]:

Ռուսական վարչակազմի սիրված գործիքներից մեկը՝ «զելյոնկայով» հարձակումը, Հայաստանում կին արվեստագետների վրա կիրառած երիտասարդին ոստիկանությունը բերման էր ենթարկել և ապա ազատ արձակել: Նա բերման ենթարկվելու ընթացքում հայտարարում էր. «Ով սատանիստական երևույթներ արեց իմ երկրում, ես նրա վրա «զելյոնկա» եմ փչելու: ԼԳԲՏ–ների վրա փչելու եմ «զելյոնկա»: Իրանք պիտի տարբերվեն հասարակությունից: Հասարակությունը պիտի թքի իրանց վրա»[53]: Հայկական մշակույթը ժամանակակից կին արվեստագետներից «զելյոնկայի» հարձակումով «փրկող հերոսը» հաջորդող օրերին հանդես էր եկել մամուլի ասուլիսով՝ արձագանքելու այն տեղեկատվությանը, թե ինքն իսկ մտերիմ կապեր է ունեցել ԼԳԲՏ համայնքի հետ, մասնակցել է համայնքի միջոցառումներին[54]: Նա ընդունել էր իր կապը համայնքի հետ՝ բացատրելով, որ դա հետախուզման նպատակով է իրականացրել, ինչից կարելի է ենթադրել հետապնդման իր նպատակադրումը և ատելությունից բխած արարքների վտանգների հնարա-

51. Syrov, N. (2017, March 23). 'Zelyonka': the Anti–Putin Antiseptic. GlobalVoices. Retrieved from https://globalvoices.org/2017/03/23/zelyonka–the–anti–putin–antiseptic/.

52. Кавказский Узел. (2017, июль 12). Строительная мафия против Варламова: о зеленке в Ставрополе. По ссылке – https://www.kavkaz–uzel.eu/articles/302042/.

53. News.am. (2019, նոյեմբեր 2). Մի երիտասարդ փորձեց «զելյոնկա» լցնել «Հու-Ձանք ու Ձանգ» ներկայացման մասնակիցների վրա. նրան բերման ենթարկեցին. Վերցվել է՝ https://news.am/arm/news/542370.html:

54. Հայելի ակումբ. (2019, նոյեմբեր 4). Ես ձեր «կլիենտներին» ձեզանից կտրելու եմ. ակտիվիստ Նարեկ Սարգսյանը՝ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=qPWmwb-–M3wQ:
Հատկանշական է, որ հոմոֆոբ միջավայրում ապրող ԼԳԲՏ մարդիկ կամ նույնասեռական փորձ ունեցած անձինք հաճախ իրենց իսկ խոցելիության հիմքով շանտաժի կամ այլ ճնշումների միջոցով ներգրավվում են տարբեր տեսակի քաղաքական նպատակահարմարությամբ գործողություններում, այդ թվում՝ հենց հակահիրավապաշտպան և հոմոֆոբիա տարածող արշավներում:

վորությունը, սակայն մինչ այժմ նա որևէ պատասխանատվություն չի կրել իր հարձակման ու սպառնալիքների համար: Հետագայում նույնպես՝ խափանված ներկայացման մասին մի ֆիլմի նկարահանման շրջանակում, պերֆորմանսի համահեղինակ, արվեստագետ Հասմիկ Թանգյանի հետ հանդիպման ժամանակ «զելյոնկայի» ասպետը շարունակել էր պաշտպանել իր վարքը, նշել էր, որ չի պատրաստվում ներողություն խնդրելու[55]:

Ներկայացման հեղինակները, հետահայաց խոսելով հարձակման մասին, նկարագրում են այն մարմնական ու սոցիալական հետևանքները, որ կրել են միջադեպից: Հեղինակներից Լիլիթ Պետրոսյանն, օրինակ, արձանագրում է իր մեջ առաջացած զգուշավորության մասին. «Սոցիալական վախի հնարավորությունը հասկացա, որ կարա դա լինի, ու որ կարա դա փոխի քո առօրյան, քո ցանկությունները, քո հագնելու ոճը ու փոխեց իմ պոեզիան (...) որ այդ տղամարդիկ չկարողանան քաղաքականացնել իմ պոեզիան, էդ խոսքը»: Միջադեպը իր հուզական ու սոցիալական ազդեցություններով ոչ միայն վնասեց հատկապես կին արվեստագետներին, այլև վատթարացրեց այն միջավայրը, որում և որի բարեփոխման համար ստեղծվել էր ներկայացումը: Հոսանքալարը պոկելով ձայնային տեխնիկան անջատելու հանգամանքը Լիլիթ Պետրոսյանը մեկնաբանում է որպես իր ձայնը և ասելիքը գործնականում կասեցնելու արարք. «Պայքար կար, որ իմ ձայնը լսվի, ես համարյա գոռում էի (...): Ձայնի հետ կապված հարց կար, որ ինքը կտրվել էր տեխնիկապես, նաև ոչ միայն տեխնիկապես, այլև ֆիզիոլոգիական մակարդակով կտրել էին (...) որ կինը պետք է լուռ ու հնազանդ լինի, ու էդ ներկայացման միջի ձայն հանող կինը հենց դրա համար էր եկել, որ ասեր, որ ինքը ձայն ունի ու նույնիսկ ոչ թե ուղղակի ձայն ունի, այլ նաև ասելիք ունի, բայց ստացվեց, որ դարձավ, որ ինքը մենակ ձայն ունի, ասելիք չունի. կարողացան իրենք ահագին էդտեղ տանել կնոջ ձայնի հարցը (...)»[56]:

Հակագենդերային արշավների անդամները, «սատանիստական» պիտակելով ժամանակակից պարը, այն հակադրեցին ազգագրական պարին, որն ընդգծվեց նույն տարածքում քոչարի պա-

55. Ishkhanyan, H. (2020, March 27). Pause, Passerby, Pause. Chai–Khana. Retrieved from https://bit.ly/34W8Aa7.

56. Նույն տեղում:

րելով. կարծես թե ժամանակակից պարը քոչարու տեղն էր զբաղեցնում, և չեն կարող մշակութային տարբեր ձևերը լինել միաժամանակ: Մի քանի օր անց այս խմբերի այլ անդամներ ներկայացման տարածքում խնկարկման արարողություն իրականացրին. «խունկը ցրում է չարիքը, իսկ այդ տարածքում սրբապղծության սատանիստական արարողություն է տեղի ունեցել»[57]: Այս ծիսական գործողությունները գործադրվում էին հայկական մշակույթը ժամանակակից արվեստից տարանջատելու՝ ազգագրականը որպես միակ մշակութային չափանիշ սահմանելով, դրանից տարբերվողն իբրև դրան հակադիր և ուրեմն թշնամական ձևակերպելու նպատակով: Այսպիսի մտայնության միջոցով է, որ ժամանակակից արվեստագետ կանանց և նրանց առաջ քաշած հարցերի գոյությունը մերժելու փաստարկ է մշակվում, սակայն մեծ հաշվով հակագենդերային արշավի մեծ օրակարգն է առաջ մղվում: Այսինքն՝ մերժվում են իրավահավասարությունը և իրավական պետության գաղափարը, և կոփվում են հակակառավարական տրամադրություններ: Խափանված ներկայացմանը օրեր շարունակ հետևած հանրային քննարկումներում հակագենդերային խմբերը մեծամասնության անունից և հանուն ազգային, մշակութային ու հոգևոր արժեքների էին խոսում, փորձում երեխաների վրա ներկայացման հնարավոր բացասական ազդեցության՝ «երեխաների այլասերման» շուրջ մանիպուլյատիվ վախեր տարածել: «ՀուՀանք ու Հանգ» խափանված ներկայացումը նրանք բնութագրում էին իբրև «տարօրինակ թավալգլոր, ոռնոցներ, հաչոցներ, կլանչոցներ, անարվեստ, բռնազբոսիկ, խելագար, մոլագար, վայրի, ցնորքների մեջ ընկած շարժումներ, պոռնկություն, սեռական օրգանները հանրայնորեն արձաններին ու քարերին քսել»՝ դրանով մի կողմից՝ ցուցադրելով արվեստի մասին իրենց պահանջած պատկերացումների սահմանները, մյուս կողմից՝ արդարացնելով իրենց կնատյացությունն ու բռնարարքը,

57. Սարաֆյան, Հ. (2019, նոյեմբեր 3). Խունկ ու աղոթք՝ Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանում. Իրավունք. Վերցվել է՝ https://bit.ly/3bUqHQg:
Կենցաղի սովորություններում և եկեղեցական ծեսերում կիրառվող խնկարկումը քաղաքական դիրքորոշման արտահայտման նպատակով իրականացնելու գաղափարը կապված է ավել վաղ տեղի ունեցած մի միջադեպի՝ տրանսգենդեր իրավապաշտպան Լիլիթ Մարտիրոսյանի՝ ՀՀ ԱԺ–ում մարդու իրավունքներին առնչվող հանրային լսման ժամանակ ելույթի և դրան հաջորդած հակագենդերային արշավի հետ (տես 24 TV. (2020, փետրվար 25). Սոնա Աղեկյանն ԱԺ ամբիոնի մոտ խնկարկման արարողակարգ կատարեց. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=lU9z3Mdme9s):

իսկ երրորդ կողմից՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանին թիրախավորելով որպես «սատանիստական» և «հակապետական» պիտակավորված ներկայացման ֆինանսավորման պատասխանատուի: Ներկայացման խափանման միջոցառման ընթացքում հակագենդերային արշավի անդամներից մեկը բարձրախոսով մեղադրում էր նախարար Հարությունյանին «Ալիևի և Սորոսի գումարներով» գործունեություն ծավալելու մեջ:

«ՀուՁանք ու Ձանգ» ներկայացման ֆինանսավորումը, ըստ այդմ, հակակառավարական այս խմբերի համար պետք է փաստարկ ծառայեր ԿԳՄՍ նախարարի մյուս որոշումները[58] «ապազգային» հռչակելուն: ԿԳՄՍ նախարարը հակագենդերային արշավորդների կողմից վաղուց ընտրված թիրախներից էր, որին վերագրվող հանցանքներից էին ԼԳԲՏ անձ Գարիկ Ամոլիկյանի հետ նախարարությունում հանդիպելն ու ենթադրյալ հովանավորչությունը, սեռափոխություն իրականացրած ծանրամարտիկ Մելինե Դալուզյանին նվիրված «Մել» ֆիլմին գումար հատկացնելու որոշումը, Տիկնիկային թատրոնում ռոք համերգի կազմակերպմանը նրա հանգիստ վերաբերմունքը. «Սատանիզմի հիմքով համերգ չեղարկելը այլևս չի լինելու, Հայաստանում արվեստը լինելու է ազատ, որովհետև անկախ պետության գրավականներից մեկն արվեստն է»[59]:

Գործող կառավարությանը բարոյական մեղքերում մեղադրելու համար առիթ դարձավ նաև «ՀուՁանք ու Ձանգ» ներկայացման մեջ Երևանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության քարտուղար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Հասմիկ Խաչունցի մասնակցությունը: Քանի որ ներկայացումը բնու-

58. ԿԳՄՍ կողմից մասնագիտական կրթության որակի բարձրացման բարեփոխումների շրջանակում սկսվել էր մի շարք նախկին մոտեցումներից հրաժարվելու կամ դրանք խնդրականացնելու գործընթաց, մասնավորապես որոշվել էր հրաժարվել հանրային հեռուստաեթերով «Հայ ասպետ» հաղորդաշարի հեռարձակումից, բուհերի հայեցողությանը թողնելը դպրոցական առարկայացանկով արդեն անցած հայագիտական առարկաների կրկնվող ուսուցանումը ոչ մասնագիտական ֆակուլտետներում, քննարկվում էր «Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առանձին առարկայի պարտադիր լինելու նպատակահարմարությունը և այլն:

59. Ղուկասյան, Ս. (2019, հոկտեմբեր 31). Արայիկ Հարությունյան. «Սատանիզմի հիմքով համերգ չեղարկելը այլևս չի լինելու». Հետք. Վերցվել է՝ https://hetq.am/hy/article/109341:

թագրվում էր իբրև «հակապետական», «ալյասերվածություն տարածող» և այլն, ապա դրան առնչակից ավագանու անդամ Խաչունցն էլ, ուրեմն, համանման մեղադրանքների արժանացավ: Հակագենդերային արշավներին հաճախակի մասնակից մի խումբ չզլացավ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի մուտքի մոտ պիկետ կազմակերպել՝ Խաչունցի ավագանու անդամությունը դադարեցնելու պահանջով[60]:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Ոստիկանությունը կին արվեստագետների վրա հակագենդերային արշավի անդամների հարձակմանը համարժեք քայլերով աչքի չընկավ՝ փաստացի թույլ տալով, որ նրանք շարքից հանեն ներկայացման տեխնիկական միջոցները, քաշքշեն ներկաներին, և իրականացվի «զելյոնկայով» հարձակում արվեստագետների վրա: Հարձակվողը հետագայում պատմել էր, որ ոստիկանական բաժանմունքում իր հանդեպ շատ լավ վերաբերմունք է ցուցաբերվել՝ դա բացատրելով նրանով, որ «տղերքը հասկանում են՝ ինչ ա կատարվում. տղերքը նույն հայն են, շատ էլ որ հրաման են կատարում, պագոն են կրում»[61]՝ այս բառերով բացահայտելով վերացական ազգայինի անունից կատարված բռնության հանդեպ ընդհանուր հանդուրժողականությունը, որ տարածված է պետական այն հաստատություններում, որոնք ի պաշտոնե պետք է աշխատեին բռնությունը բացառելու ուղղությամբ:

Աժ մարդու իրավունքների հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն իր դիրքորոշման մեջ իրավապաշտպանության տեսանկյունից հակադիր, սակայն սեփական ԲՀԿ խմբակցության հակագենդերային դիրքավո-

60. Tert.am. (2019, նոյեմբեր 5). ՔՊԿ գրասենյակի դիմաց պահանջում են դադարեցնել ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամ Հասմիկ Խաչունցի լիազորությունները. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=sDUUCuJsjt0:

61. Հայելի ակումբ. (2019, նոյեմբեր 4). Ես ձեր «կլիենտներին» ձեզանից կտրելու եմ. ակտիվիստ Նարեկ Սարգսյանը՝ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=qPWmwb–M3wQ:

րումից հետևողական արձագանք հնչեցրեց, որում խտացված վերարտադրում էր հակագենդերային նախաձեռնությունների մի շարք անհարգալից ուղերձներ և կարծրատիպեր. «Ստեղծագործելու ազատ իրավունք չի նշանակում հակահիգիենիկ, հակաէսթետիկ միջոցառումներ հանրային տարածքներում: Իրենք կարող են իրենց հիվանդագին երևակայությունը իրականացնել փակ տարածքներում: ...Դա էժանագին, հակահիգիենիկ, հակաէսթետիկ ցնդաբանություն էր, նման տարածքում «պերֆորմանսի» իրականացումը միջազգային մի քանի կոնվենցիաների կոպտագույն խախտում է, առաջին հերթին՝ երեխայի իրավունքի կոնվենցիայի խախտում, որովհետև ես իմ երեխայի հետ դուրս եմ գալիս մետրոյի տարածքից, ես չեմ կարող պարփակված մնալ այդ տարածքում, մինչև, ինչպես իրենք են ձևակերպում, ագրեսիայից ազատված կանայք իրենց ծեծեն ասֆալտին և իրենց ծեփրտոցն ավարտեն»[62]:

Կին արվեստագետների և ներկայացման իրավական պաշտպանության անհամարժեքությունից բացի՝ անհամաչափ էր նաև քաղաքական պաշտպանությունը՝ հենց նույն ԿԳՄՍ նախարարության և ներկայացման ֆինանսավորումը թույլատրած հանձնաժողովի կողմից: Որքան բարձր էին աղմկում հակագենդերային հարձակվողները ԿԳՄՍ նախարարության թե՛ ֆինանսական, թե՛ գաղափարական աջակցության մասին, այնքան նախարարությունը ցածրաձայն էր ներկայացումը ֆինանսավորելու իր իսկ որոշումը պաշտպանելու հարցում: Նախարարությունն իբրև ընտրեց չեզոք կեցվածք և հարցին հստակ ու ըստ էության պատասխանելու փոխարեն դրա ձևական կողմն էր շեշտադրում՝ նշելով, թե գնահատվել է ներկայացված նախագծի գաղափարը, իսկ արդյունքի ու նախագծի բարեխիղճ կատարման մասին կծանոթանան հաշվետվությունը ընթերցելիս: Մշակութային հարցերով փոխնախարարներից Արա Խզմալյանը թեև խուսափեց ներկայացումը լավ կամ վատ գնահատելուց, ամեն դեպքում շտապեց հեռավորություն պահել ներկայացումից՝ ընդգծելով, թե մտահոգացումն է գնահատվել, ոչ վերջնարդյունքը. «Այն, ինչ ցուցադրվել է... Մենք դա չենք պատկերացրել հայտը նայելիս, մենք այլ բան ենք պատկերաց-

62. Նույն տեղում:

րել, որովհետև կար ֆուտուրիզմ, կար պոեզիա, կար պլաստիկա, երաժշտություն... Բոլորովին այլ պատկեր էր ստեղծվել վերջնական արդյունքում»[63]:

ԿԳՄՍ նախարարը ներկայացումը ֆինանսավորելու հարցում ընդգծել էր հանձնաժողովի դերը և նշել այդ հանձնաժողովի անդամների, որոնց շարքում՝ երգիչ Գոռ Սուջյանի անունը: Դրան հետևեց նախարարի խոսքերը *թյուր ինֆորմացիա* գնահատող Սուջյանի ֆեյսբուքյան գրառումը, որով նա պնդում էր, թե այս ներկայացմանը հավանություն չի տվել. *«...ես նման ներկայացման հավանություն չեմ տվել: Ինձ հրավիրել են որպես երիտասարդ երաժշտի՝ իմ կարծիքը հայտնելու այս կամ այն մշակութային ծրագրերի մասին, բայց ոչ որպես մասնագետի, քանի որ մասնագետը այն անձն է, ով խորապես տեղեկացված է ծրագրերից: Անձամբ ես տեղեկացված եմ եղել ծրագրերից շատ մակերեսորեն և եթե չեմ սխալվում, տվյալ ներկայացումը նշվել էր որպես «1920–ականների հայ հեղինակների ընթերցանության օր: Ամեն դեպքում ես հավատացյալ քրիստոնյա եմ և եթե ինչ–որ մի բան տեսնեի, որը դեմ է քրիստոնեական արժեհամակարգին, ես դրան հավանություն չէի տա»*: Այս գրառմանն իր հերթին հաջորդեցին նախարարության՝ Սուջյանի «կողմ» քվեարկության մասին վկայող թերթիկն ու ստորագրությունը: Որքան էլ նախարարությունը գիտակցում էր ներկայացման դեմ արշավի քաղաքական ենթատեքստը և կազմակերպված բնույթը, այդուհանդերձ, անհամարձակ ու իրարամերժ իր արձագանքով ավելի շատ էր հնչած մեղադրանքների իսկության շուրջ կասկածների տարածք բացում և հակագենդերային արշավների ընդարձակմանը նպաստում: Այս միջադեպը ևս մեկ անգամ երևան էր բերում կառավարության ներկայացուցիչների կողմից զգայուն հարցերի շուրջ հանրության հետ երկխոսության անմշակ լեզուն և անհաստատ քաղաքականությունը, երբ ժամանակակից հանրային հարցերի շուրջ բարձրաձայն խոսակցությունը լռեցվում է՝ ընկրկելով խտրականություն և բռնություն տարածող անհատների և խմբերի ճնշումներից և գործողություններից:

63. 24TV. (2019, նոյեմբեր 8). «ՀուՀանք ու Հանգ»–ը ոչ լավն էր, ոչ վատը. հերթը մեզ չհասավ դա ասելու համար. ԿԳՄՍ փոխնախարար. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=O_7T0dqq5mA:

Ներկայացման խափանումից հետո ԿԳՄՍ նախարարության որոշումների և քաղաքականության շուրջ աղմուկը հասավ այն ուժգնության, որ վարչապետ Փաշինյանը դրանց նվիրեց իր «Զրույց քաղաքացու հետ» ֆեյսբուքյան լայվերից մեկը[64]: Դրանում նա անդրադարձավ նաև հետհեղափոխական Հայաստանում «սատանիզմի» անվան տակ գիտության, արվեստի և մտքի պիտակավորումներին և սահմանափակման փորձերին. *«Հայաստանում մի նոր տենդենց է աչքի ընկնում. ով ստանդարտից դուրս մի նոր ստեղծագործություն է անում, կպցնում են «սատանիստներ» անունը: …Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի ժամանակակից երկիր, որտեղ մարդու մտածելու իրավունքը հարգվում է: Բոլորը պարտավոր չեն նույն կերպ մտածել, այդ թվում՝ քաղաքական առումով, դավանաբանական առումով, գեղագիտական առումով: Հակառակ դեպքում մեր երկիրը հետ ենք գլորում: Հեղափոխությունը քաղաքացիներին բերել է ազատություն: Բայց կան ուժեր, որ այդ ազատությունն օգտագործում են սակավագիտություն հաստատելու համար»:* Փաշինյանը իր խոսքում թեև համարժեք կերպով շոշափում է խնդրի մշակութային կողմը, սակայն չի մոտենում դրա՝ ներքաղաքական և աշխարհաքաղաքական դերակատարների մտադրությունների ասպեկտին (որոնք մարտի դաշտ են սարքել իրավապաշտպանությունը), շրջանցում է սակավագիտություն հաստատելու փորձերի բռնի բնույթը և այսպիսի հաստատված հակամարտ դրության հետևանքները:

64. Փաշինյան, Ն., Զրույց քաղաքացու հետ. հայ ժողովրդի միասնական պատմության մասին. Վերցվել է՝ https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/2088914214543708/:

Բաժին 2

ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ հարձակումների զանգվածայնացումը

ԼԳԲՏ ակտիվիստների վրա հարձակում Շուռնուխ գյուղում

2018 թ. օգոստոսի 3–ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդ, այդ թվում՝ ԼԳԲՏ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության ենթարկվեցին նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20 բնակչի կողմից, որոնք տուժողներից պահանջել էին հեռանալ գյուղից, հարվածել էին նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով[1], մարմնական վնասվածքներ հասցրել և հետապնդել մինչև գյուղից դուրս բերող ճանապարհը: Այս դեպքը լայնորեն լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցների կողմից, մեծ ուշադրության արժանացել հակագենդերային արշավների ներկայացուցիչների և քաղտեխնոլոգների կողմից, բազմաթիվ քաղաքական խմբերի ներկայացուցիչներ, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ անդրադարձել են դեպքին՝ դրսևորելով ԼԳԲՏ մարդկանց կյանքի հաշվին տարվող հոմոֆոբիա տարածող արշավների ստանդարտ ուղերձները և հանրային տրամադրությունների կառավարման նպատակով դրանց ընթացիկ վերահարմարեցված ձևափոխումները: Մեծ հաշվով Շուռնուխ գյուղում տեղի ունեցած միջադեպը ի ցույց է դնում և՛ հակագենդերային արշավների երևակայության ու կարողությունների գունապնակը, և՛ Հայաստանի կառավարության հանձնառությունների կատարման էական բացթողումները, և՛ առաջադիմական ու իրավապաշտպան քաղաքացիական դաշտի դիմադրության սահման(ափակում)ները, ինչը մեզ դրդում է այս դեպքը դիտարկելու առավել մանրազնին և խորքային:

1. Փինք իրավապաշտպան ՀԿ. (2018, օգոստոս 4). Մանրամասներ Շուռնուխ գյուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ. Վերցվել է՝ https://bit.ly/3dmOSHz:

Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց հանդեպ խտրական դիրքորոշումներն ունեն իրենց սոցիալ–պատմական հիմքերը: Տղամարդկանց միջև նույնասեռական հարաբերությունը քրեական հանցանք էր համարվում (իսկ կանանց նույնասեռականությունն անգամ չէր ճանաչվում) մինչև 2003 թվականը: Այդպիսի իրավակարգավորումը Խորհրդային Միության ստալինյան շրջադարձի ժառանգությունն էր (քրեականացվել է 1934–ից) (Ժամակոչյան, Դանիելյան, 2019), ինչը հնարավոր դարձավ թոթափել անկախությունից տարիներ հետո: Իրավական դաշտում նույնասեռական մարդկանց իրավահավասարության ճանաչումը, սակայն, բոլորովին էլ չնշանակեց նրանց իրավահավասարության ճանաչում մշակութային դաշտում: Այս ուղղությամբ Հայաստանի որևէ կառավարություն չի ստանձնել լուրջ հանձնառություն և չի իրագործել քաղաքական, կրթական, իրազեկման գործունեություն, այլ ճիշտ հակառակը՝ շարունակվել է ԼԳԲՏ մարդկանց հանդեպ անիրավական քաղաքականությունների ոչ ֆորմալ խրախուսումը:

Այսպիսի հասարակական դրության մեջ, որտեղ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընդհանուր առմամբ մնացել են ստալինյան նախապաշարումներ, հեշտ է կառավարել հասարակական վերաբերմունքն ու հանրույթների վարքը, մարդկանց մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելություն սերմանել, անգամ մղել բռնության իրենց անծանոթ և ոչ մի հանցանք չգործած անձանց նկատմամբ, եթե հատկապես այդ մղումները բխում են քաղաքական նպատակահարմարությունից կամ իշխանական պայքարում հարմար թշնամու կերպարի կառուցման և դրա դեմ մարդկանց համախմբելու տրամաբանությունից (Ժամակոչյան, Դանիելյան, 2019):

Այսպես՝ ԼԳԲՏ անձանց հանդեպ խորհրդային տասնամյակներից արմատավորված խտրական և հոմոֆոբ դիրքորոշումները և նրանց բարոյականությունից դուրս դնելու մոլորությունը այսօր նրանցից հեշտ թշնամական թիրախներ կերտելու և դրա դեմ զանգվածային արշավներ առաջնորդելու պայմաններ են ձևավորում, որից ձգտում են օգտվել Հայաստանում գործող հակագենդերային խմբակները: Նրանք փորձում են լեգիտիմացնել հոմոֆոբիան և այն վերածել քաղաքական կյանքում ասելիքի հիմքի, հանրայնորեն ընդունելի, ուրեմն նպատակահարմար հռետորաբանության ու պրակտիկայի՝ դրանով իսկ շատ ավելի խորացնելով Հայաստանում ապրող ԼԳԲՏ մարդկանց խնդիրները և վատթար դրությունը:

Շուռնուխ բնակավայրը Հայաստանի ամենափոքր համայնքներից է, որտեղ բնակվում է 46 տնտեսություն՝ 130 բնակչով: Շուռնուխը մարզկենտրոն Կապանից 37, իսկ Գորիսից 28 կմ հեռավորության վրա է: Այն Սյունիքի մարզի նոր բնակավայրերից է, հիմնադրվել է 1930 թ.: Շուռնուխի և դրա կյանքի մասին առհասարակ բարդ է տեղեկություններ գտնելը: Կարող ենք ասել, որ Հայաստանում մարդիկ նույնիսկ չգիտեին Շուռնուխ գյուղի տեղն ու գոյության մասին մինչև 2018 թ. օգոստոսի 3–ին տեղի ունեցած հարձակումը[2]:

Հարձակման մասին տեղեկություն հաղորդելիս զանգվածային լրատվության տարբեր ներկայացուցիչներ տեղանքը նշելու համար օգտագործում էին «Շուռնուխ գյուղ» արտահայտությունը: Սակայն միջադեպից 5 օր անց՝ օգոստոսի 8–ից, մամուլի մի շարք ներկայացուցիչներ սկսեցին օգտագործել «սահմանապահ Շուռնուխ գյուղ» ձևակերպումը: Ձևակերպումն առաջին անգամ կիրառվեց «Իրավունք» թերթում[3]: Ընդ որում, «Իրավունք» թերթին նմանատիպ մեկնաբանություններ տրամադրել էր «Լույս» տեղեկատվական կենտրոնի ղեկավար Հայկ Այվազյանը, որը հակագենդերային արշավի հայտնի անդամներից է և իր գործունեության ցանկում ներառում է Հայաստանում գենդերային հավասարության, Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման, պատվաստումների և ընդհանուր առմամբ մարդու իրավունքների առաջխաղացման դեմ գործունեության բազմաթիվ դրվագներ: «Իրավունք» թերթում տեղ գտած նյութերի մեջ «սահմանապահ» հասկացությունը ավելացվել է հենց լրագրողի կողմից, քանի որ բնակիչներն իրենց հարցազրույցներում գյուղի սահմանամերձ լինելու հանգամանքն անգամ չեն նշում: Հատկանշական է, որ Շուռնուխն իրոք պաշտոնապես ճանաչված է իբրև ՀՀ սահմանամերձ համայնք, քանի որ այն ժամանակին սահմանակցել է Ադրբեջանին, իսկ այսօր Շուռնուխի սահմանից այն կողմ ընկած են Արցախի Քաշաթաղի շրջանի բնակավայրերը: Սակայն քաղտեխնոլոգիական տեսանկյունից «սահ-

2. Գորիսի զարգացման ակումբ. (2018, օգոստոս 11). [«Գորիսի զարգացման ակումբ» ֆեյսբուքյան էջ]. Facebook. Վերցվել է՝ https://www.facebook.com/gorisclub/posts/710823959260177:

3. Սարաֆյան, Հ. (2018, օգոստոս 8). «Մեր երեխաներից հեռու մնացեք». շուռնուխցի կանայք պայքարում են հանուն երեխաների իրավունքների (տեսանյութ). Iravunk.com. Վերցվել է ՝ https://iravunk.com/news/64152:

մանամերձ» բառի ընտրությունը ամբողջովին համապատասխանում է հակագենդերային արշավների կողմից կիրառվող հերոսացման և անվտանգայնացման մարտավարություններին: Այսպես՝ մի կողմից՝ գյուղում ԼԳԲՏ մարդկանց և նրանց ընկերների հանդեպ տեղի ունեցած ֆիզիկական բռնությունից շեշտը տեղափոխվում է այսպես կոչված «արտաքին սպառնալիքի» դիմակայման մեջ գտնվող գյուղի անձնազոհ հերոսացման վրա, մյուս կողմից՝ գյուղում 9 երիտասարդի, այդ թվում՝ ԼԳԲՏ մարդկանց առկայությունը ներկայացվում է իբրև մի վտանգ, որին «հերոսական Շուռնուխը» դիմակայել է այնպես, ինչպես «արտաքին սպառնալիքին»: Այդ կերպ Շուռնուխ գյուղը ներկայացվում է որպես «թշնամուն դիմակայած», «Հայոց պետականության արմատը պահող», «Դավիթ Բեկի պայքարի օրրան», «Նժդեհի մեծագույն ծառայության վայր», «Հայաստանի սյուն»[4] և այլ պաթետիկ ձևակերպումներով, որոնք հերոսականացման շղարշի ներքո արդարացնում են ԼԳԲՏ մարդկանց հանդեպ բռնությունը: Այս համատեքստում Շուռնուխ գյուղի բնակիչները ձևակերպվում են «անձնազոհ հերոսի դերում», որոնք որպես անհատներ և հանրույթ կանգնած են հիպոթետիկ վտանգի սահմանին, «գոյության կռիվ են տալիս», իսկ այդ «սուրբ առաքելությունն իրացնելու գործում» թույլատրելի է դառնում իրենց «շեղել ցանկացող» ԼԳԲՏ մարդկանց ու նրանց ընկերների հանդեպ բռնությունը: Այստեղ խորքային իմաստով պատճենվում է անվտանգայնացման այն մեխանիզմը, որը թույլ է տալիս «արտաքին սպառնալիքից» անվտանգությունն ապահովող սուբյեկտին, օրինակ՝ գերդաստանի նահապետին, «կռված տղերքին» (տիպական օրինակը՝ Մանվել Գրիգորյան), պետության քաղաքական ու ռազմական վերանախավին արտոնյալ դիրք գրավել, կամայականությունների լիազորություն ձեռք բերել ու բռնություն գործադրել արդեն «ներքին» սուբյեկտների (կանանց և երեխաների, համաքաղաքացիների, քաղաքական ընդդիմախոսների և այլն) հանդեպ:

Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և կոնֆլիկտային հարաբերությունները հարևան պետությունների հետ շատ հաճախ են նախկին իշխանությունների կողմից օգտագործվել քրեաօլիգարխիկ կոռուպցիոն համակարգ ձևավորելու և դրա պահ-

4. Որպես քաղաքական մեկնաբան հանդես եկող քոչարյանամետ գործչի ֆեյսբուքյան գրառումից. Հակոբյան, Ա. (2018, օգոստոս 5). [Armen Hakobyan]. Facebook. Վերցվել է՝ https://www.facebook.com/armen.hakobyan.31521/posts/2055274231213653:

պանության, հասարակական խնդիրների և կարիքների մասին բարձրաձայնող խմբերի դիմադրական պայքարների ճնշման կամ այլ օրակարգային հարցերի լռեցման նպատակներով[5]: Համանման անվտանգայնացման մեխանիզմով Շուռնուխ գյուղի սահմանամերձ լինելու հանգամանքի շահարկումը դարձյալ այդ նպատակին է ծառայում՝ պարտակելու տեղի ունեցած շատ որոշակի բռնության հանցագործությունը հիպոթետիկ արտաքին վտանգի քողի տակ:

Շուռնուխում երիտասարդների վրա հարձակման օրինակում մենք գործ ունենք հանցանքը, ավելի ճիշտ հանցանքի շարժառիթը նաև մեկ այլ շերտով քողարկելու դեպքի հետ: Ինքնին ԼԳԲՏ մարդկանց իրավահավասարությունը անվտանգայնացնող խմբերն իրականում շատ հաճախ լուծում են այլ՝ կուսակցական, իշխանական (վրեժխնդրություն, լռեցում) խնդիրներ և հաջողում են իրենց նպատակներին հասնել, եթե խնդիրը ձևակերպում են իբրև ընդհանուր վտանգ և հաջողում են համախմբել ու ներգրավել հանրության սովորական անդամների, որոշ դեպքերում անգամ հանցանքն իրականացնել նրանց ձեռամբ: Շուռնուխի հարձակման մեջ հենց այսպիսի պատկեր է բացվում, երբ տեղեկանում ենք, որ հանցանքի կազմակերպման մեջ դեր է ունեցել գյուղի վարչական ղեկավար Հակոբ Արշակյանը իրեն ընդդիմադիր համարող ընտանիքի հետ հաշիվներ մաքրելու նպատակով: Թիրախավորվածները շուռնուխցի ընդդիմադիր ընտանիքի զավակ Հայկ Հակոբյանն ու նրա հյուրերն էին: Հակոբյանների ընտանիքը տարիներ շարունակ բարձրաձայնել է տեղի ղեկավարության ապօրինությունների և հնարավոր կոռուպցիոն գործարքների մասին: Հայկի հայրը 2015–ին համայնքապետի ընտրություններում Արշակյանի դեմ մրցապայքարի մեջ էր մտել: Իսկ հեղափոխությունից հետո նրա հնարավոր ապօրինությունների մասին փաստերը էլեկտրոնային նամակով ուղարկել էին կառավարություն: Նամակը հասցեագրողը հենց ինքը՝ Հայկ Հակոբյանն էր, որի դեմ էլ Շուռնուխի վարչական ղեկավարը

5. Տարբեր քաղաքացիական շարժումներ ճնշելու և պայքարի ալիքը մարելու նպատակով նախկին իշխանությունները շարժումների վերելքի ժամանակ իրենց պատկանող լրատվամիջոցներով հրապարակում էին սահմանում եղած զոհերի մասին՝ արտաքին թշնամու կողմից վտանգի համատեքստում ներկայացնելով ներքին դիմադրությունները իբրև պառակտիչ, «թշնամու ջրաղացին ջուր լցնող» գործընթացներ՝ այդ կերպ հերթական անգամ լռեցնելով բողոքի ձայնն ու հանրային պահանջները:

հրահրել էր հարձակումը՝ թիրախավորելով նրա սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը: Հայկ Հակոբյանի սեռականության մասին համագյուղացիներին հայտնի էր վաղուց, սակայն մինչ այդ դա առիթ չէր դարձել բռնության[6]: Այն պայմաններում, երբ վարչական կամ կուսակցական գործիչներին հաջողվում է հանրության թաքնված նախապաշարումները վերարթնացնել և խրախուսել, և երբ իրավական ու մշակութային ոչ մի արգելակ չի գործում, սովորական մարդիկ (նույնիսկ համագյուղացի հարևանները) հեշտությամբ վերածվում են հանցանք կատարողների, որը հետահայաց փաստարկվում է հորինված վտանգի սպառնալիքով:

Հորինված վտանգների և վախերի պատումների հիմքում երկու կարևոր կերպար է շահարկվում՝ երեխայի և զինվորի. *«Մենք ունենք փոքր երեխաներ, ինչքան էլ իրենք փորձեն մեր երեխաներին չգցեն իրենց ջրերի մեջ, բնականաբար, իմ երեխաները ձգտելու են դրան: Հետաքրքիր է իրանց, որ գնան իմանան, թե այնտեղ ինչ է կատարվում, ինչ են անում, ինչ չեն անում, իսկ մենք չենք ուզում: Մենք բոլորս տղա ենք բերում, որ մեր հայ ազգի բանակը շատանա, մենք մեր հայ ազգի համար ենք երեխաներ բերում, որ բանակը շատանա, այլ ոչ թե, որ համասեռամոլները շատանան»*[7]: Անվտանգայնացման այսպիսի ռազմավարության ականատեսն ենք լինում Շուռնուխի բնակիչների կողմից ԼԳԲՏ հիմքով երիտասարդների վրա հարձակման իրենց ինքնարդարացումներում. *«Հիմա պատկերացրեք՝ մարդ երկու երեխա ունի, ու մեկը զինվոր է, մյուսը՝ համասեռամոլ, հիմա տղան գալիս է: Ո՞րն է գեղեցիկ հնչում, որ մայրն ասի՝ «աման, ցավը տանեմ, զինվոր տղաս եկե՞լ է, թե՞ համասեռամոլ տղաս եկել է: Ո՞րն է գեղեցիկ, իհարկե, զինվորը»*[8]:

Նույնասեռականությունը որպես տղամարդու հիմնական ու միակ բնութագիր, ինքնություն և կարգավիճակ սահմանելը և դա հանրային տարածված ընկալումներում առկա տղամարդկային

6. Փինք իրավապաշտպան ՀԿ. (2018, օգոստոս 6). Շուռնուխի միջադեպից տուժած գյուղի բնակիչը նաև քաղաքական ենթատեքստ է տեսնում հարձակման մեջ. Վերցվել է՝ https://bit.ly/2zkiUNh:

7. Սարաֆյան, Հ. (2018, օգոստոս 8). «Մեր երեխաներից հեռու մնացեք». շուռնուխցի կանայք պայքարում են հանուն երեխաների իրավունքների (տեսանյութ). Iravunk.com. Վերցվել է՝ https://iravunk.com/news/64152:

8. iTV. (2018, օգոստոս 8). Հայաստանում ԼԳԲՏ–ականների օրենքն ընդունված չի ու չի էլ ընդունվելու. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=6bD7etjsEqQ&t=15s:

մյուս բոլոր բնութագրիչներին, կարգավիճակներին և ինքնություններին մեխանիկորեն հակադրելը դառնում են անհանդուրժողականության և բռնության լեգիտիմացման հիմք: Վերոնշյալ օրինակում հենց այդպիսի կեղծ հակադրման միջոցով իդեալականացվում է զինվորականը, և կրկնակի դիվականացվում (այդ թվում՝ անվտանգության տեսանկյունից) նույնասեռականը՝ ընդգծելով ռազմական համակարգում վերջիններիս ներկայության անհնարինությունը[9]: Այնինչ սեռական կողմնորոշման հիմքով բանակում մարդու իրավունքների տարատեսակ ոտնահարումները՝ արձանագրված և փաստաթղթավորված ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգությունները, ինչպես նաև շանտաժի դեպքերը առնվազն վկայությունն են հենց այն փաստի, որ զինված ուժերում ծառայում են նույնասեռական տղամարդիկ, և որ հենց նրանց կյանքն է վտանգվում, երբ բացահայտվում է նրանց սեռական կողմնորոշումը[10]:

Սկզբնական օրերին այն կանայք և տղամարդիկ, որոնք ակտիվորեն ներգրավվել էին ֆիզիկական բռնության գործընթացին, իրենց տված հարցազրույցներում պատմել էին, թե ինչպես են ծեծել երիտասարդներին, ով քանի անգամ է հարվածել և ինչով: Սակայն շատ արագ Շուռնուխում տեղի ունեցած հարձակումն ու ծեծը հակահիրավապաշտպան մեդիան սկսեց ներկայացնել որպես «ինքնապաշտպանություն»: Որպես իրենց պաշտպանության առարկա ներկայացվում էին *«երեխաները», «հավատքը», «հայրենիքը»,*

9. Ժամանակին ՀՀ ՊՆ ներքին հայեցակարգն արգելում էր նույնասեռական տղամարդկանց ծառայել բանակում: Արգելքը գործել է մինչև 2004 թվականը. նույնասեռական տղամարդիկ ազատվում էին պարտադիր զինվորական ծառայությունից՝ դասակարգվելով որպես հոգեկան խանգարում ունեցողներ: Հետագայում սա բերում էր մարդու իրավունքների մի շարք ոտնահարումների, ինչպես, օրինակ՝ ապրանքներից և ծառայություններից օգտվելու և աշխատանքի ընդունվելու սահմանափակումների, վարորդական իրավունք ստանալու հասանելիության դժվարությունների և այլ խոչընդոտների (Փինք Արմենիա. (2016). Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն. Վերցվել է՝ https://bit.ly/2Wwi8EZ): Չնայած այն հանգամանքին, որ այդ հայեցակարգն արդեն ուժը կորցրել է, ցայսօր էլ ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից (ազատումը կրկին հիմնավորվում է հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում է կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, ինչը շարունակում է խոչընդոտ լինել հետագայում աշխատանք և վարորդական իրավունք ձեռք բերելու հարցում):

10. Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրո. (2019, մարտ 13). Մարդու իրավունքների զեկույց 2018 թ. Հայաստան. usembassy.gov. Վերցվել է՝ https://am.usembassy.gov/wp–content/uploads/sites/92/hrr2018_arm.pdf:

«ավանդականը», «ազգային եկեղեցին», «արժեքները», որոնց թիկունքում էին փորձում արդարացնել բռնությունը և թաքցնել դրա քաղաքական շարժառիթները՝ բառի լայն՝ հակահիրավապաշտպանական, և նեղ՝ տեղի ներհամայնքային կոնֆլիկտի իմաստներով: Այսպես՝ հարձակվողները՝ նույնիսկ նրանք, ովքեր ընդունել էին, որ բռնություն են գործադրել, բացատրություններ էին ներկայացրել ոստիկանությունում, խոստովանական ցուցմունք էին գրել, և քրեական գործում ներգրավվել էին որպես ամբաստանյալներ, հակահիրավապաշտպան մեդիայի ջանքերով վերաներկայացվեցին որպես «զոհեր», որոնք չեն ցանկացել իրենց երեխաներին տեսնել «նույնասեռականի կարգավիճակում», կամ որ «երևույթը մտնի իրենց տուն»: Զոհի փոխատեղումն այս իրավիճակում ոչ միայն բռնարարքի մասնակիցներին բարոյական աջակցությամբ իրավական հենարան ձևավորելու նպատակ ուներ, այլև ծառայում էր փաստացի հարձակման ենթարկված ԼԳԲՏ անձանց զոհի կարգավիճակից զրկելուն, նրանց հանդեպ զուտ մարդկային կարեկցանքի առաջացման հնարավոր մղումները արգելակելուն:

Բռնության արդարացման այս հայրիշխանական մոտեցումը տարածված է նաև կանանց հանդեպ բռնությանն առնչվող խնդիրների հանրային քննարկումներում, երբ հաճախ դատապարտվում է ոչ թե բռնարարը, այլ ջանք է թափվում գտնելու բռնությունն արդարացնող, հիմնավորող պատճառները, քննարկման առարկա է դառնում բռնության զոհի հնարավոր «մեղքը», առաջադրվում են զոհին կրկնակի զոհականացնող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «տեսնես ի՞նչ է արել, որ ծեծել են», կամ՝ «տեսնես ի՞նչ էր հագել, որ բռնաբարել են»:

Նույնատիպ՝ բռնությունն արդարացնող կամ բռնության հիմքում «լեգիտիմ պատճառ որոնող» մեկնաբանությունների պակաս չկար նաև Շուռնուխ գյուղում տեղի ունեցած հարձակման դեպքում: Անմիջապես ձևակերպվեցին հետևյալ հարցերը՝ *«ինչպե՞ս են իրենց գյուղում պահել հյուր գնացած երիտասարդները», «տեսնես ի՞նչ են արել, որ այդ հյուրընկալ գյուղի բնակիչները նման քայլի են դիմել»*[11]: Որպես բռնության գործադրման արդարացումներ՝ բերվում էին երիտասարդների կողմից համակեցության ընդհանուր

11. Հակոբյան, Ա. (2018, օգոստոս 5). [Armen Hakobyan], Facebook. Վերցվել է՝ https://www.facebook.com/armen.hakobyan.31521/posts/2055274231213653

կանոններին չհետևելու, աղմկելու, գյուղի բնականոն կյանքը խաթարելու հնարավոր ենթադրությունները կամ լույսի փոխարեն մոմ վառելու փաստարկները:

Բռնությունը արդարացնող, որպես ինքնապաշտպանություն ներկայացնող մոտեցումներից զատ՝ հակագենդերային արշավի անդամների կողմից կիրառվում էր նաև դեպքի իբրև թե օբյեկտիվ, համակողմանի ներկայացնելու, լուսաբանելու դիրքորոշումը: Ավելի առաջ գնալով՝ նախկին իշխանությունների հետ փոխկապակցված որոշ բլոգերներ սկսեցին շրջանառության մեջ դնել այն դրույթը, թե Շուռնուխում տեղի ունեցածը ոչ թե պայմանավորված է եղել գյուղի բնակիչների՝ ԼԳԲՏ անձանց և նրանց հետ ասոցացվող մարդկանց վերաբերմունքով, այլ *«կենցաղային վեճ է եղել, որովհետև եթե ուրիշ կատեգորիայի կամ համայնքի մարդիկ գային և իրենց այդպես պահեին, նույն ձևի երևի թե բողոքը կլիներ, և նույն վերաբերմունքը կլիներ»*[12]: Նման պնդումներն իրավիճակին առնվազն անհամարժեք էին, քանի որ Շուռնուխ գյուղի բնակիչները տարբեր ՁԼՄ–ների տված հարցազրույցներում ի սկզբանե հաստատել էին բռնության դրդապատճառներում տուժողների իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման գործոնը:

Շուռնուխում տեղի ունեցած բռնությունն արդարացնելու մեկ այլ ուղի էր *«մեծամասնության իրավունքների»* պահանջի ձևակերպումը, որով գյուղի բնակչությանը մեծամասնություն լինելու հիմքով տրվում է «անցանկալի» հյուրերին գյուղից բռնի քշելու լիազորություն: Սա տարածված հանրային մտայնություն է և բազմիցս է հանդիպում ԼԳԲՏ անձանց հետ առնչվող խնդիրները քննարկելիս: Այս մտայնությունը աշխատում է փոքրամասնության իրավունքի գաղափարի նենգափոխման վրա, որով տվյալ տեղի և պահի մեծամասնությանը արտոնությունից զրկելը՝ փոքրամասնության հանդեպ կամայականորեն վարվելու, բռնանալու, վտարելու, նսեմացնելու և այլ՝ մարդու իրավունքներին և արժանապատվությանը դեմ գործողություններ կատարելու առումներով մեկնաբանվում է իբրև *«մեծամասնության իրավունքների»* ոտնահարում: Այնինչ ժողովրդավարության սկզբունքի կարևոր կողմն այն է, որ մարդու իրավունքները և արժանապատվությունը արդարացիորեն

12. Միրզախանյան, Ն. (2018, օգոստոս 13). Ավտոերթ դեպի Շուռնուխ. Զանգեզուր TV. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=KQt3iPnsjPY:

պետք է պաշտպանված լինեն բոլորի համար՝ անկախ նրանից, թե տվյալ պահին տվյալ վայրում տվյալ մարդը հանրության մեծամասնությա՞ն, թե՞ փոքրամասնության (կամ խոցելի, լուսանցք մղված խմբերի) ներկայացուցիչ է: Մեծամասնության անդամները շարունակում են ունենալ նույն իրավունքները, սակայն չեն կարող մեծամասնության ուժով ոտնահարել փոքրամասնության իրավունքները: «Մեծամասնության և փոքրամասնության» իրավունքների կեղծ հակադրման շուրջ հռետորաբանական ձեռնածությունները առավելագույնս սրվեցին այն ժամանակ, երբ հայտնի սփյուռքահայ արվեստագետներ Սերժ Թանկյանը, Արսինե Խանջյանը և այլք հանդես եկան բռնությունը դատապարտող տեքստերով. *«Նմանատիպ հարձակումները ամենուր պետք է դատապարտվեն: Արդարությունը պետք է վերականգնվի, և ԼԳԲՏ–ի հարցերի մասին լուրջ կրթական միջոցառումների կարիք կա Հայաստանի գյուղական համայնքներում: Զզվելի է»,— Սերժ Թանկյան*[13]: Սերժ Թանկյանի հայտարարությունը որոշ մարդկանց մոտ անհանգստություն առաջացրեց. նրանք Թանկյանին մեղադրեցին մարդու իրավունքների իբր ընտրովի մեկնաբանման մեջ, քանի որ վերջինս նույն ջանասիրությամբ չի դատապարտում կենցաղային վեճերը, փողոցային ծեծկռտուքը, տարասեռական մարդկանց նկատմամբ բռնության դեպքերը: Այս մեղադրանքներում, սակայն, կրկին հաստատվում էր Թանկյանի տեքստում արտահայտված միտքը՝ մարդու իրավունքների հայեցակարգի և դրանում փոքրամասնության իրավունքի շուրջ Հայաստանի հանրությանը խորքային գիտելիք տրամադրելու անհրաժեշտության մասին:

Հատկանշական է, որ Շուռնուխում երիտասարդների վրա հարձակման դեպքից մեկ շաբաթ անց Երևանից և այլ բնակավայրերից հակագենդերային արշավի մի շարք հայտնի անդամներ (այդ թվում՝ հետագայում «ՎԵՏՕ» նախաձեռնությունը հիմնադրած Նարեկ Մալյանը, իր գործընկեր, հետագայում «Ադեկվադ» միաբանության հիմնադիր Արթուր Դանիելյանը, «Լույս» տեղեկատվական և վերլուծական կենտրոնի ներկայացուցիչը), լրագրողներ, մի քանի տասնյակ երիտասարդներ և որոշ հոգևորականներ, ժողովրդական երգի և պարի համույթների մասնակցությամբ ավտոերթով

13. Թանկյան, Ս. (2018, օգոստոս 11). [Serj Tankian]. Facebook. Վերցվել է՝ https://bit.ly/3fpUBhF:

մեկնեցին Շուռնուխ՝ տոնելու Երիտասարդների միջազգային օրն ու Խաղողօրհնեքը *«Առողջ երիտասարդություն, ավանդական ընտանիք, առաջադեմ պետություն»* կարգախոսի ներքո[14]: Իրենց այցով և տոնակատարությանը մասնակցությամբ, ինչպես նաև դրսևորած վարքով և հռետորաբանությամբ այս խմբերը թեև ոչ բառացի, սակայն փաստացի իրենց զորակցությունն էին հայտնում Շուռնուխում ԼԳԲՏ հիմքով տեղի ունեցած բռնության քայլին և այն գործադրողներին: Չնայած այդ շրջանում նրանցից ոմանք հերքում էին ԼԳԲՏ մարդկանց հանդեպ բռնարարքը պաշտպանելու և խրախուսելու իրենց մտադրությունը[15], սակայն ինչպես այդ այցը, այնպես էլ իրենց հետագա քայլերը ակնհայտ են դարձնում նրանց հակագենդերային գործունեությունը և դրա հետնախորքում ընկած քաղաքականությունը:

Ինչպես մյուս բոլոր դեպքերում ենք արձանագրել, Շուռնուխի միջադեպի շուրջ բարձրացած հակագենդերային արշավը ևս իր հետնախորքում պարունակում էր հակակառավարական տրամադրությունների ձևավորման նպատակը: Այս անգամ դրա համար առիթ դարձավ Շուռնուխի բնակիչ Հակոբյանների ընտանիքից Հայկ Հակոբյանի երբեմնի կապը «ԱՄՆ Խաղաղության կորպուսի» հետ և այդ կառույցում հետհեղափոխական կառավարության մշակույթի նորանշանակ նախարար Լիլիթ Մակունցի աշխատանքային փորձը: Նախ Հայկ Հակոբյանը, որի տանն էլ հյուրընկալվել էին հարձակման ենթարկված մյուս[8] երիտասարդները, բնութագրվեց իբրև իր *«հոր կորսված տղա»:* Այս դաժան բնութագրի պատճառ էր ներկայացվում «ԱՄՆ Խաղաղության կորպուսի» կամավորի հետ Հայկի շփումը պատանեկան տարիքում, որի հետևանքով իբր նա *«սովորական գյուղացուց «առաջադեմ ԼԳԲՏ ակտիվիստ» դարձավ[16]:* Դավադրապաշտ այս հայացքի ներքո Հայկի կյանքի այնպիսի կարևոր և բարդ ու բազմագործոն կողմեր, ինչպիսիք են նրա գոր-

14. Armeniasputnik. (2018, օգոստոս 12). Առողջ երիտասարդություն, ավանդական ընտանիք, առաջադեմ պետություն. Շուռնուխում տոն էր. Վերցվել է՝ https://bit.ly/2W9LTfS:

15. Tert.am. (2018, հոկտեմբեր 12). Մարդ պետք է ողնուղեղի բորբոքմամբ տառապի, որ ասի, թե մենք սատարել ենք Շուռնուխում «գեյերի» նկատմամբ բռնությանը. Նարեկ Մալյան. Վերցվել է՝ https://bit.ly/3baC2uH:

16. Խոջաբաղյան, Ա. (2018, օգոստոս 5). Այս տղան «կարճ» ժամանակում սովորական գյուղացուց դարձավ «առաջադեմ ԼԳԲՏ ակտիվիստ». Blognews.am. Վերցվել է՝ https://bit.ly/3deKOZY:

ծունեության ոլորտը, սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, հանգեցվում էր օտարերկրյա կազմակերպության մի կամավորի հետ ինչ–որ ժամանակ ունեցած շփմանը: Իսկ քանի որ 2016–2017 թթ. պայմանագրային հիմունքներով Մակունցը որպես դասախոս աշխատել էր «ԱՄՆ Խաղաղության կորպուսում» և ՀՀ մշակույթի նախարար դառնալուց հետո իր խոսքում հայտնել էր, թե իրենց քաղաքական թիմը պատրաստվում է *«կոտրելու կարծրատիպերը, ինչը բարդ, բայց ոչ անհնարին գործ է»*[17], ապա նոր կառավարության անդամի *«հակապետականության»* սոուսը պատրաստ էր, որի մեջ եփվելու էին հակագենդերային հռետորաբանության բոլոր թիրախներին՝ մեր *«դարերի խորքից եկող ազգային և հոգևոր արժեհամակարգը»*[18] իբր կոտրող հավաքական Արևմուտքին, իրավապաշտպաններին, ԼԳԲՏ ակտիվիստներին և նոր կառավարության այն անդամներին, որոնք առաջադիմական որևէ խոսք երբևէ արտահայտած կլինեն՝ նույնիսկ անկախ նրանց քաղաքականություններում իրական առաջադիմականությունից:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց, արձագանքեցին նաև պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներից ոմանք՝ հանդես գալով դատապարտող հայտարարություններով: Մասնավորապես փոխվարչապետ Տիգրան Ավինյանը «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ դեպքի վերաբերյալ հարցին անդրադառնալիս ընդհանուր առմամբ դատապարտեց բռնությունը՝ համարելով, որ այն խնդրի լուծման միջոց չէ՝ անկախ պատճառից, հիմքերից և թիրախից. *«Տեղի ունեցած դեպքի բովանդակությունն առհասարակ քննարկելու կարիք չկա, որովհետև բռնությունն*

17. Hetq.am. (2018, մայիս 13). Լիլիթ Մակունց. «Մշակույթը ես եմ, իմ մեջ է, ինչպես և մեզանից յուրաքանչյուրի». Վերցվել է՝ https://hetq.am/hy/article/88810:

18. Iravunk.com. (2018, օգոստոս 6). Արևմուտքը մեր ազգային և հոգևոր արժեհամակարգը կոտրելու խնդիր է դրել. Վերցվել է՝ https://www.iravunk.com/news/63923:

անընդունելի է որպես հարցի լուծում՝ անկախ պատճառից, անկախ, թե ում դեմ է արվել, անկախ, թե ինչ հիմքեր են եղել բռնությունը կիրառելու համար»: Ավինյանն իր այդպիսի դիրքորոշումը հիմնավորում է 2018 թ. ապրիլ–մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի հեղափոխությամբ, որը, ըստ նրա, ապացուցում է, թե Հայաստանում չկան այլ՝ ավելի բարդ, անլուծելի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ կլինի որևէ տեսակի բռնության կիրառումը[19]: Ավինյանի արձագանքում թեև կարևոր է բռնությունը մերժող մշակույթի մասին ընդհանրական շեշտադրումը, սակայն նկատելի է որոշակի ԼԳԲՏ մարդկանց հանդեպ բռնության առանձնահատկությունների շրջանցումն այն դեպքում, երբ այս ցավալի առիթը կարող էր նաև հնարավորություն դառնալ զգայուն թեմաների շուրջ հանրային խոսակցություն սկսելու համար:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, այժմ արդեն 7–րդ գումարման ԱԺ պատգամավոր Սարգիս Խանդանյանն իր ֆեյսբուքյան էջում ևս խիստ դատապարտել էր ատելության հիմքով բռնության դեպքը, կոչ էր արել իրավապահներին՝ պատասխանատվության ենթարկելու մեղավորներին և անգամ շուտափույթ ապաքինում մաղթելու տուժածներին[20]: Այս արձագանքը պետական հաստատության ներկայացուցիչների խոսքերից թերևս տարբերվում է միջադեպի տուժածների հանդեպ մարդկային չափումը չկորցնելու կարողությամբ, ինչը սովորաբար ձախողում են պետական գործիչները՝ մնալով հակագենդերային հարձակումների և բռնարարքների իրավաբանական (անգամ ոչ իրավապաշտպանական) գնահատականների չափման մեջ և տուժածներին պարզ զորակցության խոսքեր կամ քայլեր չշռայլելով:

Այս իմաստով ձևական տեսանկյունից պատշաճ, սակայն իրավապաշտպանության ոգու պահպանման առումով խնդրահարույց կողմեր էին առկա Շուռնուխում տեղի ունեցած բռնության առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրա-

19. Ազատություն. (2018, օգոստոս 7). «Ֆեյսբուքյան ասուլիս» փոխվարչապետ Տիգրան Ավինյանի հետ. Վերցվել է՝ https://bit.ly/3fuu3Mq:

20. Խանդանյան, Ս. (2018, օգոստոս 4). [Sargis Khandanyan]. Facebook. Վերցվել է՝ https://www.facebook.com/khandanyan/posts/10212662148612783:

սենյակի քայլերում: Այսպես՝ հարձակման միջադեպից 6 օր անց տարածած հայտարարության մեջ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը անընդունելի էր համարում *«վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է կատարվել և որտեղ»*: ՄԻՊ–ը շեշտել էր նաև, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է բոլորի հավասարությունն օրենքի առջև և արգելում խտրականությունը ցանկացած հիմքով, և կոչ էր արել պատկան մարմիններին ուսումնասիրել դեպքի բոլոր հանգամանքները, քննել գործն անաչառորեն, ապահովել տուժածների անվտանգությունը[21]: ՄԻՊ հայտարարությունը անմիջապես քննադատվեց Շուռնուխի բնակիչների կողմից, որոնք վրդովվել էին այն հանգամանքից, որ *«ՄԻՊ–ն իրենց չի պաշտպանում, իրենց երեխաներին չի պաշտպանում (…): Մենք վատ բան չենք արել, մենք ընդամենը պահանջել ենք, որ գյուղից հեռանան, որովհետև շատ տհաճ էր, մենք ունենք փոքր երեխաներ (…): Ինչի՞, իմ երեխայի հոգեվիճակը, ապրելակերպը, իր մտահոգությունը ոչ մեկին չի՞ վերաբերում, թե՞ որ համասեռամոլ են, իրավունքներ ունեն, մենք չունենք (…): Մենք էլ տենց դառնա՞նք, որ Մարդու իրավունքների պաշտպանը մեզ պաշտպանի»*[22]: Ըստ նրանց, եթե ՄԻՊ–ը հայտարարություն է տարածում ծեծված երիտասարդների իրավունքների պաշտպանության անհրաժեշտության մասին, ապա դրանով բնակիչներին զրկում է մարդու իրավունքներից և դրանց պաշտպանության համար առկա երաշխիքներից:

Պաշտպանի գրասենյակը, արագ արձագանքելով հանրային քննադատությանը, նույն օրը որոշում կայացրեց աշխատանքային խումբ գործուղելու Շուռնուխ՝ տեղում ծանոթանալու իրավիճակին, լսելու բնակիչների՝ մարդու իրավունքների առնչությամբ ունեցած մտահոգությունները՝ հաշվի առնելով *«միջադեպի վերաբերյալ բազմակողմանի պատկերացում կազ-*

21. Մարդու իրավունքների պաշտպան. (2018, օգոստոս 9). Հայտարարություն Շուռնուխ գյուղում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ ձեռնարկած քայլերի վերաբերյալ. Ombuds.am. Վերցվել է՝ https://ombuds.am/am/site/ViewNews/506:

22. iTV. (2018, օգոստոս 8). Հայաստանում ԼԳԲՏ–ականների օրենքն ընդունված չի ու չի էլ ընդունվելու. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=6bD7etjsEqQ&t=15s:

մելու և ամբողջական գնահատական ձևավորելու նպատակով գյուղի բնակիչներին լսելու կարևորությունը»[23]: Գործուղված աշխատանքային խումբը առանձնազրույցներ էր ունեցել գյուղի բնակիչների հետ, այդ թվում՝ միջադեպից տուժած երիտասարդի՝ գյուղում ապրող ծնողների հետ, հանդիպել էր նաև գյուղի վարչական ղեկավար Հակոբ Արշակյանի հետ:

Հատկանշական է, որ չնայած ՄԻՊ–ը գործուղման մասին իր որոշումը փաստարկել էր բոլոր կողմերին լսելու, օբյեկտիվության, անկողմնակալության և օրենքով պահանջվող մյուս սկզբունքներով առաջնորդվելու իր պարտավորությամբ, գրասենյակի կողմից այդպես էլ այցի չարժանացան Շուռնուխում տուժած երիտասարդները: ՄԻՊ գրասենյակի աշխատակիցները հեռախոսային կապ են հաստատել տուժածներից մի քանիսի հետ միայն (ովքեր ստացել էին տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ) և երբևիցե չեն հանդիպել տուժածներից որևէ մեկի հետ:

Ոստիկանությունը, դատախազությունը և քննչական մարմինը իրենց հերթին ձախողել են գործի պաշաճ քննությունը՝ ի սկզբանե կողմնակալ վերաբերմունք դրսևորելով, քննչական պատշաճ գործողությունները մինչ օրս չիրականացնելով, գործի շրջանակում անօրինականություններ թույլ տալով, վարույթի իրականացումը անհարկի ձգձգելով[24]: Բռնությունից ավելի քան 1,5 տարի անց իրավական գնահատականներ տրված չեն, ինչը առիթ է բռնության արատավոր շղթայի շարունակականության:

Ավելին՝ Շուռնուխում ԼԳԲՏ հիմքով երիտասարդների հանդեպ բռնությունը պետության կողմից ոչ միայն իրավական և քաղաքական պատշաճ գնահատականների չարժանացավ, այլև պետական հաստատության՝ ԱԺ մակարդակով նոր՝ ճնշիչ իրավաքաղաքական մահակի ստեղծման առիթ եղավ: Բռնության միջադեպի օրերին՝ 2018 թ. ամռանը և աշնանը, 6–րդ գումար-

23. Մարդու իրավունքների պաշտպան. (2018, օգոստոս 10). Մարդու իրավունքների պաշտպանն աշխատանքային խումբ է գործուղել Շուռնուխ գյուղ. Ombuds.am. Վերցվել է՝ https://ombuds.am/am/site/ViewNews/508:

24. Փինք իրավապաշտպան ՀԿ. (2020, հունվար 30). Պետությունը տապալում է Շուռնուխի գործով պատշաճ նախաքննության իրականացումը. Վերցվել է՝ https://www.pinkarmenia.org/announce/shurnukh/#.XrE0z5lRUcQ:

ման ԱԺ–ում շարունակում էր մեծամասնություն կազմել արդեն հեռացած վարչապետ Սերժ Սարգսյանի գլխավորած ՀՀԿ–ն: Արձագանքելով այս միջադեպին և դրան հաջորդած այլ հակագենդերային արշավներին՝ օրվա ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովը այլ կուսակից պատգամավորների հետ[25] շրջանառության մեջ դրեցին օրենսդրական փաթեթ՝ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն իրականացնելու մասին: Փաթեթով առաջարկվում էր որոշակի իրավական գործիքներով սահմանափակել այնպիսի գաղափարների և հայացքների քարոզչությունը, տեղեկատվության նպատակային տարածումը մինչև 18 տարեկան անձանց շրջանում, որոնք վերաբերում են *«ոչ ավանդական»* սեռական հարաբերություններին: «Ոչ ավանդական» սեռական հարաբերությունները նախագծով սահմանվում էին իբրև ազգակցական կապ չունեցող չափահաս տղամարդու և կնոջ սեռական հարաբերություններից բացի այլ սեռական հարաբերությունները[26]: Այս օրենսդրական նախաձեռնությունը հեռավոր արձագանք էր դեռևս 2013–ին ՀՀ ոստիկանության մեկ այլ նախաձեռնության[27], որով վարչական իրավախախտում էին ցանկանում որակել *«ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչությունը»*՝ հետևելով ՌԴ օրինակին: Այդ ժամանակ ՀՀԿ–ն, կառավարող ուժ լինելով, ի վերջո չգնաց պուտինյան օրենքի պատճենմանը Հայաստանում. ոստիկանությունը հետ կանչեց տխրահռչակ նախագիծը: Սակայն արդեն նոր քաղաքական կառուցվածքի պայմաններում «ոչ ավանդական» սեռական կողմնորոշման և երեխաների սեռական զարգացման զգայուն թեմաները քաղաքական ասելիք չունեցող ուժի համար հանրային խոսք ասելու և նոր կառավարությանը ազգային արժեքների անունից մարտահրավեր նետելու հրաշալի պատրվակ դարձան:

25. Վահրամ Բաղդասարյան, Էդուարդ Շարմազանով, Ջեմմա Բաղդասարյան, Կարինե Աճեմյան և Միհրան Հակոբյան

26. Parliament.am. (2018, հոկտեմբերի 1). ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին. նախագիծ. Վերցվել է՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10031&Reading=0:

27. A1plus. (2013, օգոստոսի 7). Տուգանք՝ «ոչ ավանդական սեռական» քարոզչության համար.Վերցվել է՝ https://a1plus.am/hy/article/75136:

Այս մասին Շարմազանովը իր հարցազրույցներից մեկում բառացի ասում է. *«Վերջին շրջանում բավականին լուրջ քարոզչություն է գնում ընդդեմ ազգային արժեքների կամ միգուցե հարում ապազգային արժեքներին: Մենք տեսնում ենք համասեռամոլության, հոմոսեքսուալիզմի և աղանդավորության հստակ քարոզ: Մենք տեսանք Շուռնուխի դեպքը, ոստիկանին ծեծի ենթարկելը, սերժ թանկյանների արձագանքը և սատարումը համասեռամոլության քարոզին (...): Այն օրենսդրական նախագիծը, որի մասին արդեն նշեցի, լակմուսի թուղթ է լինելու կառավարության համար: Մենք մինչև այս տարվա վերջը կառավարություն կմտցնենք այս նախագիծը, և ով ինչ կարծիք ունենա, թող ասի, և ոչ միայն Փաշինյանի թիմը»*[28]:

Հատկանշական է, որ հետագայում այս նույն մարտավարությունը կորդեգրեն արդեն 7–րդ գումարման նորընտիր ԱԺ պատգամավորները ԲՀԿ խմբակցությունից: Մասնավորապես Գևորգ Պետրոսյանը համանման օրինագիծ կներկայացնի՝ առաջարկելով քրեականացնել *«տասնվեց տարին չլրացած անձանց շրջանում ոչ ավանդական սեռական կողմնորոշում քարոզելը»*[29]: Նույն Պետրոսյանը, որ ԲՀԿ կուսակցությունից պատգամավոր էր նաև 6–րդ գումարման ԱԺ–ում, դեռևս Շուռնուխի միջադեպից հետո հոմոֆոբիայի տարածման ակտիվ ջատագով դարձավ. նա իր ֆեյսբուքյան էջում արձագանքել էր ԼԳԲՏ մարդկանց հանդեպ բռնության կոչով. *«Չգիտեմ՝ ինձ ով կմեղադրի և ինչքան, բայց վայրկյան առաջ պետք ա մեր Սուրբ հողից համատեղ ջանքերով դուրս մղենք (մեղմ եմ ասում) համասեռամոլներին, աղանդավորներին և նրանց պաշտպաններին...»*[30]:

Ինչ վերաբերում է Շարմազանովի և կուսակիցների 2018 թ. նախաձեռնությանը, ապա Նիկոլ Փաշինյանի կողմից ղեկա-

28. Henaran.am. (2018, օգոստոս 31). Պետք է օրենքով արգելել համասեռամոլության քարոզը. Էդուարդ Շարմազանով. Վերցվել է՝ http://henaran.am/382667.html:

29. Parliament.am. (2019, մայիս 16). ՀՀ օրենքը ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին. նախագիծ. (Նախագիծը մերժվել է). Վերցվել է՝ https://bit.ly/2Ac4oYJ:

30. Lgbtnews.am. (2018, օգոստոսի 7). Pink Armenia–ն պատգամավոր Գևորգ Պետրոսյանի Facebook–ի գրառումների առիթով դիմել է ոստիկանություն. Վերցվել է՝ https://bit.ly/3dnP35q:

վարվող կառավարության անդամները բացասական դիրքորոշում տվեցին նախագծին[31]՝ հիմնավորելով, որ *«գործող օրենքի 18–րդ հոդվածում արդեն գոյություն ունի երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող տեղեկատվության և գրականության տարածման արգելքը»*: Իսկ վարչապետի պաշտոնակատար Փաշինյանը կառավարության նիստին այս հարցի քննարկման ժամանակ խնդրականացրեց քարոզչության երևույթը՝ նշելով, որ քարոզչության դեմ պայքարը քարոզչության վերածվելու հակում ունի. *«Լուծումը դեռևս գտնված չէ, ու այսօրվա ընկալումներով շատ դժվար է պատկերացնել, թե ինչպես կգտնվի լուծումը: Այնպես որ, եթե ուզում ենք քարոզչություն չանել, այս հարցերը պետք է քվեարկենք խիստ գաղտնի ռեժիմով, ու նախագծի հեղինակներն էլ գաղտնի անեն, օրենքն էլ գաղտնի լինի, քննարկումն էլ, կիրառումն էլ, հակառակ դեպքում ցանկացած հակաքարոզչություն քարոզչության կոմպոնենտ է պարունակում: (...) Ես ուզում եմ մի այսպիսի շեշտադրում անել. էս վերջերս այդ մասին անընդհատ մտածում եմ. ես սխա՞լ եմ ընկալում, որ մեկ–մեկ ինձ թվում է, թե, օրինակ, սեռական փոքրամասնությունների դեմ պայքարի քարոզչությունը մի իքս պահից դառնում է սեռական փոքրամասնությունների քարոզչություն: Չկա՞ այսպիսի կոմպոնենտ»*[32]: Հարցի հասցեատերը՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արսեն Մանուկյանը, Փաշինյանին ի պատասխան նշում է, որ *«այո՛, երեխաների մեջ ակամա հետաքրքրություն է ստեղծվում»*[33]:

Կառավարությունն, ըստ էության, այսպիսի անդրադարձով ոչ միայն չէր հակադարձում *«ԼԳԲՏ քարոզչության»* առասպելին, այլև հաստատում էր դրա գոյությունն ու հնարավոր բացա-

31. Ղուկասյան, Ս. (2018, հոկտեմբեր 25). «Ոչ ավանդական սեռական հարաբերություններ հասկացության կիրառումը կարող է լինել վիճահարույց». կառավարությունը մերժեց ՀՀԿ–ականների նախագիծը. Hetq.am. Վերցվել է՝ https://hetq.am/hy/article/97501:

32. Factor.am. (2018, հոկտեմբեր 25). Անհասկանալի է՝ սեռական փոքրամասնությունների մասին հարցերն ինչու են հրատապ դարձել այսօրվա Հայաստանում. Փաշինյան. Վերցվել է՝ https://factor.am/93685.ht:

33. Նույն տեղում:

սական ազդեցությունը երեխաների վրա՝ առաջարկելով լռելու մոտեցումը: Այնինչ սեռականության հարցերի և մարդու իրավունքների շուրջ իրազեկումն իբրև անորոշ քարոզչություն ներկայացնել ձգտող հակագենդերային արշավներին անհրաժեշտ էր բովանդակային և կտրուկ պատասխան տալ՝ առանց խուսափելու հանրության հետ զգայուն թեմաներից առերես զրուցելուց: Բովանդակային պատասխան տալու փոխարեն դրա ճարպիկ շրջանցումը միայն ավելացնում է հակագենդերային արշավների հանրային լեգիտիմությունը, հանրության մեջ ամրապնդում նրանց առաջ քաշած օրակարգի իրականությունը:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի չեղարկումը

2018 թ. օգոստոսի 15–ին *lgbtnet.org* կայքը հայտարարություն տարածեց, որ առաջիկա նոյեմբերի 15–18–ը Երևանում կայանալու է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների 11–րդ ֆորումը[34]: Արդեն օգոստոսի վերջին, երբ դեռ թարմ էր Շուռնուխի հարձակման շուրջ աղմուկը, լուրը հայկական քննարկումների դաշտ և մեդիա միջավայր բերեցին ու տարածեցին հակագենդերային արշավի անդամները՝ բուռն արձագանք և իրարանցում առաջացնելով դրա շուրջ:

«ԼԳԲՏ» և «քրիստոնյա» բառերի մեկտեղվածությունը մեծ հանցանք է ներկայացվում բոլոր այն խմբերի կողմից, որոնք այդ հասկացությունները սովոր են իբրև հականիշներ տեսնելու, ինչը կապվում է դարերի խորքից եկած՝ քրիստոնեական եկեղեցիների կողմից նույնասեռական վարքի ըմբռնման հետ: Հայ առաքելական եկեղեցին ևս «սոդոմական մեղքը» գրկաբաց ընդունելու պատմություն չունի՝ այն համարելով դժոխքի արժանի: Այդուհանդերձ, նույնիսկ իր միջնադարյան կանոնագրքերում նույն սեռի մարդկանց միջև (ավելի շուտ տղամարդկանց և հատկապես վանականների)

34. Российская ЛГБТ–сеть. Открыта регистрация на одиннадцатый форум ЛГБТ–христиан Восточной Европы и Центральной Азии. Lgbtnet.org. По ссылке – https://bit.ly/2LaN4VU:

սեռական հարաբերության համար նախատեսված պատժաձևը միայն երկարատև ապաշխարանքն էր կամ հասարակական հանրօգուտ աշխատանք հանձնառելը (Խալաթյան, 2019): Չնայած սրան՝ Հայաստանի ժամանակակից կրոնականները և հետստալինյան հոմոֆոբ սերնդի գործիչները հենց ազգային քրիստոնեական ավանդույթի անունից է, որ մերժում են նույնասեռական մարդկանց գոյության իրավունքը, ժխտում քրիստոնեության հետ առնչվելու նրանց հնարավորությունը և ոչնչացման կամ վառելու սպառնալից կոչեր ու (քրիստոնեության անունից հակաքրիստոնեական) ատելություն տարածում:

Այսօր Հայաստանում գործող այդպիսի խմբերը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը չեղարկելու համար կազմակերպեցին բազմաթիվ ցույցեր Երևանի տարբեր հատվածներում: Եթե նախկինում ՀԱԵ սպասավորները ԼԳԲՏ անձանց իրավունքների, գենդերային իրավահավասարության հարցերի դեմ արշավներին միանում էին ընտրողաբար, ոչ պաշտոնապես և մեկ–երկու սպասավորների մասնակցությամբ, ապա առաջին անգամ ՀԱԵ–ն գրեթե ամբողջ եռանդով և պաշտոնական մակարդակով միացավ Հայաստանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի անցկացումը խափանող արշավին: Նման աշխուժությունը ֆորումի չեղարկման հարցի շուրջ տեղի էր ունենում հետհեղափոխական այնպիսի քաղաքական համատեքստում, որտեղ ՀԱԵ վերնախավը ՀՀ պետական կառավարման մեջ կորցրել էր իր հենարանն ու արտոնությունների երաշխիքները: Դեռևս ոչ վաղ անցյալում նախկին՝ ՀՀԿ իշխանավարման օրոք տեղի էր ունեցել եկեղեցական վերնախավի և պետական գործիչների սերտաճում: ՀՀԿ բազմաթիվ ներկայացուցիչներ պարբերաբար հանդես էին գալիս եկեղեցու «բացառիկ դիրքերի ամրապնդմանը» նվիրված հայտարարություններով, ինչպիսիք էին *«հայն ու քրիստոնյան հոմանիշներ են», «բանակում, դպրոցներում, Ազգային ժողովում պետք է արտասանել «Հայր մեր» աղոթքը», «Եկեղեցին չի կարող անջատ լինել ոչ պետությունից, ոչ բանակից: Դա ամրագրված է մեր Սահմանադրության, օրենսդրության և ամենակարևորը՝ յուրաքանչյուր հայի սրտի մեջ», «Միակ ճիշտ ներդրումը Հայաստանում եկեղեցի կառուցելն է»*[35] և

35. Դանիելյան, Ս. (2017, դեկտեմբեր 31). Հայաստանն այլևս աշխարհիկ երկիր չէ. Epress.am. Վերցվել է՝ https://bit.ly/2WC96WX:

այլն: Բացի այդ՝ 2015–ին ՀՀԿ–ն և ՀԱԵ–ն միմյանց փոխզորակցող և փոխադարձ լեգիտիմացնող նվեր մատուցեցին: ՀՀ Սահմանադրության հիմնարար փոփոխությունների շարքում 18–րդ հոդվածով ճանաչվեց հայ առաքելական եկեղեցու՝ *«որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»,* նշվեց, որ ՀԱԵ հարաբերությունները պետության հետ կարող են կարգավորվել օրենքով, չնայած որ դրան նախորդող 17–րդ հոդվածում ամրագրված է, թե *«կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից»*[36]:

Այնինչ հեղափոխությունից անմիջապես հետո վերոնշյալ արտոնություններին սովոր ՀԱԵ վերնախավի իրավազորությունը կասկածի տակ դրվեց իր իսկ հավատացյալների համայնքի մի մասի կողմից: Հեղափոխության շնչով ոգևորված՝ հավատացյալների մի ստվար շերտ փողոցային պայքար սկսեց կաթողիկոս Գարեգին Բ–ի հրաժարականի պահանջով և *«Նոր Հայաստան, նոր հայրապետ»* կարգախոսով[37], ինչի ընթացքում եկեղեցու և կաթողիկոսի հանդեպ աննախադեպ քննադատության և վարկաբեկման հանրային քննարկում սկսվեց: Կաթողիկոսի հրաժարականի համար կազմակերպված բողոքի ակցիաներին միացել էին նաև ՀԱԵ տարբեր վանքերի վանականներ:

Վերոնշյալ երկու կարևոր հանգամանքներով կարող ենք պայմանավորել ֆորումի չեղարկման արշավում ՀԱԵ պաշտոնական ակտիվացումը՝ որպես փորձ հանրային կյանքում ինքնուրույն դերակատար դառնալու և կորսված կշիռը, հեղինակությունն ու իշխանությունը վերագտնելու: *«Արտաքին թշնամու»* առասպելը լավագույնն էր եկեղեցու և կաթողիկոսի շուրջ հանրային համախմբում ապահովելու համար: Քրիստոնեության անունից հանդես եկող որևէ նոր՝ «օտար» մեկի ներկայությունը բացառելու և ՀԱԵ հանրային դերը բարձրացնելու նպատակով վերջինս հանձն առավ բարձրագույն մակարդակով ֆորումի անցկացման դեմ արշավի մասնակցությունը: Այսպես անգամ Ն.Ս.Օ.Տ.Տ. կաթողիկոս Գարեգին Բ–ն

36. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ. (ուժի մեջ է մտել 2015, դեկտեմբեր 22). Arlis.am. Վերցվել է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510:

37. Մուրադյան, Ա. (2018, հունիս 7). «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» նախաձեռնության անդամները մտադիր են շարունակել խաչերթերն ու բողոքի ակցիաները. Azatutyun.am. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/29278725.html:

անդրադարձավ հարցին, այն դեպքում, երբ նա մինչ այս հազվադեպ էր հանրային հարցերի շուրջ հայտարարություններով հանդես եկել. *«Վերջին օրերին խոր մտահոգությամբ տեղեկացանք համասեռամոլների կողմից Հայաստանում նախաձեռնվող ֆորումի լուրերի մասին, որն առաջացրել է մեր ժողովրդի մեծ վրդովմունքը: Մեր Քրիստոսասեր ժողովուրդը դարեր ի վեր կրողն է Աստվածօրհնյալ ընտանիքի նվիրական գաղափարի և պահպանողը ընտանիքի սրբագործված արժեքի: Աստվածահաստատ ընտանիքի սրբազան խորհրդով է շարունակվում կյանքի գոյությունը, կյանքի հրաշագործությունը: Աստված պատվիրաններ ու բարոյականության նորմեր է սահմանել արարչաստեղծ մարդու համար: Այսօր, սակայն, փորձ է արվում բարոյական շեղումները և դրանց բացահայտ քարոզչությունը ներկայացնելու իբրև մարդու իրավունքներ և ազատություններ: Քրիստոսի Սուրբ եկեղեցին համասեռամոլության երևույթի նկատմամբ իր դիրքորոշումն արտահայտել է՝ անընդունելի հռչակելով այդ կենցաղակերպը իբրև մարդկային բնության խեղում, բայց երբեք չդադարելով հովվական խնամք ցուցաբերելուց և այդ մեղքի մեջ հայտնված անձանց կոչ անելուց՝ սրբագրելու իրենց ընթացքը: Խստորեն մերժելի են և դատապարտեի ԼԳԲՏ ներկայացուցիչների կողմից հասարակության մեջ հրահրումներ առաջացնելու քայլերը և համասեռամոլության երևույթի որևէ հանրայնացում ու դրա գովազդում, որը գայթակղություն է մեր աճող սերնդի համար և սպառնալիք մեր ազգի հարատևությանը»*[38]:

Հատկանշական է, որ կազմակերպիչները՝ ի դեմս «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ–ի, չէին հայտարարել ֆորումի անցկացման մասին անգամ իրենց սոցիալական ցանցերի էջերով: Հետևաբար ակնհայտ է, որ հակագենդերային արշավի անդամները նախ իրենք հանրայնացրին ֆորումի անցկացման լուրը, իսկ հետո սկսեցին աղմուկ բարձրացնել դրա դեմ:

Քրիստոնյա ԼԳԲՏ ֆորումի անցկացման դեմ, բացի ՀԱԵ–ից, նրա սպասավորներից և հավատացյալներից, ակտիվորեն մարտնչում էին այլ հակագենդերային արշավներից հայտնի խմբավորումները, ՁԼՄ–ները, որոնք նախ և առաջ մասնակից էին հակակառավարական և ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին ազատ արձակելու

38. Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց. (2018, նոյեմբեր 1). [Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց/ Karekin II, Catholicos of All Armenians]. Facebook. Վերցվել է՝ https://www.facebook.com/Vehapar/posts/721375998224220:

արշավին, ՀՀԿ գործիչներ (օրվա ԱԺ փոխնախագահ Շարմազանովը), ԲՀԿ գործիչներ (օրվա ԱԺ պատգամավորներ Գևորգ Պետրոսյան, Արագած Ախոյան) և այլ ռուսամետ քաղաքական ուժեր, ինչպես նաև իրենց հեղափոխական համարող, սակայն ծայրահեղ ազգայնական խմբերին հարող անհատներ կամ նախկին ազատամարտիկներ:

Եթե առաջին՝ հակակառավարական խմբի մարդիկ ԼԳԲՏ անձանց և ֆորումի անցկացման դեմ արշավը ջանասիրաբար համադրում էին կառավարությանն ուղղված մեղադրանքներով, թե դրա որոշ ներկայացուցիչներ ԼԳԲՏ անձանց համար *«կանաչ լույս» են վառում*[39], ապա երկրորդ խմբի ներկայացուցիչները ձգտում էին չնույնանալու առաջիններին և *«աջակցելու»* կառավարությանը չեղարկելու ֆորումը[40]. *«Մենք չենք քաղաքականացնում, սա հակակառավարական ակցիա չէ, մենք խնդիրներ չունենք նորընտիր վարչապետի հետ: Մենք մասնակցել ենք հեղափոխությանը և հասկանում ենք, որ կառավարությունը ևս փակուղու մեջ է, և մենք պետք է նրանց աջակցենք»*[41]: Ամեն դեպքում երկու մեծ խմբերն էլ ֆորումի չեղարկման հարցը ձևակերպում էին որպես անձամբ Փաշինյանի քրիստոնյա, հայ առաքելական եկեղեցու հետևորդ, հայրենասեր լինելու ապացույցի չափանիշ[42]:

Հակագենդերային արշավի անդամները միայն հոետորաբանությամբ չսահմանափակվեցին, այլև սկսեցին սպառնալից գործողությունների դիմել: Նոյեմբերի 2–ին ֆորումը հյուրընկալող «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ–ն ահազանգեց, որ «Ազգային արժեքների պաշտպանման ճակատ» կազմակերպության ղեկավար, նախկինում բազմիցս հոմոֆոբ, տրանսֆոբ գործողությունների իրականացմամբ հայտնի Սևան Աղաջանյանը այլ անձանց հետ միասին ավտոմեքենայով հետապնդում է իրենց կազմակերպության աշխատակիցներին, ինչի վերաբերյալ հաղորդում է ներ-

39. Մկրտչյան, Ա. (2019). Համեմատական զեկույց 2018–2019 թթ. խտրականության դրսևորումը առցանց հարթակում. Երևան. «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ:

40. Բաղալյան, Թ. (2018, նոյեմբեր 4). Հանուն ազգային արժեքների շարժում – Դեմ ենք այլասերման քարոզին. Վերցվել է՝ https://bit.ly/3cgut6O:

41. Նույն տեղում:

42. Հովհաննիսյան, Ա. (2018, հոկտեմբեր 26). Նիկոլ Փաշինյանը պարտավոր է կասեցնել Հայաստանում ԼԳԲՏ–ների համաժողովը, եթե իսկապես քրիստոնյա է. Irates.am. Վերցվել է՝ https://bit.ly/2Wcwnji:

կայացվել ոստիկանություն: Ատելության խոսքի բարձր մակարդակի, ինչպես նաև արդեն իսկ վտանգավոր դարձող ֆիզիկական հարձակումների սպառնալիքների արդյունքում ֆորումի կազմակերպիչները ստիպված եղան չեղարկել այն:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Ոստիկանությունը Սևան Աղաջանյանի և նրա համախոհների կողմից «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ–ի աշխատակիցների հետապնդման արարքում որևէ իրավախախտում կամ հանցագործության հատկանիշ չհայտնաբերեց: «Նոր սերունդ» ՀԿ–ի հարցմանն ի պատասխան՝ ոստիկանությունը տեղեկացրել էր, թե *«քաղ. Սևան Աղաջանյանի հետ անցկացվել է պրոֆիլակտիկ բնույթի զրույց՝ հորդորվել է պահպանել համակեցության կանոնները և զերծ մնալ իրավախախտումներից»*[43]: Հետաքրքրական է, թե ինչ հիմքով է ոստիկանությունը հանրային համակեցության կանոններին հետևելու փաստացի բարոյական խրատներ տալիս քաղաքացուն, եթե չունի դրա համար իրավական հիմքեր, և կամ ինչպես պետք է խտրականության հիմքով թիրախավորված իրավապաշտպանները և ակտիվիստները այսուհետ անվտանգ գործեն, եթե թիրախավորման մեջ իրավախախտման տարրեր չկան և կարող են կրկնվել:

Ավելի ուշ՝ նոյեմբերի 6–ին, ոստիկանապետ (այժմ՝ նախկին) Վ. Օսիպյանը խորհրդարանում լրագրողների հետ զրույցում հայտարարեց. «*Կարծում եմ՝ նպատակահարմար չէ. անվտանգությունից ելնելով՝ նպատակահարմար չենք համարում նման ֆորումի անցկացումը: Մենք ինքներս էլ բացատրական աշխատանքներ տարանք, որպեսզի ՀՀ տարածքում տեղի չունենա այդ ֆորումը»*[44]: Անհրաժեշտ է նշել, որ ֆորումի կազմա-

43. Մկրտչյան, Ա. (2019). Համեմատական զեկույց 2018–2019 թթ. խտրականության դրսևորումը առցանց հարթակում. Երևան. «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ:

44. Ղուկասյան, Ս. (2018, նոյեմբեր 6). Ոստիկանապետը հաստատեց՝ Հայաստանում ԼԳԲՏ ֆորում չի լինելու. Hetq.am. Վերցվել է՝ https://hetq.am/hy/article/97872:

կերպումը, իրականացումը կամ դրա անցկացման և չանցկացման նպատակահարմարությունը ոստիկանապետի գնահատման հարցը չէ, ինչպես նաև ՀԿ–ներին իրենց նախագծերից հրաժարվել դրդելը ներառված չէ ոստիկանության գործառույթների մեջ: Նախկին ոստիկանապետի հայտարարությունը դատապարտեցին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները[45]՝ հիշեցնելով, որ ոստիկանությունը պարտավոր էր ապահովել ֆորումի մասնակիցների անվտանգությունը՝ դրա անցկացման նպատակահարմարությունը քննելու փոխարեն: Շուրջ տասն օր անց այս միջադեպին անդրադարձավ և մտահոգություն հայտնեց նաև ՄԱԿ–ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի հարցերով հատուկ զեկուցող Կլեմեն Վուլեյը[46]:

Մինչ ֆորումի չեղարկումը վերոնշյալ խմբերը բազմաթիվ անգամներ դիմել էին վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին, որպեսզի վերջինս չեղարկի ֆորումի անցկացումը: Չնայած որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է միավորումների ազատության իրավունքը, իսկ նման ուղիղ միջամտությունը մարդու իրավունքների ոտնահարում կլիներ և հետագա ոտնահարումների համար բացասական նախադեպ, նույնպիսի խնդրանքով հոկտեմբերի 24–ին ԱԺ–ում Կառավարության հարցուպատասխանի ընթացքում Փաշինյանին դիմեց 6–րդ գումարման ԱԺ «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանը: Նույն օրը լրագրողներին նա հայտնել էր, որ ինքն անձամբ կարող է մասնակցել ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի դեմ ցույցին՝ կրկնելով անվտանգության հարցերին հղող հոմոֆոբ դիրքորոշումների ողջ ռեպերտուարը *«բանակի, պատերազմող երկրի, ծնելիության, ավանդական ընտանիքի, ազգային և պետական անվտանգության սպառնալիքի»* մասին. *«Ես եթե մասնակցեմ, ոչ թե որպես պատգամավոր եմ մասնակցելու, այլ որպես հայ մարդ, հայ տղամարդ,*

45. Մարդու իրավունքների տուն Երևան. (2018, նոյեմբեր 18). Հայտարարություն ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի չեղարկման վերաբերյալ. pinkarmenia.org. Վերցվել է՝ https://bit.ly/35Ny4XF:

46. Mkrtchyan, M. (2018, November 16). UN Special Rapporteur concerned over cancellation of LGBT Christian forum in Armenia. Retrieved from https://arminfo.info/full_news.php?id=36727&lang=3.

որ սկզբունքորեն դեմ է, որ նույնասեռականությունը թափանցի ավանդական ընտանիք: Գիտեմ, որ այս ելույթիցս հետո շատերն են գրոհելու իմ ուղղությամբ, բայց դա ինձ չի վախեցնում. եթե ինձ պետք է վախեցնի ավանդական ընտանիքի մասին խոսելը, ուրեմն ամոթ է, որ ես ընդհանրապես Հայաստանի պետական ապարատում տեղ ունենամ: (...) Չեմ ասում՝ տվեք սպանեք, բռնության կոչ չեմ անում, ես ընդամենը դեմ եմ, որ այդ երևույթները թափանցեն հայկական ընտանիք ու մեր ուսումնական հաստատություններ: Կարծում եմ, որ մեզ համար դա ազգային և պետական անվտանգության սպառնալիք է: (...) Պատերազմող երկիր ենք, շատ հետաքրքիր է՝ արական սեռի երկու ինչպիսի՞ շփումից պետք է գոյանա սերունդ, որը ապագայում ստանձնի սահմանների պաշտպանությունը: Ձեզ հայտնի՞ է այսպիսի միջոց: Ես անձամբ գիտեմ, որ նման միջոց հայտնի չէ»[47]: Նույն ԲՀԿ կուսակցությունից նախկին պատգամավոր Արագած Ախոյանը դեռևս հոկտեմբերի 11–ին էր հայտարարել, որ ստեղծվում է կազմկոմիտե *«հակահարված»* նախապատրաստելու և ֆորումի չեղարկման համար. *«Ընդհուպ մինչև ծեծը ուտելու են: Սատկացնելու ենք դրանց: (...) Արժանի ձևով պատժելու ենք՝ որպես հայ տղամարդ»*[48]:

Վարչապետի պաշտոնակատար Փաշինյանը ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի մասին հոկտեմբերի 24–ին ԱԺ–ում Պետրոսյանի խոսքին ի պատասխան նշեց, թե հանձնարարել է ճշտել՝ դա ինչ միջոցառում է, ով է կազմակերպում և ինչ նպատակով, ապա հավելեց, որ *«ընտանիքը և ընտանիքի հայկական մոդելն իր համար բարձրագույն արժեք են»*: Իր խոսքում Փաշինյանը խոստովանում է, որ այս թեման իր կառավարության համար *«գլխացավանք»* է, որի պատճառով տարբեր հանրային խմբեր իրենց քննադատում են. մի կողմը՝ իրավապաշտպանական դիրքից, մյուսը՝ ավանդական արժեքների անունից: Պատմելով

47. Գրիգորյան, Ն. (2018, հոկտեմբեր 24). «Չեմ ասում՝ տվեք սպանեք, բռնության կոչ չեմ անում». Գևորգ Պետրոսյանը կմասնակցի ԼԳԲՏ համայնքի ֆորումի տապալման ցույցերին. Aravot.am. Վերցվել է՝ https://www.aravot.am/2018/10/24/989059/:

48. Հայելի Ակումբ. (2018, հոկտեմբեր 15). Սատկացնելու ենք դրանց. Արագած Ախոյանը՝ միասեռականների մասին. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=QtJuIubShJA:

Հայաստանից *«փախած»* մի մարդու պատմություն, որին հանդիպել էր Ֆրանսիա կատարած իր աշխատանքային այցի ժամանակ, նա փորձեց մարդկային կյանքի դաշտում ևս շոշափել հարցը: Միաժամանակ հիշեցնելով Խոհրդային Միության քրեական օրենսգրքում նույնասեռ հարաբերությունների քրեականացված լինելը՝ վարչապետի պաշտոնակատարն առաջարկում էր հանրությանը ապագայի հեռանկարում մտածել, թե ինչ վերաբերմունք ձևավորել ԼԳԲՏ մարդկանց հանդեպ: Թեման գրոտեսկի հասցնելով՝ ԼԳԲՏ մարդկանց ճանաչելուն իբրև այլընտրանք Փաշինյանը նշեց *«այդ մարդկանց վերաբերեականացնելը, Հայաստանից դուրս անելը, քարոզչություն թույլ չտալը, տանկեր հանելով բոլորին տրորելը, գնդակահարելը»*. *«Սովետական Միության մեջ պարզ էր ամեն ինչ՝ Քրեական օրենսգրքում կար հոդված, ու եթե պարզվում էր, որ մարդն այդպիսին է, տանում էին բանտ նստեցնում: Սա հարցի շատ կոնկրետ լուծում է և վերաբերմունք է և այլն, դրանից առաջ կախաղան էին հանում, գնդակահարում էին և այլն, և այլն: Հիմա այսօր մենք ի՞նչ ենք անում: Ես ձեզ անկեղծ ասեմ, ինձ համար՝ որպես վարչապետի, և մեր կառավարության համար ինչքան այդ թեման քիչ բարձրանա, այնքան լավ, որովհետև դա գլխացավանք է. հեսա կեսը կասեն՝ ա՛մ, սրանք բաների պաշտպան են, մյուս կեսը կասի՝ իրավունքների խախտող են, էն մյուս կեսը կասի՝ խարխլում են մեր ավանդական ընտանիքի հիմքերը և այլն, և այլն: Բայց մենք բոլորով, ոչ միայն կառավարությունը, պետք է հասկանանք՝ ի՞նչ ենք անում, եկե՛ք որոշենք՝ մենք քրեական օրենսգրքում հոդված ե՞նք ավելացնում, եկե՛ք որոշենք՝ մենք այդ մարդկանց բոլորին հավաքում ենք ու Հայաստանից դուրս ե՞նք անում, եկե՛ք որոշենք՝ մենք իրենց գոյությունը, որպես այդպիսին, ընդունո՞ւմ ենք, որ կան, թե՞ մենք ասում ենք՝ գիտե՞ք ինչ, քարոզչություն մի՛ տարեք, այսպես ասած, ձեր համայնքն ընդլայնելու և ուրիշներին ներգրավելու: (...) Մեր կառավարությունը դեռ ինչ–որ ձևով այս հարցից կխուսափի, ձևերը կան (...) տասնյակ տարիներ անց որևէ կառավարություն առերեսվելու է պրոբլեմի հետ և պիտի որոշի՝ տանկերը հանում ա, բոլորին տրորո՞ւմ ա, գնդակահարո՞ւմ ա, թե՞ ճա-*

նաչում ա այդ մարդկանց»[49]: Ճիշտ է՝ վարչապետի պաշտոնակատարի խոսքը հնչում էր ԼԳԲՏ մարդկանց իրավունքների և խնդիրների մասին հանրային գիտելիքի սղության և այդ սղությունը խաղարկող քաղաքական սադրանքի համատեքստում, միևնույնն է, անհնար է չնկատել այն ձախողումը, որ թույլ է տալիս վարչապետի պաշտոնակատարը իր այս խոսքում: ԼԳԲՏ մարդկանց, ընդհուպ մինչև կյանքի հարցում, իրավունքի պաշտպանության երաշխիքներ տրամադրելու կառավարության պարտավորությունը ճանաչելու և պատասխանատվություն վերցնելու փոխարեն նա պատասխանատվությունը տեղափոխում է հանրության մեծամասնության կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, հակագենդերային արշավորդների փոքրամասնության ճաշակի դաշտ: Բացի ի պաշտոնե մարդու իրավունքների երաշխավորության հարցում իր պարտավորվածությունների ապահովման թերացումից՝ կարևոր է հաշվի առնել նաև այն մասշտաբային ազդեցությունը, որ Փաշինյանը թողնում է հանրային գիտելիքի ձևավորման վրա: Այսպիսի բացթողումները, որտեղ իբրև համահավասար այլընտրանքներ մի նժարի վրա են դրվում ԼԳԲՏ մարդկանց կյանքի և այլ իրավունքների ճանաչումը, իսկ մյուս նժարին՝ դրանց ոտնահարումը, միմիայն ամրապնդում են հակագենդերային արշավների սադրիչ դիրքերը և դրանց հանրային ընդարձակման բարենպաստ պայման դառնում: ԼԳԲՏ հարցերի մասին Փաշինյանը սակավախոս է, իսկ երբ չի հաջողում խուսափել այդ բարդ խոսակցությունից, ընտրում է հռետորական հարցեր տալու եղանակը՝ թերևս ենթադրելով, որ մարդիկ պիտի մտածեն դրանց մասին և պատասխաններ գտնեն: Փաշինյանը գուցե հույս ունի, որ հանրությունը ինքն իրեն հարցեր տալու ճանապարհին չի ընտրի մարդատյաց պատասխանների հնարավորությունը, սակայն այս հարցում նա շրջանցում է ոչ միայն Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանվածության սահմանդրականության կողմը, այլև ներկայում ԼԳԲՏ մարդկանց իրավունքների շահարկման քաղաքական կողմը: Շրջանցվում են նաև այն կրթական–մշակութային բացթողումները,

49. Factor TV. (2018, հոկտեմբեր 24). Նիկոլ Փաշինյանը՝ Հայաստանում անցկացվելիք ԼԳԲՏ ֆորումի մասին. Վերցվել է՝ https://www.youtube.com watch?v=JAMVEC2EuVo:

որ Հայաստանի նախորդ կառավարություններն են թույլ տվել՝ հասարակական տրամադրություններում ԼԳԲՏ մարդկանց «սպանելու», «վառելու» «կախաղան հանելու» հոետորաբանության այդքան տարածվածության և անգամ խրախուսման հարցում: «Արդյոք սպանե՞լ», «արդյոք վառե՞լ և կախաղա՞ն հանել» հարցերով հանդես գալուց առաջ կառավարության ղեկավարը պարտավոր էր պայմաններ ձևավորել այս հնչած հարցերին այլ պատասխաններ հնչեցնելու հնարավորության համար: Կարծում ենք՝ անհրաժեշտ է, որ կառավարությունը և ներկայիս վարչապետ Փաշինյանը այս հարցերի շուրջ ավելի զգայուն և նրբանկատ լինեն և հանրության քննարկման առարկա դարձնեն ոչ թե խտրականությունն արմատավորող, այլ այն հաղթահարել փորձող գաղափարներ և պատկերացումներ:

«Նոյի հպարտություն» սադրանքը

2018 թ. նոյեմբերի 19–ին գոյություն չունեցող մի կազմակերպության, այսպես կոչված, Noah pride նախաձեռնության անունից կեղծ տեսանյութ և տեքստ ուղարկվեց ՁԼՄ–ներին այն մասին, թե Երևանում, իբր, ԼԳԲՏ մարդկանց պաշտպանության ակցիաներ են կազմակերպվել, որոնց հիմնական նպատակն էր *«աջակցել Հայաստանում ԼԳԲՏ շարժման ակտիվիստներին և նոր կառավարության վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի քաղաքականությանը»*[50]: Այս մեդիա իրադարձության կազմակերպումը վառ ցուցադրում է հակագենդերային արշավի ողջ տրամաբանությունը, այն է՝ գենդերային իրավահավասարության և ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանության թեման դարձնել հետհեղափոխական կառավարության թիրախավորման ուղիղ կամ իրավապաշտպանների վրա հարձակմամբ միջնորդված գործիք: Հեղափոխությունից հետո, ինչպես տեսանք, Նիկոլ Փաշինյանը և նրա կառավարությունը պարբերաբար հակագենդերային արշավների կողմից մեղադրվում են ԼԳԲՏ մարդկանց իրավունքները և շահերը

50. Noah Pride. (2018, November 18). Noah Pride in Yerevan on November 16–17. Retrieved from https://www.youtube.com/watch?v=AVc81khoV8Y&feature=youtu.be.

առաջ մղելու, նրանց աջակցելու և հովանավորելու մեջ՝ այդ կերպ ցանկանալով հանրային վախեր զարգացնել և վարկաբեկել վերջիններիս: Հետևաբար Noah pride նախաձեռնությունը Հայաստանում բեմադրվել էր հենց այդ նպատակով: Ըստ մամուլի տարածած հաղորդագրության լուսանկարների և տեսանյութի՝ նոյեմբերի 16–17–ին Երևանում ակցիա է իրականացվել՝ «Համարձակ քայլիր, Նիկոլ» և «Բարև՛, Երևան» կարգախոսներով: Տարածված տեսանյութում երևում է, որ Երևանում Noah pride ներկայացող խմբի ակցիային մասնակցել է չորս օտարերկրացի, որոնք Երևանի տարբեր վայրերում մի քանի վայրկյան քայլել են, լուսանկարվել ծիածան դրոշով ու պաստառով: Մամուլի հաղորդագրության մեջ նշված էր, որ ակցիան անցկացրել են Լեհաստանի, Բուլղարիայի և Ուկրաինայի ակտիվիստները[51]: Չնայած դրան՝ լրատվամիջոցները նախաձեռնության մասին պատմող իրենց հրապարակումներում լայնորեն օգտագործեցին Հայաստանում ԼԳԲՏ այն ակտիվիստների նկարները, որոնցից շատերի դեմքերն արդեն ճանաչելի են հայաստանյան հանրությանը, և որոնք պարբերաբար ենթարկվում են խտրականության և ատելության խոսքի: Տեղացի ակտիվիստների դիմանկարների օգտագործումը հորինված պատմության մասին լուսաբանումներում ոչ միայն լրագրողական պրոֆեսիոնալիզմի բացակայության մասին էր վկայում, այլև վերստին փաստացի աջակցում էր նրանց թիրախավորման արշավին՝ որպես հետևանք սրելով և խորացնելով հանրային բացասական դիրքորոշումները ԼԳԲՏ ակտիվիստների և անձանց հանդեպ: Այս մեդիա սադրանքը, սակայն, մեծ հաջողության և հանրային հնչողության չհասավ, իսկ «կազմակերպության» մասին առկա բոլոր նյութերն արդեն իսկ անհասանելի են համացանցում: Կարծում ենք, որ սադրանքի կազմակերպման օրերի ընտրությունը պատահական չէր: Նշված օրերին ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի անցկացման դեպքում այն կարող էր ունենալ հոմոֆոբիայի աճող տրամադրությունների կրակի վրա յուղ ավելացնելու նշանակություն:

51. Վարդանյան, Գ. (2018, նոյեմբեր 20). Երբ միֆերը շատ են, լրագրողի գործը դրանք ցրելն է. Media.am. Վերցվել է՝ https://bit.ly/2YI7sWq:

Հետհեղափոխական ԱԺ ամբիոնից տրանսգենդեր իրավապաշտպանի ելույթի թիրախավորումը

2019 թ. ապրիլի 5–ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի նախաձեռնությամբ և ՄԱԿ–ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպել էր խորհրդարանական լսումներ՝ «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ–ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով[52]: Այս լսումներին ԱԺ ամբիոնից ելույթ ունեցավ «Իրավունքի կողմ» ՀԿ նախագահ, տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանը. *«…ես իմ մեջ ամփոփում եմ խոշտանգված, բռնաբարված, առևանգված, ֆիզիկական բռնության ենթարկված, այրված, ողջակիզված, դանակահարված, մահափորձի ենթարկված, սպանված, արտագաղթած, թալանված, սոցիալական, իրավական, առողջապահական, տնտեսական և արժանապատիվ կյանքի բոլոր ոլորտներում խարանի և խտրականության ենթարկված, գործազուրկ, աղքատ ու բարոյապես լքված հայ տրանսգենդերի կերպարը: Մինչև 2018 թ. մենք փաստագրել ենք 283 նման դեպք տրանսգենդեր անձանց նկատմամբ: Եվ չգիտեմ՝ սարսափելին այս թի՞վն է, թե՞ այն փաստը, որ այս դեպքերի միայն չնչին մասն է ոստիկանությունում կամ որևէ այլ պատկան մարմնում ընդունվել վարույթ»*[53]:

Մարտիրոսյանը շեշտադրեց նաև, որ ԱԺ ամբիոնից խոսելու հնարավորությունն ինքնին հեղափոխության ձեռքբերումներից է՝ հավանաբար նկատի ունենալով մարդու իրավունքների օրակարգի շուրջ հանրային լսումի կազմակերպումն ու դրան իր մասնակցության հնարավորությունը՝ որպես հետհեղափոխական Հայաստանի ձեռքբերում: ԱԺ ամբիոնից Մարտիրոսյանի ելույթը և հատկապես վերոնշյալ դիտարկումն առիթ դարձան հակագենդերային խմբերի կողմից հոմոֆոբ ալիքի մոբիլիզացման համար՝ թե՛ իրավապաշտ-

52. Parliament.am. (2019, ապրիլ 5). «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ–ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներ ԱԺ–ում. Վերցվել է՝ https://bit.ly/35Fhxoy:

53. A1plus. (2019, ապրիլ 5). Տրանսգենդեր կինը ելույթ ունեցավ ԱԺ ամբիոնից, Նաիրա Զոհրաբյանը զայրացավ. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=KaWfXaE3_WQ:

պանի թիրախավորման և թե՛ կառավարող ուժի ու ԱԺ–ի հանդեպ բողոք–պահանջների ներկայացման նպատակով:

Որքան էլ զավեշտալի է ու հեգնական, առաջինը, որ խտրական և անհարգալից վերաբերմունք դրսևորեց Մարտիրոսյանի հանդեպ, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն էր («Բարգավաճ Հայաստան» խմբակցություն), որ վարում էր հանրային լսումը: *«Օգտվելով նախագահողի իր իրավունքից»*՝ Զոհրաբյանը Մարտիրոսյանի ելույթից անմիջապես հետո զայրացած և բարձր տոնով մեղադրեց նրան օրակարգից դուրս հարցի շուրջ ելույթի համար՝ որակելով դա *«ուղղակի անհարգալից վերաբերմունք իր՝ որպես հանձնաժողովի ղեկավարի, հանձնաժողովի և ԱԺ–ի նկատմամբ»*՝ ամրագրելով սեռականության և գենդերի հարցերի՝ հանրային և քաղաքական տեսանկյունից «անընդունելի» քննարկման առարկա լինելը ԱԺ–ում: Հետագա հարցազրույցներից մեկում Զոհրաբյանը Մարտիրոսյանի ելույթը որակեց իբրև *«անպարկեշտ քայլ»*, *«ապտակ խորհրդարանին»*[54]: Սակայն հարկ է նշել, որ օրակարգի կիզակետային թեմաներից դուրս՝ մարդու իրավունքների ընդհանուր թեմայի շրջանակում, այլ ելույթներ ևս հնչել էին մինչ Մարտիրոսյանի խոսքը, սակայն դրանցից ոչ մեկը Զոհրաբյանը չէր գնահատել իբրև վիրավորական: Այս վարքաձևով Զոհրաբյանն առաջին հերթին կասկածի տակ առավ կամ, եթե ավելի խիստ դնենք հարցը, վերահաստատեց հեղափոխությունից հետո ընտրված ԱԺ–ի՝ հանրության *ոչ* բոլոր խմբերի և շերտերի շահերը և իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու առաքելությունը: Երկրորդ հերթին նա քաղաքականապես թեժացրեց թե՛ ԱԺ–ում, թե՛ հասարակության լայն շերտերում գոյություն ունեցող խտրական դիրքորոշումները ԼԳԲՏ մարդկանց հանդեպ, այնինչ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի իր կոչումով իսկ պարտավոր էր առաջինը արձագանքել և Մարտիրոսյանի հնչեցրած խնդիրների լուծման գործնական հանձնառություններ վերցնել, ինչպես խոստացել էր հանձնաժողովի նախագահի իր թեկնածության քննարկման ժամանակ: Զոհրաբյանի կուսակցության («Բարգավաճ

54. 1inTV. (2019, ապրիլ 5). Սա ապտակ էր մեր խորհրդարանին. Նաիրա Զոհրաբյանը ԱԺ–ում տրանսգենդերի ելույթից շոկի մեջ է. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=JQYSbAGkJY8:

Հայաստան») ագրեսիվ–հոմոֆոբ պոպուլիզմը հասավ նրան, որ կուսակից Գևորգ Պետրոսյանն առիթն օգտագործեց *«ԼԳԲՏ քարոզչությունը»* արգելող օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իր պատրաստակամությունը հայտնելու համար, իսկ մեկ այլ կուսակից Վարդան Ղուկասյանը հայտարարեց, որ բոլոր մարդիկ հավասար իրավունքներ չունեն. Հայաստանում «*ավանդականն ավելի կարևոր է*»: Ավելին՝ օրենսդիր մարմնի ներկայացուցիչը ԼԳԲՏ մարդկանց անվանեց *«այլասերված վարք ունեցող»* և կոչ արեց նրանց գնալու և ապրելու Հոլանդիայում: Այս բոլոր պատգամավորների վարքով ցուցադրվեց ՀՀ ԱԺ–ում երկրորդ ամենամեծ կուսակցության՝ ԲՀԿ քաղաքական դիրքորոշումը Հայաստանում տարբերվող հատկանիշներ ունեցող մարդկանց համար ապրելու պայմաններ ստեղծելու հարցի շուրջ[55]:

Մարտիրոսյանի ելույթից հետո սոցիալական ցանցերում և առցանց լրատվամիջոցներով հակագենդերային խմբերի առաջնորդությամբ կրկին հայտնվեցին նրան և մյուս տրանսգենդեր մարդկանց սպանելու, վերացնելու սպառնալիքներ և կոչեր: Այս կոչերը կարճ ժամանակ անց վիրտուալ հարթակից տեղափոխվեցին հնչելու իրական կյանքում: ԱԺ–ի դիմաց բողոքի ցույց սկսվեց, որին մասնակցում էին հակագենդերային արշավների անդամներ, ՀԱԵ մեկ եկեղեցական, աջ պոպուլիստական գործիչներ, պահպանողականներ, նրանց միացել էին ԲՀԿ որոշ ներկայացուցիչներ: Ցույցը ձգողության կենտրոն դարձավ հոմոֆոբ սենտիմենտներով մարդկանց ագրեսիվ և բռնարար խոսքի լեգիտիմացման համար, այդ թվում՝ իր շուրջ հավաքելով անհավասարակշիռ քաղաքացիների, ինչպես, օրինակ՝ ցույցին այցելած մի քաղաքացու դեպքում էր, որն իր հետ դանակ էր բերել և հանրայնորեն՝ լրատվամիջոցների տեսախցիկների առաջ, պատմում էր, թե ինչպես է մտադիր կիրառել այն:

Մարտիրոսյանի դեմ կազմակերպված արշավի լեզուն և հանրությանն ուղղված ուղերձները թե՛ այլ երկրների, թե՛ Հայաստանի հակագենդերային արշավների տեսանկյունից նույնաբովանդակ էին: Իրավապաշտպանի ելույթը եկեղեցականի և այլ հակագենդե-

55. 1in.am. (2019, ապրիլ 9). Պետք է էգը էգ լինի, որձը որձ լինի, դրանց պետք է վտարել Հոլանդիա. Վարդան Ղուկասյան. Վերցվել է՝ https://www.1in.am/2538384.html:

րային անհատների և խմբերի կողմից որակվեց իբրև *«պղծության քարոզ»*, ինչի հիմնավորմամբ ցուցարարները պահանջում էին իրենց ներս՝ ԱԺ նիստերի դահլիճ թողնել՝ ԱԺ ամբիոնը խնկարկելու համար: Հատկանշական է, որ թեև ոչ այս անգամ, այլ մոտ մեկ տարի անց հակագենդերային արշավի և հակակառավարական ուժերի արդեն փորձառու դարձած ներկայացուցիչ Սոնա Աղեկյանը խորհրդարանում դատահրավական բարեփոխումների թեմայով կազմակերպված լսումների ժամանակ իր ելույթի առիթն օգտագործեց խնկարկման պերֆորմանս անելու համար[56], այն, ինչ չէր հաջողվել եկեղեցական ցուցարարին:

Վերջինս թեև չհասավ խնկարկման նպատակին, սակայն հաջողեց այնքան տարվել ատելության իր հույզերով, որ ցույցին հաջորդած տեսահոլովակ–ուղերձ հրապարակեց, որում բազմաթիվ հակաքրիստոնեական կոչերով ու սպառնալիքներով հանդես եկավ: Այս եկեղեցականի ատելության տոնայնությունը հասել էր այն աստիճանի, որ նույնիսկ ՀԱԵ–ն պատժիչ գործողությամբ արձագանքեց՝ նրան չորս օրով փիլոնազրկելով. *«Դատապարտելով այլասերության քարոզի բոլոր դրսևորումները՝ այդ ամենի դեմ պայքարում կարևորում ենք խոհեմ ու քաղաքակիրթ կեցվածքը: (...) վերջին օրերին հոգևորականին ոչ հարիր կեցվածքի, իր հովվական առաքելությունից շեղվելու, հուզական պոռթկումների տակ ճշմարտությունից հեռանալու համար Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ղազար քահանա Պետրոսյանը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի տնօրենությամբ հայտարարվել է փիլոնազուրկ մինչև Ավագ Շաբաթ...»*[57]:

Բողոքի ակցիաներ կազմակերպեց նաև վերջին շրջանում հակագենդերային և հակաիրավապաշտպան արշավների կազմակերպիչ, Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ պայքարող

56. Հատկանշական է, որ Աղեկյանի պերֆորմանսից հետո ելույթ ունեցող «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սուրեն Գրիգորյանը իր խոսքից առաջ շեշտեց, որ անկախ նրանից, որ դա «որոշ մարդկանց համար ցանկալի չէ Ազգային ժողովի ամբիոնը այլևս նոր Հայաստանում կապույտ անձնագրով ցանկացած քաղաքացու համար բաց է». (Գրիգորյան, Ն. (2020, փետրվար 25). «Քանի որ պղծված է Ազ ամբիոնը, ես հիմա խնկարկում եմ անում». Սոնա Աղեկյան. Aravot.am. Վերցվել է՝ https://www.aravot.am/2020/02/25/1096341/):

57. Արարատյան Հայրապետական թեմ. (2019, ապրիլ 10). Հայտարարություն. Qahana.am. Վերցվել է՝ https://bit.ly/2WASHCo:

«Հայկական արժեքների պաշտպանության «Կամք»» նախաձեռնությունը, որը բողոքում էր Հանրային հեռուստառադիոընկերության դեմ՝ տրանսգեդներ իրավապաշտպանի ելույթը ցուցադրելու համար: Հանրային հեռուստաընկերությունից «Կամք» նախաձեռնության պահանջը փաստորեն, որքան էլ զավեշտալի կարող է թվալ, *հանրային* խնդիրները և իրադարձությունները թաքցնելու, դրանց մասին լռելու և չլուսաբանելու պահանջ էր. մի գործելաոճ, որը լիովին բնորոշ էր Հանրայինի նախահեղափոխական դրությանը: Էլ ավելի զավեշտալի է «Կամք» նախաձեռնության պահանջը այն պարզ իրողության համատեքստում, որ Հանրայինը իրականում չէր ցուցադրել Մարտիրոսյանի ելույթը (ինչն ինքնին առանձին պարզաբանման կարիք ունի):

Չուշացան նաև Մարտիրոսյանի և հետևաբար վարչապետ Փաշինյանի թիմի սորոսականության և ԼԳԲՏ քարոզչության մասին առասպելները: Այս առասպելները անմիջականորեն կապվում էին Վիգեն Սարգսյանի՝ նախընտրական բանավեճի ժամանակ Փաշինյանին ուղղված հարցի հետ, որով ՀՀԿ ներկայացուցիչը փորձում էր ճշտել (ավելի ճիշտ կլինի ասել՝ պնդել), թե արդյոք Փաշինյանը պարտավորություն ունի ԼԳԲՏ մարդկանց առաջ: Մարտիրոսյանի ելույթը դավադրապաշտական առասպել հյուսելու հարմար առիթ էր, ըստ որի՝ վարչապետ Փաշինյանը ստանձնել է տրանսգենդերների իրավունքների պաշտպանության և առաջխաղացման մի ընդարձակ ծրագիր: Այս ապատեղեկատվական աղմուկը, որ ծառայեցվում է Փաշինյանի քաղաքական հակառակորդների կողմից նրա հանդեպ հանրային վստահությունը խաթարելու նպատակով, առաջին հերթին մշուշեց հնչեցրած խոսքի բովանդակությունը, լռեցրեց բարձրաձայնված խնդիրները՝ ապա դառնալով այդ խնդիրների խորքային առկայության վկայությունը:

Կառավարող ուժի և/կամ պետական հաստատությունների արձագանքները

Լիլիթ Մարտիրոսյանի խոսքը դեռ նոր ավարտված՝ թշնամական արձագանքներին արդեն սկիզբ դրեց Նաիրա Զոհրաբյանը՝ ամրապնդելով իր և իր կուսակցության (ԲՀԿ) քաղաքական հոմոֆոբ–հակագենդերային դիրքավորումը: Սակայն ոչ միայն ԲՀԿ–ն, այլև կառավարող «Իմ քայլը» խմբակցությունը, ինչպես

նաև մյուս ընդդիմադիր՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը ձախողեցին համաչափ արձագանքելու իրենց պարտավորությունը՝ տրանսգենդեր կին իրավապաշտպանի խոսքի և նրա նկատմամբ բարձրացված սպառնալիքների ու բռնության կոչերին: Թեժացած ատելության մթնոլորտում թե՛ կառավարող ուժի, թե՛ նրանց քաղաքական հակառակորդների կողմից ակնհայտ դրսևորվեցին բոլոր այն խնդիրները, որոնց բարձրաձայնման համար էր ԱԺ ամբիոն բարձրացել տրանսգենդեր իրավապաշտպան Մարտիրոսյանը:

Ոչ թե Մարտիրոսյանի բարձրացրած հարցերը, այլ նրա մուտքը «դավադիր կերպով» կազմակերպած կամ թույլ տված ուժի այսպես կոչված հայտնաբերման ուղղությամբ ընթացավ ԱԺ քաղաքական ուժերի ներկայացուցիչների, մասնավորապես ԲՀԿ–ի և «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների քննարկումը: Օրեր շարունակ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Զոհրաբյանի և նույն հանձնաժողովի անդամ, կառավարող «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանի կողմից հնչեցին փոխադարձ մեղադրանքներ, հրապարակվեցին աշխատանքային նամակներ, որոնք լուսաբանվում էին, թե ով է թույլ տվել, կամ ում հրավերով է տրանսգենդեր կինը «հայտնվել» խորհրդարանում, ով էր նրան առհասարակ թույլ տվել ելույթ ունենալ ԱԺ ամբիոնից, կարծես դրանում կար թաքնված հանցանք, որը պահանջում էր ինքնարդարացումներ:

«Իմ քայլը» խմբակցության մեկ այլ պատգամավոր՝ Սոֆյա Հովսեփյանը, որը պարբերաբար հանդես է գալիս հոմոֆոբ և կնատյաց[58] դիրքորոշումներով, լրագրողի հարցին, թե արդյոք

58. Առաքելյան, Ա. (2019, հուլիս 5). Նկարագրել, որ ամբողջ հանրապետությունը սեռական բռնության է ենթարկվում, անթույլատրելի է. Սոֆյա Հովսեփյանը՝ «Բռնության ձայնը» հեշթեգով գրառումների մասին. Tert.am. Վերցվել է՝ https://bit.ly/2YHaTgh:
2020 թվականի մարտի 5–ին Գյումրիում քառասուներեքամյա կնոջը և նրա տասներեքամյա աղջկան իր իսկ տանը դաժան ծեծի է ենթարկել կնոջ զուգընկերը: Դաժան ծեծի հետևանքով կինը մահացել է, իսկ աղջնակի առողջական վիճակը լավանում է: Սոֆյա Հովսեփյանը զերծ չէր մնացել ֆեյսբուքյան քննարկումներից մեկի ժամանակ հանրայնորեն մեղադրելուց սպանված կնոջը՝ երիտասարդ տղամարդու հետ հարաբերություններ ունենալու և, ըստ էության, սպանվելու համար:

պետք էր Մարտիրոսյանին հրավիրել ԱԺ, պատասխանեց. *«Գիտեք, սա շատ զգայուն թեմա է, եթե նայենք մարդու իրավունքների տեսանկյունից, ապա որևէ մեկս իրավունք չունենք ոտնահարելու նրա իրավունքները: Բայց քանի որ հայ ժողովրդի համար սա շատ զգայուն թեմա է, ապա պետք է հաշվի նստել բացարձակ մեծամասնության հետ և որևէ կերպ չփորձել այլոց իրավունքները ոտնահարել և զգայական դաշտում ուղղակիորեն նրանց տանջել...»*[59]:

Հատկանշական է, որ հեղափոխական թիմի անդամ ԱԺ պատգամավորը, ըստ էության, կրկնում է այն անհատների և խմբերի հռետորաբանությունը, որոնք առաջնաբեմ են մղում «ազգային արժեքները» «մարդու իրավունքներին» և փոքրամասնության իրավունքները մեծամասնության իրավունքներին հակադրող պոպուլիստական կեղծ դիսկուրսը՝ ազգայինի շղարշի տակ հիմնավորելու և արդարացնելու բռնության, մարդու իրավունքների ոտնահարումների, հակաժողովրդավարության մշակույթը, ինչպես նաև առաջ մղելու Հայաստանը հակաժողովրդավար ազդեցության գոտիներում պահելու քաղաքական օրակարգը: ԱԺ պատգամավորը, փոքրամասնության՝ հանրության մեջ ճնշված և լուսանցք մղված անհատների և խմբերի «երևալու և խոսք հնչեցնելու» իրավունքը ստորադասելով մեծամասնության հնարավոր զգայական տանջանքները կանխելու հիմնավորմամբ, խիստ արատավոր և մերձֆաշիստական քաղաքական տեսլական է առաջ քաշում: Իր դիրքորոշումը բարձրաձայնելով՝ Հովսեփյանը վստահաբար միայն իր տեսլականը չէ, որ արտահայտում է, սրանով էլ ցուցանում է հետհեղափոխական Հայաստանում մարդու իրավունքների քաղաքական ըմբռնման խութերը (անգամ հեղափոխական «Իմ քայլը» խմբակցության շրջանակում) և իրավունքների առաջխաղացման ոլորտում շարունակական պայքարի անխուսափելիությունը:

Ինչ վերաբերում է «Լուսավոր Հայաստան»–ին, ապա այս խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը լրագրողների այն հարցին, թե ինչու է իրենց կուսակցությունը լռում տրանսգեն-

59. News.am. (2019, ապրիլ 7). Հարգել ԼԳԲՏ համայնքի իրավունքները, իսկ մնացածի՞ իրավունքները. «Իմ քայլի» պատգամավոր. Վերցվել է՝ https://bit.ly/2WcRNgm:

դերի՝ ԱԺ–ի դահլիճից ունեցած ելույթի վերաբերյալ, պատասխանել էր, որ չի մտնի ԲՀԿ–ՔՊ վեճի դաշտ, որտեղ քննարկվում է, թե ինչպես պետք է կազմակերպվեն խորհրդարանական լսումները: Ապա Մարուքյանը մեղադրել էր լրագրողներին՝ թեման շահարկելով լուսաբանելու համար՝ նշելով, որ նման բարձր ուշադրության չեն արժանացել, օրինակ, նույն օրը ԱԺ տնտեսական հանձնաժողովում քննարկված երկու ֆունդամենտալ նախագծեր, որոնք մարդկանց կյանքի վրա ազդեցություններ են ունենալու: Լրագրողներին ուղղված Մարուքյանի մեղադրանքի հիմնական փաստարկն այն էր, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հարավային Կովկասում սեռական փոքրամասնությունների և տրանսգենդեր անձանց իրավունքների ոտնահարումների մասին բանաձևի նախագիծ է շրջանառության մեջ դրվել, որում *«Հայաստանին վերաբերող դոմինանտ հատված կա». «Հայաստանը հիմա դրա հետ կապված խնդիր է ունենալու: (...) Բանաձևում ձևակերպումներ կան, որով Հայաստանն ու Ադրբեջանը հավասար հարթության վրա են դրվում, որը շատ վատ է, քանի որ Freedom House–ի բոլոր բանաձևերով մենք Ադրբեջանից առաջ ենք, հեղափոխությունից հետո շատ ավելի առաջ ենք, բայց հիմա այդ բանաձևով մենք հավասար դաշտում են դրվում»*[60]: Մարուքյանի այս արձագանքում տեսնում ենք երկու անընդունելի միտում, որով Հայաստանի հասարակության իրավապաշտպանական խնդիրները զուտ արտաքին պարտավորությունների անկյան տակ են դիտարկվում կամ էլ Ադրբեջանի հետ համեմատության մեջ (Ադրբեջանը վերջին տասնամյակներին քաղաքական առաջնորդների համար դարձել է նշաձող՝ իբրև հակառակորդ, որի համեմատ է, որ պետք է առաջ լինել):

Մյուս կողմից, սակայն, արտաքին պարտավորությունների կատարման և արտաքին գործընկերների հետ համագործակցության հասցեատեր պետական հաստատությունը՝ ի դեմս ՀՀ արտաքին գործերի նախարարության, այս միջադեպի առիթով Երևանում հավատարմագրված որոշ դիվանագիտական

60. Livenews.am. (2019, ապրիլ 16). «Արեցիք այնպես, որ Հայաստանը խնդիրներ ունենա». Մարուքյանը՝ տրանսգենդերի թեմայի մասին. Վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=7n–c48XSxOg:

ներկայացուցչությունների անունից տարածած մտահոգություն արտահայտող հայտարարություններին ի պատասխան՝ երկակի էր արձագանքել՝ միջազգային գործընկերներից հայկական հասարակական բարոյականության հանդեպ զգայունություն պահանջելով. *«ՀՀ Կառավարությունն ամբողջովին հավատարիմ է մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման իր պարտավորություններին... Ուստի այս համատեքստում մեր միջազգային գործընկերները պետք է առավել հարգանք և զգայունություն ցուցաբերեն հայկական հասարակության հանդեպ և ձեռնպահ մնան հասարակական քննարկումների անհարկի ուղղորդումից, եթե անգամ նրանք համաձայն չեն դրանց տոնայնության հետ: Կուզենայինք հիշեցնել, որ հասարակական բարոյականության սկզբունքը մաս է կազմում մարդու իրավունքների միջազգային պարտավորությունների, և դրանք չեն կարող անտեսվել»:* ՀՀ ԱԳՆ պատասխանում նկատելի է այն կանխենթադրույթը, թե Հայաստանի հասարակական բարոյականության մաս է կազմում ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժողությունն ու բռնությունը՝ դրանով լեգիտիմության տեղ բացելով հրահրված բռնության և ատելության վերելքին:

Հատկանշական է ՄԻՊ–ի ձևական արձագանքը Լիլիթ Մարտիրոսյանի թիրախավորմանը: ՄԻՊ–ն իր հայտարարությամբ քննադատեց ատելության խոսքն ու սպառնալիքը, սակայն հայտարարության ողջ տրամաբանությունը կառուցված է այնպես, որ նույնիսկ անվանական հիշատակում կամ հղում չկա տրանսգենդեր իրավապաշտպան Լիլիթ Մարտիրոսյանին: Ավելին՝ հայտարարությունը կարծես զորակցության նամակ լինի Մարտիրոսյանի հասցեին հոմոֆոբ–խտրական արտահայտություններ հնչեցրած Նաիրա Զոհրաբյանին՝ շեշտելով վերջինիս հետ ՄԻՊ գրասենյակի արդյունավետ աշխատանքը[61]:

Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին հաջորդած աղմուկին արձագանքեց նաև վարչապետ Փաշինյանը: Չնայած Փաշինյանը խնդրահարույց համարեց Մարդու իրավունքների պաշտպա-

61. Պետությունը գործադրել է անհրաժեշտ ջանքեր, իսկ ատելության ցանկացած խոսք անթույլատրելի է. (2019, ապրիլ 15). Վերցվել է՝ https://ombuds.am/am/site/ViewNews/750?fbclid=IwAR0g467RR6qDVhl47098TJSXlhwHRxzbs_V5jidxMZvuBHHYuZhppInQfHw:

նության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի խտրականացնող արձագանքը Մարտիրոսյանի ելույթին և դրան հաջորդած աղմուկը որակեց իբրև քաղաքական սադրանք՝ այնուհանդերձ, կրկին հարցը քննարկեց՝ ընկնելով նախորդ իշխանությունների թողած «ժառանգությանը» հղելու թակարդի մեջ, որը կարող ենք դիտարկել որպես նման զգայուն հարցի շուրջ հստակ և միանշանակ քաղաքական դիրքորոշում հայտնելու պատասխանատվությունից խուսափելու միջոց. *«2015 թ. Հայաստանի պահպանողական իշխանությունը ՀՀ քաղաքացի Վաղարշակ Մարտիրոսյանի անձնագիրը վերցրել է և նրան տվել ՀՀ քաղաքացի Լիլիթ Մարտիրոսյանի անձնագիր: Ընդ որում՝ անձնագիր է տվել, գրել է՝ Լիլիթ Մարտիրոսյան, սեռը՝ արական: Հիմա ՀՀԿ շարքերում ընդունված բա՞ն է, որ արական սեռի ներկայացուցչի անունը Լիլիթ է: Այն պահին, երբ այդ ՀՀԿ իշխանությունն այդ մարդուն տվել է ՀՀ քաղաքացու անձնագիր՝ Լիլիթ Մարտիրոսյան, սեռը՝ արական, նրան ընդգրկել է ընտրական ցուցակներում, ուրեմն նրան օժտել է ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքներով և պարտականություններով: …երբ որ ես իրենց ասում էի՝ դուք գեյ ակտիվիստ եք [նկատի ունի ՀՀԿ—ին], իրենք չէին հավատում, և սա ևս մեկ ապացույց է»*[62]: Այս արձագանքից թվում է, թե այնքան ծանր է ՀՀ տրանսգենդեր քաղաքացու իրավունքները ճանաչելու բեռը, որ գործող վարչապետը այդ բեռը գցում է նախկին և մերժված իշխանական խմբի վրա (նկատենք, որ ծանրության այս աստիճանը բանաձևված է հոմոֆոբ–հակագենդերային արշավները նախաձեռնող խմբերի և նրանց մոբիլիզացրած հետևորդների կողմից): Այնինչ աներկբա ճանաչելով տրանսգենդեր իրավապաշտպանի խոսքի իրավունքը՝ լեգիտիմության և վստահության բարձր կրեդիտ ունեցող վարչապետը կարող էր այս զգայուն թեմայի շուրջ Հայաստանի քաղաքական մշակույթում, ինչպես նաև հանրային պատկերացումներում առաջընթաց գրանցել:

62. Ազատություն. (2019, ապրիլ 9). ԲՀԿ–ն պետք է մտածի՝ արդյոք Զոհրաբյանը համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին. Նիկոլ Փաշինյան. Վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/29869980.html:

Ամփոփում

Հայաստանում հակագենդերային արշավների գործունեության և հռետորաբանության մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք, ձևավորվելով աշխարհի տարբեր ծայրերում համընդհանուր հակահիրավապաշտպան և հակաժողովրդավար արշավների վերելքի ալիքի վրա, այդուհանդերձ իրենց քաղաքական ակունքներով առավելապես կապված են կրեմլյան շրջանակներին և նրանց կողմից հետխորհրդային երկրներում տարվող ՌԴ ազդեցության պահպանման կամ զարգացման քաղաքականության օրակարգին: Հայաստանի հակագենդերային արշավների անդամ խմբավորումները սկսած 2013–ից, ճիշտ է, գործադրում են տարբեր երկրների (ԱՄՆ, Հունգարիա, Լեհաստան և այլն) փորձից հայտնի հակահիրավապաշտպան արշավների անհիմն ու պարզունակ քաղտեխնոլոգիական գործիքակազմը, սակայն առավելապես աչքի են ընկել ՌԴ–ում իրականացվող միջոցառումների կրկնությամբ, այն է՝ ձգտել կրեմլյան հակագենդերային օրենքների նմանությամբ ՀՀ օրենքներ անցկացնելու, տապալելու ՀՀ–ում գենդերային զգայունություն բարձրացնող օրենսդրական բարեփոխումները (որոնք ՀՀ միջազգային պարտավորություններից էին բխում), հանրային քննարկման դաշտում տարածելու ՌԴ–ում ձևակերպված լոզունգներ և անգամ մշակված թռուցիկներ: Հետզհետե Ռուսաստանից ավելացող ֆինանսական հոսքերը ձևավորեցին պուտինյան կառավարության օրակարգային քաղաքականություններին նվիրյալ, ժամանակի ՀՀ իշխանություններին գործընկեր (նրանց կողմից վերահսկելի), խորհրդային ուշ շրջանին բնորոշ նորստալինյան–հայրապաշտական (պատերնալիստական) առասպելների ու սոցիալական կառուցվածքների պահպանման ջատագով՝ Ռուսաստանից կազմավորված նախաձեռնություններ և հասարակության կազմակերպություններ (ՌՀԿ–ներ): Եթե մինչ այս հանրային դաշտում ակտիվ քաղաքացիական ՀԿ–ների գործունեության նպատակը առավելապես Հայաստանում ժողովրդավարության զարգացումն էր և

իրավապաշտպանությունը, ապա ՌՀԿ–ները միտված էին հանրության լայն շերտերում պահպանողական գաղափարաբանության և արժեքների անվան տակ հակաժողովրդավար, հակահիրավապաշտպան, հայրապաշտական բարոյականություն ամրապնդելու: Դրանով փորձ է արվում լեգիտիմացնելու Հայաստանի հանդեպ Ռուսաստանի վերահսկող հովանավորչական քաղաքականության վերարտադրությունը և Ռուսաստանից Հայաստանի ստորադաս կախյալության շարունակականությունը: Տարբեր նենգափոխումների գործադրման միջոցով ՌՀԿ–ների մղած հակագենդերային արշավներին այս տարիներին հաջողվեց Հայաստանում «գենդեր» հասկացությունը և գենդերային հավասարության մասին օրենքը դարձնել հանրային բևեռացման, առաջադիմական քաղաքացիական հասարակության թիրախավորման, հակաեվրոպական քարոզչության օրակարգ՝ այդ կերպ մեդիա աղմուկ ձևավորելով և իբր մշակութային հենարան նախապատրաստելով Հայաստանի՝ Եվրոասոցացման համաձայնագրին միանալու փոխարեն Մաքսային միությանն անդամակցելու քաղաքական որոշման համար՝ այն հռչակելով իբրև թե «ավանդական հայկական ընտանիքի փրկության» միակ հնարավոր «քաղաքական» ուղի:

Սրանով հակագենդերային խմբերի գործունեությունը կարող է որքան էլ ազդեցիկ, սակայն զուտ արտաքին դրդիչներով պայմանավորված ժամանակավոր արշավի թյուր տպավորություն թողնել:

Այդուհանդերձ, 2018 թ. հեղափոխությունից հետո ներքաղաքական կյանքում նախկին իշխանավոր օլիգարխների շուրջը հակակառավարական բևեռի առաջացման համատեքստում այս հակագենդերային խմբերը ձեռք բերեցին ավելի ինքնուրույն և տեղական՝ ներքաղաքական օրակարգերի սպասարկման նշանակություն: Դրանք, հետհեղափոխական Հայաստանի կառավարության կողմից չստանալով քաղաքական և իրավական համարժեք գնահատականներ, հաջողել են իրենց հակաժողովրդավար և հակահիրավապաշտպան գործունեության նպատակով համախմբվել հակակառավարական ուժերի (Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի և նրանց համախոհ օլիգարխների) շուրջը, բազմապատկել իրենց ռեսուրսները (այդ թվում՝ մեդիա դաշտում), գործել արդեն առավել բարդ ներքաղաքական տրամաբանության ներքո: Նրանք Հայ առաքելական եկեղեցու հետ անցել են առավել հանրային համագործակցու-

թյան, ընդարձակվել են հանրային խոսքի և կյանքի տարածքում և արդյունքում սեփական հանրային օրակագը սահմանելու փորձերում ներքաշել սովորական քաղաքացիների և երբեմն անգամ այնպիսի հանրային խմբերի, որոնք մեծ հաշվով Հայաստանի ժողովրդավարացման կողմնակիցներ են:

Հետևաբար կարևոր է արձանագրել, որ հակագենդերային արշավների հանդեպ պետական հաստատությունների կողմից համարժեք արձագանքի ձախողումը կարող է հանգեցնել ներհասարակական բևեռացման, որ կառուցվում է սեռականության և անվտանգության զգայուն հարցերի շուրջ հանրային վախերի և տագնապների սրման մեխանիզմներով: Փաստացի հասարակության ներսում մարդու իրավունքների պաշտպանության, գենդերային իրավահավասարության և ինքնության հարցերը վերածվել են ներքաղաքական ազդեցության և ՌԴ աշխարհաքաղաքական ազդեցության պահպանման և/կամ ուժգնացման հարթակի, ինչն առանց այն էլ լուսանցքայնացված և խոցելի ԼԳԲՏ մարդկանց, նրանց իրավապաշտպանների և գենդերային իրավահավասարության պաշտպանների կյանքն ու գործունեությունը շատ ավելի մեծ վտանգների առաջ է կանգնեցնում:

Այսպիսով՝ գենդերային իրավահավասարության և ԼԳԲՏ մարդկանց իրավունքների դեմ արշավները միաժամանակ աշխատում են հետևյալ քաղաքական նպատակային ուղղություններով.

- թիրախավորում են կանանց և ԼԳԲՏ հարցերով զբաղվող իրավապաշտպաններին և ակտիվիստներին, առաջադիմական քաղաքացիական հասարակությանը և անգամ առաջադիմական նախաձեռնություններով հանդես եկող ժամանակակից արվեստագետներին, նսեմացնում են նրանց առանց այն էլ չգնահատված գործունեությունը և արժեզրկում են մարդու իրավունքների գաղափարը,
- ձգտում են նեղացնելու առաջադիմական և իրավապաշտպան գործիչների գործունեության տարածքը և խոչընդոտելու Հայաստանում հանրության իրավագիտակցության աճը, գենդերային հավասարության ձգտող, իրավական, ժողովրդավարական հանրային համակեցության մշակույթի զարգացումը,

- անթաքույց կերպով ուղղված են Հայաստանի ժողովրդավարացումը և իրավապաշտպանական ինստիտուցիոնալ՝ իրավաօրենսդրական հնարավոր և սպասված բարեփոխումները կասեցնելուն,
- թիրախավորելով և վարկաբեկելով իրավապաշտպաններին և քաղաքացիական հասարակությանը՝ միաժամանակ թիրախավորում են նրանց հետ իրականում կամ ենթադրյալ կապակցվածություն ունեցող պետական գործիչներին,
- նախապայման են ստեղծում, որպեսզի պետական գործիչները խուսափեն թիրախավորման և մեղադրանքների ալիք նախատեսող վճռական բարեփոխումներից և իրավապաշտպան ու առաջադիմական քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունից,
- հետհեղափոխական Հայաստանում կառավարող ուժի հատկապես բարեփոխիչ և առաջադիմական հատվածի դեմ մարտնչելու, հանրային հակակառավարական տրամադրություններ զարգացնելու և ներքաղաքական կյանքում սեփական դերակատարման բարձրացման նպատակներ ունեն,
- սերմանում են հեղափոխության ժողովրդականության նկատմամբ կասկածներ՝ այն իբրև արտաքին ուժերի ներդրված դավադիր պլան ներկայացնելով,
- հեղափոխության ժողովրդականությունը արժեզրկելով՝ նախագծում են նվազեցնել կառավարության հանդեպ հանրային վստահությունը, ինչպես նաև հեռահար իմաստով խարխլել սեփական ուժերով, ինքնավար հանրային կյանքի կառուցման և ինքնիշխան պետության հանդեպ Հայաստանի հասարակության վստահությունը, վերակենդանացնել «մեծ եղբոր» հովանավորության կարիքի զգացումը,
- առավել լայն աշխարհաքաղաքական համատեքստում ձևավորել եվրոպական (արևմտյան) իրավաքաղաքական և մշակութային դաշտի դեմ հակադրություն և այս հակադրության վրա փաստարկել Հայաստանի և Կրեմլի միջև անհավասար և ստորադասված հարաբերության կառուցվածքը և Հայաստանի վրա Կրեմլի ծանրակշիռ աշխարհաքաղաքական ազդեցության պահպանումը,

- շահագործել ժողովրդավարական մեխանիզմները և պայմանները, հատկապես հավաքների ազատության և խոսքի ազատության իրավունքները՝ գործելու ընդդեմ հենց այդպիսի հանրային ազատություններ տրամադրող ժողովրդավարության,
- քաղաքական իրական ասելիքի բացակայության պայմաններում և վստահության բարձր կրեդիտ ունեցող վարչապետին ուղիղ թիրախավորելու ժամանակավոր անհամարձակությունից ելնելով՝ որպես ասելիքի թեմա ծառայեցնել հակագենդերային, հոմոֆոբ, ֆաշիստական հռետորաբանությունը, կազմակերպել գենդերային և ԼԳԲՏ իրավունքների թեմայի միջոցով միջնորդված թիրախավորման արշավներ (երբեմն անգամ հորինված ու սադրիչ մեդիա միջոցառումներ) ընդդեմ հետհեղափոխական Հայաստանի նոր կառավարության և դրա ղեկավար Նիկոլ Փաշինյանի՝ նրանց հանրային վստահությունը նվազեցնելու հույսով,
- սադրիչ նախաձեռնություններով գրավել հանրության և կառավարության ուշադրությունը և արձագանքման ռեսուրսը՝ իրենց կեղծ օրակարգերով զբաղեցնելու հանրային քաղաքական օրակարգի մշակման, զարգացման և բարեփոխումների ընդդիմադիր քննարկումների տարածքը:

Անկախ այն ներքաղաքական և աշխարհաքաղաքական նպատակներից, որոնք գործի են դնում այս արշավների անդամները, առկա են նաև մշակութային արժեքաբանական, մտածողական, վարքաբանական և ծիսական նմուշներ, որոնք մտածված կամ ինտուիտիվ կերպով որպես հենարաններ շահարկվում են, աղավաղվում կամ նենգափոխվելով գործադրվում հակագենդերային արշավների կազմակերպիչների կողմից: Մշակութային ընդունված նմուշների կամ մեխանիզմների գործադրումը կամ դրանց շրջված մանիպուլյացիան օգնում է այս հակագենդերային արշավներին «բնական և ողջախոհ, հայրենասեր և քրիստոնյա, ազգային և պետական» ինքնաներկայանալու այն դեպքում, երբ դրանք շատ հստակ քաղաքական, ուրեմն ոչ «բնական» նպատակներ ու շահեր են հետապնդում, բռնության և ատելության իրենց դրսևորումներով հակաքրիստոնեական բնույթ ունեն, ընդհանուր աշխարհի առաջ փակ ու ՌԴ–ից կախյալ մոդելով ազգայինի և պետականի գաղափարաբանական շրջանակ են վերարտադրում:

Այսպիսով՝ Հայաստանի հակագենդերային ուղերձները կառուցվում են հետևյալ փոխկապակցված, փոխլրացնող, երբեմն միմյանց կրկնող մշակութային և գաղափարաբանական մտածողական առանցքների վրա.

- Աղավաղվում է «ավանդույթ» հասկացության իմաստը. որպես միակուռ, անփոփոխ և ճշմարիտ ավանդույթ է ներկայացվում ազգայինի մի մոդել, որին հակադրված կերպով են ներկայացվում ազգայինի ժամանակակից զարգացումները, մերժվում են հայկական մշակույթում հարուստ ավանդույթների բազմազանության իրական պատմությունները:
- Հայկական ազգային ինքնությունը, քրիստոնեական ինքնությունը, ազգային և պետական անվտանգությունը կեղծ հակադրության մեջ են դրվում մարդասիրությանն ու իրավունքների պաշտպանության սկզբունքին՝ խաղարկելով Հայաստանի հանրության մշակութային վախերն ու զգայուն կետերը, օգտվելով մինչ օրս փակ թեմաների (սեռականության) շուրջ հասարակության ոչ լիարժեք իրազեկվածությունից և հույս դնելով Հայաստանում իրավապաշտպանական մշակույթի թուլության վրա:
- Հայկական ազգային ինքնությունը և արժեքները ներկայացվում են իբրև միակուռ, անփոփոխ և ավանդական, որի իրական բացվածքում, սակայն, ընթեռնելի են դառնում հանրային կյանքում անհավասարության և անիրավության, հայրապաշտական պատկերացումները, որոնք, ընդ որում, բացառիկ չեն Հայաստանի համար, այլ տարածված են հետխորհրդային տարածքում (և այլուր):
- Շահարկելով Հայաստանի հասարակության ազգայնական արժեքները և մտայնությունները, հայրենասիրական սենտիմենտները, ընտանեվարական արժեքները և կիսապատերազմական իրավիճակով դրդված անվտանգության վախերը՝ այդ հողի վրա ձգտում են աճեցնելու հակահիրավապաշտպան (որպես հակաեվրոպական) դիրքորոշումներով ծայրահեղ ազգայնականություն, որը սնուցվում է ֆաշիստական, հակասեմիթական, հոմոֆոբ և հակագենդերային տրամադրությունների հումուսով:
- Նենգափոխում են մարդու իրավունքների գաղափարի ոգին՝ փոքրամասնության իրավունքների ճանաչումը ներկայացնե-

լով որպես մեծամասնության իրավունքների հաշվին կորուստ. այսինքն՝ փոքրամասնության հանդեպ կամայականորեն վարվելու՝ բռնանալու, վտարելու, նսեմացնելու, արժանապատվությունը ոտնահարելու գործողություններ կատարելու արտոնությունից տվյալ տեղի և պահի մեծամասնությանը կամ ուժեղին զրկելը մեկնաբանվում է իբրև «մեծամասնության իրավունքների» ոտնահարում:

- Հայաստանի և աշխարհի պատկերը՝ բարդ ու փոխկապակցած հարաբերությունները, անընդհատ վերաներկայացվում են՝ պահպանելով ստալինյան երկաթե վարագույրի ուրվականը: Այսինքն՝ Հայաստանը՝ «ներսը», սխեմատիկորեն տրոհվում է աշխարհից (հիմնականում արևմտյան աշխարհից)՝ «օտարից», որ նույնն է՝ «արտաքին թշնամուց», իսկ հայկական մշակույթը իբրև միակուռ ազգային, ինքնակա, մաքուր, ավանդական, հակադիր է ներկայացվում դրսի՝ նորի, օտարի, պիղծի դավադիր ներթափանցումներին:

- Մարդկանց արժանապատվության և հավասարության արդար պահանջի, մարդու իրավունքների պաշտպանվածության և Հայաստանի ժողովրդավարացման առաջադիմական պայքարը, որում ապրում ու զարգանում են Հայաստանի ակտիվիստներն ու իրավապաշտպանները, հանգեցվում է պարզունակ՝ ազգային–ապազգային, ավանդական–նոր/ժամանակակից (ուրեմն՝ օտար, ուրեմն՝ թշնամի, ուրեմն՝ պիղծ) ինքնության պայքարի, որտեղ իրենք հանդես են գալիս ազգային ինքնության պաշտպանի պատվավոր դիրքից, իսկ իրավապաշտպանները դիվականացվում են որպես դրսից դրդված շահադիտական նկրտումներով դավադիրներ:

- Նույնասեռականությունը կամ գենդերային ինքնությունը սահմանվում է որպես մարդու (մեծ մասամբ տղամարդու) հիմնական ու էական բնութագիր, ինքնություն և կարգավիճակ, որը ներկայացվում է իբրև հակադիր ու թշնամական հանրային տարածված ընկալումներում առկա տղամարդկային մյուս բոլոր բնութագրիչներին, կարգավիճակներին և ինքնություններին՝ դրանով ինքնաբերաբար ձևավորվում է անհանդուրժողականության և բռնության լեգիտիմացման հիմք:

- Հյուսվում են դավադրական տեսություններ, որ հիմնվում են «արտաքին թշնամու» (դավադիր Արևմուտքի, Եվրոպայի, Սորոսի և այլն) կերպարի կառուցման վրա, դրան կապակցվում և թիրախավորվում են «ներքին թշնամիները, հակապետական ուժերը, ագենտները» (իրավապաշտպաններ, ԼԳԲՏ մարդիկ, նոր կառավարության առաջադիմական բարեփոխականներ), որոնց դեմ հեշտանում է ներքաղաքական կեղծ օրակարգերի շուրջ հանրային համախմբում կազմակերպելը, հակաժողովրդավարական Կրեմլի՝ որպես հովանավորի հանդեպ կարոտախտ վերակենդանացնելը, լեգիտիմ է դառնում բռնություններ, ատելություն, ծաղր ու ցինիզմ պարունակող արշավներ (մեդիա հռետորաբանություն, միջոցառումներ, պերֆորմանսներ և ծեսեր) իրականացնելը:

Հակագենդերային արշավները թեև հռետորաբանության մակարդակում մերժում են գենդերային իրավահավասարության և ԼԳԲՏ մարդկանց իրավունքների խնդրի առկայությունը կամ դրա արդիականությունը Հայաստանում, դա ներկայացնում են իբրև դավադիր ներմուծված օտարոտի խնդիր, սակայն իրենց իսկ բռնի ու ատելությամբ լցված գործունեության ողջ ներկապնակով (ատելության խոսքը, հարձակումները իրավապաշտպանների, ակտիվիստների և առաջադիմական ցանկացած գործունեությամբ զբաղվող հանրային–մշակութային, քաղաքական գործիչների վրա, նրանց միջոցառումների խափանումները) փաստացի դառնում են իրենց իսկ հերքված խնդիրների կենդանի վկայությունը: Հայաստանի ժողովրդավարական զարգացումները և ինքնիշխանության ամրապնդումը խափանելու իրենց նպատակադրումների համար կազմակերպվող հակագենդերային օրակարգով դրանք ինչ–որ առումով խոստովանում են գենդերային իրավահավասարության և ԼԳԲՏ մարդկանց իրավունքների ճանաչման ազատագրական ներուժը, ինչի դեմ էլ մարտնչում են:

Այսպիսով՝ հակագենդերային արշավները և՛ իրենց գաղափարաբանական շրջանակումներով, և՛ իրենց պրակտիկաներով շատ ավելի վառ կերպով ապացուցում են իրավապաշտպանական, գենդերային հավասարության և սեռականության հիմքով խտրականության հաղթահարման մասշտաբային իրավական, կրթական, մշակութային և քաղաքական բարեփոխումների հրատապ ան-

հրաժեշտությունը՝ որպես Հայաստանի ժողովրդավարացման ուղու պաշտպանություն: Հակագենդերային արշավների ագրեսիվ հակաժողովրդավարացման ընթացքը կարոտ է հստակ և վճռական կասեցման՝

1| ոչ սիմետրիկ, այլ միայն իրավական մեխանիզմների, համարժեք պատիժների գործադրմամբ,

2| դատական և իրավապահ համակարգի հիմնարար բարեփոխումներով, որոնք կներառեն գենդերային զգայունության բարձրացումը ոլորտի մասնագետների շրջանում,

3| իրավաօրենսդրական դաշտում գենդերային զգայունության բաղադրիչի ներդրման միջոցով,

4| խտրականությունը, ատելության խոսքն ու բռնությունը արմատախիլ անող օրենսդրական համալիր բարեփոխումներով:

Այս ամենը հնարավոր է կառավարող ուժի՝ հանրային կյանքում հեղափոխական բարեփոխումների գնալու դժվարին, բայց պատասխանատու և անհրաժեշտ քաղաքական կամքի առկայության դեպքում:

Գրականություն

1| Անդրեասյան, Ժ., Ժամակոչյան, Ա., Իշխանյան, Ա., Մանուսյան, Ա., Մանուսյան, Ս. (2018). Նեղացող տարածքից դեպի հետհեղափոխական տարածք. վերապատկերացնելով հայաստանյան քաղաքացիական հասարակության դերն ու հարաբերությունները. Երևան. «Սոցիոսկոպ» ՀԿ:

2| Անդրեասյան, Ժ., Ժամակոչյան, Ա., Մանուսյան, Ա. (2019). Ներածություն. Անդրեասյան և այլք (խմբ.). Սեռականությունը հայկական [համա]տեքստերում. Երևան. «Սոցիոսկոպ» ՀԿ:

3| Ժամակոչյան, Ա., Դանիելյան, է. (2019). Նույնասեռականությունը՝ իրավաքաղաքական ազատության չափանիշ խորհրդային շրջանում. Անդրեասյան և այլք (խմբ.). Սեռականությունը հայկական [համա]տեքստերում. Երևան. «Սոցիոսկոպ» ՀԿ:

4| Խալաթյան, Մ. (2019). Սեռականության կրոնաիրավական կարգավորումները միջնադարյան Հայաստանում. մինչև 13–րդ դար. Անդրեասյան և այլք (խմբ.). Սեռականությունը հայկական [համա]տեքստերում. Երևան. «Սոցիոսկոպ» ՀԿ:

5| Հարությունյան, Ա. (2016). Հայաստանում գենդերային խոսույթը բացահայտելիս. հիստերիայից դեպի կառուցողական երկխոսություն. Գ. Շահնազարյան (խմբ.). Գենդերային խտրականություն. մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն (26–48). Երևան. «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ:

6| Ջիլոզյան, Ա. (2017). Գենդերային քաղաքականությունը Հայաստանում. օրենսդրական, հակագենդերային քարոզչության և համայնք ձևավորելու ռազմավարությունների ուսումնասիրություն. Երևան. «Կանանց աջակցության կենտրոն» ՀԿ:

7| Kováts, E., Põim, M. (2015). Gender as symbolic glue: The position and role of conservative and far right parties in the anti–gender mobilizations in Europe. Foundation for European Progressive Studies.

8| Mouffe, Ch. (2018). For a left populism. Verso.